



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Բ

№ 12 1889

ԴԵԿԱՅԵՄԲԵՐ

1889 № 12

Ա Պ Ա Զ Ի Ե Տ Ա Ր Ի

Երես


1 ԱՐԱՄԱՆԵԱՆՑ ԱԼԵՏԻՔ	1879	«Մարձ»-ը 1889թ.:
2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ	1890	Թախիմ (բանաստեղծութիւն):
3 " " " " "	1892	Մանրուք (բանաստեղծութիւն):
4 ՄԱՆԱՑԱԿԱՆԵԱՆՑ ԳԱՅՐԻՖԻԼ	1893	Ոճիրները Երևան, Նահ. (վերջ):
5 ՀՈՅԵԼ-ԻՇ՝ ԱՐԺԻՒԵԱՆ	1919	Անկոմին (բանաստեղծութիւն):
6 Գ. Բ.	1920	Ահա ծագեց... (բանաստեղծութ.):
7 ՄԱՐԳԱՆԵԱՆՑ ԼԵՒՈՆ	1921	Ազց Թիւրբաց Հակասանին (շար.):
8 ԱԼԱԿԱՆՈՒՄՈՒՔ ԿՐԱՍՈՒՆԻՒԹԻ	1944	Արտորածի զաւոկր (բանաստ.):
9 ՓԱՌԵՆԵԱՆՑ ՊԵՐՃ	1944	Բզզէ (վեր):
10 ՀԱԽՈՒՄԵԱՆ ՈՒՄԻԾԻՆ	1976	Ուր եռ փալուչում (բանաստեղծ.):
11 " " " " "	1977	Երբ կուտակում են... (բանաստ.):
12 Ա. Ա. Պ. Պ. Պ., Լ. Ա.	1978	Դարսիուսութիւն—Ադամեանց «Տեղապահութիւն» Երևանի, Գալէմքեռիան՝ «Մամազութութիւն» Տէր-Աւալիքեանց՝ «Տեղապահիան նումականի», Վելիք-Շոհնազարեանց՝ «Փշընք»:
13 ԼՈՒՄԻՆԻ	1985	Անուադ Քրօնիկ:—Մի նոր կուսակցութիւն: Հրատարակչ. Ընկերութիւն: Արխուսուկիս եպիսկոպոս Անդրակիան:
14	1997	Թղթակցութիւն. Արտոսահմանից:
15 ԻՄԲ.	2003	Խմբագրութեան կողմից:
16	2005	«Մարձ»-ի 12 համարների բովանդակութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ա. Գ. ԱՅՏԵՐԵԱՅՅԻ ՏՊԱՐԱՆ

Տիոգրաֆիա Ա. Դ. Ռուբանց, և Գօլ. պրոց. սե. դ. № 41.



ՄՈՒՓՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 12 1889

ԴԵԿԱՄԵՐԵՐ

1889 № 12

ԱԼԱՐԻ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Ա. Դ. Ա-ՕՏԻՒԵԱՅԻ
1889

Дозволено цензурою Тифлисъ. 7-го Декабря, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

„ՄՈՒՐՃ“

ԳԱԴԱՔՍԻԱՆ—ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. ԲԱՑԻԱԾ է

«ՄՈՒՐՃ»-ի 1890 թւականին հրատարակվելու է նոյն ծրագրով,
որպէս 1889 թւին:

«ՄՈՒՐՃ»-ի ԵՊԱՅԻՆ ԲԱԺԻՆ ՆԵՐԻ ՎԻՐԱյ առելանալու են նորերը, որոնց
մասին բացարարութիւնն է արևած ներկայ համարի առաջնորդողութիւն:

«ՄՈՒՐՃ»-ի ԾԱՅԱԼԻ խմբագրութիւնն զիսաւ որութիւն ունի
մեծացնելու: Ներկայ 1889 թւի համար խոստացւած էր 8—10
թերթ ամիսը, իսկ դալ 1890 թւականին խոստացւած է 9—11
թերթ, եթէ բաժանորդագրութիւնը համապատասխան կիրառվ լն-
գարձակի:

«ՄՈՒՐՃ»-ի աղճ Նշում սկսում է Պիրճ Պոօշեանցի «ԲՊԴ»:
մեծ վէպը: 1890 թւականի նոր բաժանուրդները՝ ձրիարար
կը ստանան այդ վէպի ներկայ Նշում տպւած մասը՝ կից 1890
թւականի առաջին Նշի շետ:

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ է տարեկան 10 րուրի: Առա-
ցիները վճարում են 9 ր., իսկ ուսունակները՝ 8 րուրի: Ընդու-
ւում է բաժանորդագրութիւն նաև մասմաս, առաջին կիսամետ-
կում բոլորը վճարելու պայմանով:

Թիֆլիսին գրում են, բացի խմբագրատանից՝ Գանոխայա
փողոց, նախկին առն Ա. Յայշանիսկանի, նաև հետեւալ տեղերում:
1) Գրավառառանոցներում; 2) Խիզեկիլի պահիթօնում; Ալի քանդ-
րեան այգու անկիւնում; 3) պ. Տէր-Յայտիկեանցի ծխախոտի խա-
նութեամբ երեանեան հրատարակի վերայ, 4) պ. Դէրգիանե եզր.
գրասենեակում՝ պ. Խիրազեանի մօտ, Զորալալի քարանսարացում:

Ուրիշ տեղերից զիսաւ են՝ Տիֆլիս. Ռեդակցիա յշրանգական
«ՄՈՒՐՃ».

Արտասահմանից՝ Tiflis (Caucase). Rédition de la Revue
«MOURTCH».

સીરિયસ

અને પ્રાચીન માત્રાના વિશ્વાસી

એવી કાર્યક્રમ

એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

એ હોય કરું એ હોય કરું એ હોય કરું

„ՄՈՒՐՃ“-Ը 1889 թ.

Ներկայ համարով «Մուրճ» քաղաքական-հասարակական-գրական ամսագիրը բոլորում է իւր առաջին տարւայ գոյութեան շրջանը, առաջիկայ 1890 թւականին իւր երկրորդ տարւաց շրջանը մոնելու համար:

Տարին լրանալով, սպարոք ենք համարում հասարակութեան մի հային ներկայացնել, թէ ի՞նչ արաւ «Մուրճ»-ը իւր գոյութեան սկզբնական տարում, ի՞նչ սկզբունքներով նա զեկավարւեց, ի՞նչ տեղ նա կարողացաւ բոնել մեր պարբերական հրատարակութիւնների մէջ, և թէ ի՞նչպէս է մոտադիր նա գործելու գալ 1890 թւականին:

«Մուրճ»-ի հրատարակութիւնը սկսելուց առաջ, մենք զիմեցինք հայ լնթերցող հասարակութեան մի բաժանորդագրական հրաւերով, ամսագրի ծրագրի և աշխատակցելու խոստացած անձերի անունների հետ ծանօթացնելու համար:

Նրանց, որոնք չը զլացան իրանց աշխատակցութիւնը նոր լոյս տեսնող ամսագրին,—մենք յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը: Աւելի ևս շնորհակալ ենք այն անձերից, որոնք իրանց աշխատակցութիւնը թէ պահպանեցին մինչև վերջ և թէ այն փոխանցում են հետեւել 1890 թւականը:

Մեծամասնութիւնը, բարեբաղդաբար, վերջիններին է պատկանում: «Մուրճ»-ին աշխատակցելու խոստացած բազմաթիւ անձերից միմիայն մի քանիսը դրժեցին իրանց տւած խոսքը: Բայց այժմ, երբ տարին լրանում է, մենք գոհունակութեամբ հաստատում ենք, որ, որքան էլ բազմաթիւ էր խոստացած անձերի թիւը, խականութիւնը ացդ թւից էլ վերազանցեց: Եւ արդարեւ, «Մուրճ»-ի աշխատակցների թիւը ամսէ-ամիս աւելացաւ, ոչ թէ եղածների տես

բռնելու, այլ եղածների վերաց դրականապէս աւելանալու համար։ Չանցաւ մի ամիս, որ «Մուրճ»-ի բովանդակութիւնը ճոխացրած ք լինէր երկու-երեք նոր աշխատակիցների գրւածքներով, չընայած, որ ոչ ոք չի կարող մեզ յանդիմանել անխտութեան մէջ՝ աշխատակիցների և տպւած նիւթերի նկատմամբ։

Մենք չենք կարող այդ երեսովթը չը բացարբել նրանով, որ «Մուրճ»-ը քանի դնաց, աւելի ու աւելի արծարծեց հաւատ դէպի ինքը՝ մանաւանդ երիտասարդ ոյժերի մէջ, որոնք և զլսաւոր կոնտինգենտը կազմեցին «Մուրճ»-ի աշխատակիցների։

Մեր հրաւերին՝ «Մուրճ»-ը պահպանելու համար՝ սրատասխանեցին հարիւրաւոր անձեր։ Դոքա են «Մուրճ»-ի առաջին տարւայ բաժանորդները։ Դոցա թիւը աւելի նւազ էր, քան ինչ պէտք էր «Մուրճ»-ի համար։ այս՝ այդ թիւը շատ աւելի նւազ էր։ Բայց բաժանորդապրութեան գործում, որի մէջ հասարակութեան վերաբերմունքն ենք տեսնում դէպի մի հրատարակութիւն, կար այս միսիթարական կողմը, որ 1889 թւականի «Մուրճ»-ի բաժանորդների կիսից աւելի գրւեցին բաժանորդ ամսագիրը՝ լոյս տեսնելուց յետոց և ոչ թէ զրանից առաջ։ Դրա մէջ մէնք տեսնում ենք ապացոց, որ «Մուրճ»-ի բաժանորդները վերաբերել են դէպի այդ ամսագիրը կատարեալ գիտակցութեամբ, որ և միսիթարիչ է և ցանկալի։

Պարտք ենք համարում մեր շնորհակալութիւնը յայտնել այն հարիւրաւոր անձերին, որոնք արձագանք տւին մեր հրաւերին։ «Մուրճ»-ի այդ անդրանիկ բաժանորդները ուղեցին ոչ միայն «Մուրճ»-ը տուանալ, այլ և «Մուրճ»-ի երեան գալուն և պահպանելուն օդնել։ Մեր հրատարակութեան բաժանորդները մեծ մասամբ պատկանում են համեմատապէս ամենահինտելլիգենտ հայ դասսակարգին։ Նոցա անունները, որպէս և աշխատակիցներինը, կապւած են «Մուրճ»-ի սկզբնաւորութեան հետ։

Նիւթական միջոցների սղութիւնը մէնք լրացրինք մեր եռանդով։ Համարելով ամեն գործի սկիզբը դժւարին, զոհաբերութիւն պահանջող, մենք բիւջեատի հաւասարակշռութիւնը պահպանելու համար չ'աշխատեցինք։ Ըսդհակառակը, մենք չ'ընդդիմացանք միշտ աւելի ու աւելի աճող նիւթերի հոսանքին, չ'ուզելով ճնշել մեր սերնդի մտաւոր արտադրութիւնների արտայայտութիւնը և ճնշել

«Մուրճ»-ի այն ծառալլը, որին նա բնականապէս ձգտում է: Դրա հետևանքը այն էր, որ միանգամայն անհնարին եղաւ մեզ համար մեր բաժանորդներին ամեն ամիս տալ միմիայն մեր խոստացածի չափ: ոչ գրաւելու, այլ միմիայն ազնիւ զրդումներից ստիպւած, մենք հրատարակեցինք «Մուրճ»-ը աւելի մեծ ծառալլով, միանգամայն անցնելով սահմանւած չափով:

Այդքանիլ բաւական ենք համարում «Մուրճ»-ի, այսպէս ասած, արտաքին կողմերի մասին: Գոռոնանք այժմ դէպի մեր ամսագրի ներքինը, նորա բովանդակութիւնը և ուղղութիւնը:

«Մուրճ»-ի երեան դալլը ամենքի յիշողութեան մէջն է: Նա երեան եկաւ, երբ հայ հասարակութիւնը ուժ տարի շարունակ ամսագիր չէր ունեցել: Հրապարակի վերայ էին միմիայն օրաթերթեր, որոնք տարիներ շարունակ, գրեթէ անընդհատ կերպով, կերակրում էին հայ ընթերցողների ուղեղը բանակութիւնը մինչ վերջին ծայր ձանձրացրել էր հայ ընթերցողների ընտրելագոյն մասին և վէացրել գրական ձաշակը հազարաւոր այլ ընթերցողների:

Գրող զասակարգը բաժանւած էր որոշ խմբերի, որոնց առանձնութիւնը և անհամերաշխութիւնը դատապարտել էր նրանց մտաւոր ամուլութեան և նախանձով ու չարութիւնով լիքը բամբասանքների:

Բայց նոյն խակ գրողները շատ սակաւացել էին Հրապարակի վերայ էին մատով համբելու թւով գրողներ, որոնց մեծամասնութիւնը, կարելի է ասել, աւելի վարժուազ էին, քան անկախ մտածողներ: Խորշելով ասալարիզում եղած թերթերի բռնած ընթացքից, գրական գործիչ լինելու լնուունակ մարդիկանց մեծագոյն մասը ուղղակի հեռացել: էր ասպարիզից, խակ նորերի համար մամուլը բաւականաչափ զրաւչութիւն չուներ: Խակ նորերի համար մամուլը բաւականաչափ զրաւչութիւն չուներ:

Նրանց, որոնք մեր ասածները չափազանցութիւն կը համարեն, կարող ենք համոզել թւերով: Բայց յոյս ունինք, որ այդ խօսքերը թւերով ապացուցելու նեղութիւնը մեզ չի արւիլ, որովհետեւ մենք

խօսում ենք մի անցեալի մասին, որը չափեց զուրս մօտ է ամբողջ ընթերցող հասարակութեան յիշողութեան:

Հասարակութեան հետաքրքրութիւնը դէպի մամուլը, դէպի տպագրական խօսքը պահպանւում էր արհեստական կերպով՝ բանակուով, որի մէջ գաղափարը վերջին տեղն էր բւնում; իսկ հոգու գրական պատշաճաւորութեան համար՝ ամենավերջին տեղը:

Այդ հանգամանքների մէջ էր, որ լոյս տեսաւ «Մուրճ»-ը: Եւ, ի հարկէ, վերջինս բունեց բոլորովին այլ ընթացք, իւր համար հետաքրքրութիւնը նա քաղեց բոլորովին այլ աղբիւրներից. բայց որ նա, լուրջ լինելով հանդերձ, կարողացաւ հետաքրքրական լինել, —ոչ ոք կարող է «Մուրճ»-ի այդ յատկութիւնը հերքել և ուրանալ: Մեր աշխով տեսածը և մանաւանդ մասնաւոր տեղեկութիւնները գաւառներից՝ մեզ համոզել են, որ «Մուրճ» կարդացողները ոչ միայն բաժանորդներն են, այլ առհասարակ հայ ընթերցող զասը, և որ ամսագրի մի օրինակից օգտագործները երբեմն տասնեակներ են:

«Մուրճ»-ը կենդանի օրգան էր այն պատճառով, որ նա ամբողջապէս նւիրւած էր մեր կենսական խնդիրներին և ժամանակակից կեանքին: Իւր առաջնորդողներով, իւր վէպերով, իւր հատ-հատածներով, իւր ներքին Տեսութիւնով նա շօշափում էր, նկարագրում էր կամ քննադասում մեր ներքին կեանքի խնդիրները և կեանքի կազմն ու երեսովները: Ոչինչ չը տպւեց «Մուրճ»-ում, ինչ չեր կարող յարաբերութիւն ունենալ մեր ժամանակակից կեանքի որ և է կարեւոր խնդրի կամ կեանքի ու գրականութեան երեսովի և կամ հասարակութեան պահանջի հետ: Յօդւածներ, որոնք ինքն ըստ ինքեան կարող էին արժէք ունենալ, բայց որոնց երեալը չեր կարող արդարացնել հասարակութեան ներկայ պահանջով, բնունելութիւն չը գտան «Մուրճ»-ի մէջ: Կեզծ գիտնականները, թաքուն նոլառակների հետևող գրողները, թմրած ու փաած ոյժերը ոչ մի կերպ ընդունելութիւն չը գտան «Մուրճ»-ի մէջ:

Ըստունելաւթիւն չը գտան նաև մարդիկ, որոնք իրանց ահաս մոքերով չը զիտես թէ ի՞նչ նպատակի են հետեւում, թէ ի՞նչ է նոցա իսկական աշխարհահայեցողութիւնը: Մենք այդ կողմէց չը շացանք ոչ զիտնական տիտղոսներով և ոչ էլ ցոյց տւած աղատամառ-թիւնով, երբ երկու դէպէերումն էլ զիմակներ էինք տեսնում:

«Մուրճ»-ին պէտք էին յառաջդիմական դաղակիարով տողորւած, բայց և միանդամաջն ուղղամիտ, լոյս աշխարհում գործող աշխատակիցներ; Մենք խօսում ենք, ի հարկի, միայն մշտականների մասին:

Միւս կողմից «Մուրճ»-ը անքան անկախ էր, որ նրան աշխատակցելլ ոչ մի կերպ չէր կարող կախւած լինել «Մուրճ»-ից աւաշեղած խմբերից և առցա հետ ունեցած կապերից: Ինչ խմբերին էլ պատկանած լինեին «Մուրճ»-ի պատահական աշխատակիցները,—ոչ ոք չը պէտք է իւր առանձին քաղաքականութիւնը ներս մտցնէր «Մուրճ»-ի մէջ:

«Մուրճ»-ը ամեն բանի մէջ հետևեց քննադատական-հետազտական մեթօդին, ձգտելով այդ ուղղութիւնը հաստատել մեր գրականութեան մէջ՝ հասարակական խնդիրների նկատմամբ:

Այս առաջին տարում, երբ հարկաւոր էր զեռ շատ դժւարութիւնների գէմն առնել, երբ հարկաւոր էր զեռ ամսագրի բաժինները հաստատել և նրանց ուղղութիւն տալ, այս առաջին տարում, երբ կատարւում էր զրոյնների ծանօթութեան պրօցեսը «Մուրճ»-ի հետ, այս առաջին տարում, ասում ենք, մենք աշխատեցինք ոչ այնքան խնդիրներ լուծել, որքան խնդիրներ գնել, ցոյց տալու համար թէ ի՞նչ բնաւորութեան խնդիրներով և ի՞նչ ընդարձակութեամբ «Մուրճ»-ը նրանցով տիտոք է զրադւի: Այդ ձգտումի ծնունդներն են՝ «Հողացին խնդիրը Անդրկովկասում» և «Պանդիստութեան խնդիրը» յօդւածների ասաջին հատւածները, որոնք կրում են մեր ստորագրութիւնը, «Հողացին վարկը Անդրկովկասում» երկու այլ յօդւածները պ. Գրիգոր Վարդանեանցի և «Աճիրը Խրեանեան նահանգում»—պ. Գ. Մհացականնեանցի—երկու յօդւածք: Այդ յօդւածներով մենք կարծում ենք, թէ բաւականաշափ ցոյց տրւեց, որ «Մուրճ»-ը բոլորովին լրջօրէն ձեռք է մեկնում դէպի մեր ժողովրդական ամենածանր խնդիրները և որ նա ուղում է ընդարձակ ծաւալով այդ և դոցա նման խընդիրները ուսանել և լուծելուն նպաստել: Այդ կերպով նա մէկը միւսի յետելից պէտք է իւր ձեռքը առնէ ժողովրդական կարևորագոյն խնդիրները: Եւ մենք առանց օգնականների չենք մնալ անշուշտ: Կը գտնւին նաև ուրիշ աշխատակիցներ, որոնք, ընտելացած «Մուրճ»-ի աւելի մեծ պահանջներին, կ'աշխատեն իրանց յօդւածներով աջակցել մեղ այդ խնդիրների նկատմամբ: Այդ աջակցութեան վերայ մենք

այժմ շատ աւելի մեծ հիմք ունինք վստահ լինելու, քան տարւաց սկզբին, երբ դեռ ոչ ոքին յացնի չէր ապագայ «Մուրճ»-ի բռնելիք զիրքը դէպի այդ խնդիրները, երբ դեռ ևս որոշ չէին աշխատակիցների և «Մուրճ»-ի մէջ լինելիք ողեկան յարաբերութիւնները: Այժմ արդէն, մի տարի դործելուց յետոյ, այդ յարաբերութիւնները շատ աւելի որոշ են: «Մուրճ»-ը, դոհունակութեամբ կարող ենք ասել, այժմ ունի մի խումք համակրողներ, որոնք յարել են «Մուրճ»-ին զիտակիցաբար և մի տարի սպասողական զիրք բռնելուց յետոյ: Եթէ 1889 թւականին «Մուրճ»-ը ունէր բազմաթիւ ազատ, բայց միմիայն ազատ աշխատակիցներ, այժմ՝ տարւաց վերջին, նա ունի մշտական աշխատակիցներ, որոնք կը մասնակցեն արդէն ուղղութիւն կրող յօդւածներով և ոչ միայն ազատ ու սպասուհական գրւածքներով:

Խօսքը մեզ շատ հեռու կը տանէր, եթէ «Մուրճ»-ի ամեն մի բաժնի վերայ առանձին-առանձին կանգ առնեինք: Ներկայ 1889 թւականին «Մուրճ»-ի մշտական բաժիններն էին՝ Առաջնորդողներ հասարակական — ժողովրդական խոդիրների մասին, Բանաստեղծութիւններ, Վէպեր ու Պատկերներ, Քննադատութիւններ, Գրախօսութիւն, Ներքին Տեսութիւն, Թղթակցութիւններ Արտասահմանից և Քաղաքական Տեսութիւն:

Մեր այս տարւաց ամենաառաջին ջանքն էր՝ հաստակել «Մուրճ»-ի բաժինները և նրանց տալ որոշ կնիք: Եւ ահա՝ թէ դժւարութիւնը ինչի մէջն էր:

Նախկին ամսագիրները և այժմեան լրագրութիւնը գրողների սերունդ չէր ստեղծել մի ամսագրի համար, որ վերջինս ուղղակի կարողանար օգտւել այդ ոյժերից: Լոկ գրականութիւնով լրացւած մարդիկ չը կան մեզանում: «Մուրճ»-ի մէջ եղած բաժինների մեծ մասը, այնպէս, ինչպէս նոքա տանուում են, չը կային հայկական ամսագիրների մէջ և չը կան մեր արդի լրագրութեան մէջ. այդ իսկ պատճառով դեռ պէտք էր բաժինների տիպեր ստեղծել:

Այդ բաժինները արգէն հաստատւած են և մեզ կը մնայ, գալ 1890 թւականին նրանց շարունակել և, եթէ միայն հասարակու-

Թեան օգնութիւնը մեզ չը մերժւեց, նրանց ընդարձակել և նորերը բացել:

«Մուրճ»-ի այդ առանձին բաժինների արժանաւորութիւնների մասին ընդարձակ խօսելը աւելորդ ենք համարում: Գծագրենք սակայն նոցա առանձնադատկութիւնները ամփոփ կերպով:

Հասարակական, ժողովրդական խնդիրներից զատ, «Մուրճ»-ը աշխատեց մեր ընթացիկ կեանքի և զրականութեան պահանջներին բաւարարութիւն տալ: Խմբագրութեան մէջ սուացւած գրեթէ բոլոր գրքերի մասին «Մուրճ»-ը տւեց քննադատական նկատողութիւններ, բայց այն ձևով, որ թէ հասարակութիւնը և թէ հեղինակները կարող էին դոցանից շահւել: Առանց աշառութեան, բայց և առանց թշնամանքի, կարծ խօսքերով շատ ասել — ահա՝ «Մուրճ»-ի այդ բաժնի յատկութիւնը, բաժնի, որը արհամարհւած էր հացկական մամուլի մէջ մինչև «Մուրճ»-ի լոյս տեսնելը:

Ներքին Տեսութեան մէջ «Մուրճ»-ը աշխատեց հաշիւ տալ այն բոլոր երեսցներից, ինչ մեր աղքատիկ ներքին կեանքը կարող էր ներկայացնել: Այդ բաժնում մենք ուղեցինք խստօրէն մնալ եղելութիւնների շրջանում, խօսել միայն եղած բաներից, բայց կցելով մեր խորհրդագութիւնները նոցա մասին և նոցա ասիթով: Տարւայ ընթացքում մեզ պատահեց լսել նկատողութիւններ այդ բաժնի մասին: Խոստովանում ենք, որ այդ բաժնը համեմատավիչ հարուստ չէր: Այդ նկատողութիւնները, սակայն, մենք միայն մասամբ արդարացի գտանք, որովհետեւ մեր ներքին կեանքի կարեոր և բնաորոշ եղելութիւններից չի կարելի ցոյց տալ և ոչ մէկը, որի մասին մի գնահատութիւն եղած չը լինէր այդ բաժնում:

Քաղաքական Տեսութիւնը «Մուրճ»-ի մէջ, որպէս այդ նկատած է, արդէն հասարակութեան մէջ, բոլորովին այլ տեսակ է խըմբագրւում, քանի ինչին սովոր էին ցայծմ հայ ընթերցողները: Միութեան վերածել քաղաքական մասնաւոր գէպքերը՝ մտցնելով նրանց ընդհանուր քաղաքական տեսակէտների տակ — ահա՝ «Մուրճ»-ի Քաղաքական Տեսութեան բնաւորութիւնը: Իբրև այդպիսին, այդ բաժնը նորութիւն է մեր զրականութեան մէջ:

Ընդարձակ քննադատութիւններ այս տարի «Մուրճ»-ը ունեցաւ երեք հատ — պլ. Քարամեանի՝ Պոօշեանցի երկերի մասին, պլ. Քալան-

թարի՝ պ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մասին և վերջապէս պ. Աբեղեանի՝ Ազգային Վ. Էսլի մասին, որի շարունակութիւնը վերասկահւած է գալ 1890 թւականի համար։ Մանաւանդ ուշադրութեան արժանի է վերջինս, որը քննադատութեան ուժով ուզում է վերակենդանացնել մեր հին բանաստեղծական աշխարհը, — մի գործ, որը անշուշտ զրաւելու է ընդհանուրի ուշադրութիւնը և մնալու է ներկայ թւականի հայոց քննադատական գրականութեան կարևորագոյն վաստակներից մէկը։

Մենք ծառացեցնում ենք այդ օրինակը ապացոյց տալու համար, թէ ո՞րքան անհիմն է յայտնի շրջաններում բաւականին տարածւած այս կարծիքը, իբր թէ «Մուրճ»-ը չէ գնահատում պատմական երկերը։ Ոչ, «Մուրճ»-ը գնահատում է այդ, բայց ի սէր հնութեան նա չէ ուզում ասպարէզ լինել անսաղանդ գրւածքների, որոնք ոչ մի նորութիւն և ինքնուրոցնութիւն չեն ներկայացնում։ Եւր ընդդիմադրութիւնով իսկ այդ հին կեղծ-կլասիկական ուղղութեան, — «Մուրճ»-ը ասպարէզ է բացում նորագոյն մաքով զրական քննադատութեան համար, որի հետևանքները ժամանակը ինքը զդալ կը տայ անշուշտ։

«Մուրճ» որպէս հասարակական օրգան» ընդհանուր վերնագրով մենք հրատարակեցինք երկու յօդւածներ, որոնցով առաջին անգամ քննադատական գնահատութիւն էր արւում հայ պարբերական հրատարակութիւնների, սկսած 50-ական թւականներից և որոշում նոցանից յառաջացած խմբերի և կուսակցութիւնների կազմը, ուղղութիւնը և կատարած դերը։ Այդ ուսումնասիրութիւնը կունենաց իւր լրացուցիչ մասը և կը կազմի մի կտոր հայոց նորագոյն մատար շարժման պատմութեան։

Վաղուց է, շատ վաղուց, որ հայկական բանաստեղծութիւնը չէ շարժել հայի հոգութելերը բանաստեղծութեան յատուկ գիւթականութիւնով։ Որպէս զի միմիայն պարբերական հրատարակութիւններից խօսենք, «Հիւսիսափայլ»-ից դէսը ոչ մի հայկական ամսագիր չէր բերել իւր հետ մի բանաստեղծական ուղղութիւն։ «Հիւսիսափայլ»-ի օրերից սկսած, երբ նահազիզը սկսեց պատրաստել դրելու իւր ձեռնի Վիշտը, հայ բանաստեղծութեան երկնակամարում առհասարակ չերեաց մի աստղ։ Զուտ բանաստեղծութիւնը եօթը կնիքով փակած գիրք մնաց

հայութեան համար։ «Կոռոնկո-ը բանաստեղծութիւն չը բերեց իւր հեա, թէե տպեց ոտանաւորներ։ «Փորձ-ի մէջ ոտանաւորը մէծ տեղ բռնեց, բայց հայկական բանաստեղծութեան համար մի նոր լուսամուտ չը բացեց։ Խափ։ Պատկանեանը նոր չեր ստեղծւում, այլ նորա բարձր տաղանդը գտաւ միայն մի նոր գործադրութիւն։ «Աղբիւր-ը, ահա քանի տարի է, շարունակ տպում է ոտանաւորներ ոտանաւորների վերաց և ոչ միայն մանկականներ, այլ և ոչ-մանկականներ, — և այդքան տարւայ ընթացքում մի հատիկ նոր անուն չը ստարգեց հայ լիրիկացին, չը զրդեց ընթերցողների մէջ հետաքրքրութիւն դէպի բանաստեղծութիւնը։ Յ. Յովհաննիսեանը կապ չ'ունեցաւ ոչ մէկի հեա և զեռ նա շատ նոր է։

Հեռու մեզնից՝ մի հաշւեաւութեան ժամանակ քննադատութեան մէջ մտնել «Մուրճ»-ում գրող բանաստեղծների տաղանդների մասին։ Եթէ «Մուրճ»-ը խօսէ իւր աշխատակից բանաստեղծների մասին, — նա այդ կ'անէ քննադատութեան բամենում։ Խայց այսուեղ է տեղը, ուր մէնք կարող ենք որոշել մեր բունած զիրքը դէպի ոտանաւոր բանաստեղծութիւնները, որոնք հարիւրներով և հազարներով տեղացել են «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ։

Որպէս առհասարակ, նաև բանաստեղծութեան բաժնի համար մէնք չենք ընկել անունների յետելից։ Բանաստեղծութեան բաժնում «Մուրճ»-ի մէջ երեւացել են բոլորովին նոր գրողներ, գրողներ, որոնց անունները հասարակութեան ացժմ յացանի են իրանց աշխատակցութիւնով «Մուրճ»-ին։

«Հիւսիսափակլ-ից դէս՝ «Մուրճ»-ը առաջին ամսադիրն է, որ գարկ է տալիս հայկական բանաստեղծութեան, ոչ սրովհետեւ բոլորը, ինչ տպում է «Մուրճ»-ը, հաւասարապէս բարձր արժէք ունին, այլ որովհետեւ նա ունեցաւ ուղղութիւն և, կեղծ-կլասիկականը զուրս վանելով, նա ջանք գրեց նորերի մէջ գնահատել նոցա, որոնք տպագաց են խոստանում։ Առ այժմ մեծապէս դեսհաստամէ «Մուրճ»-ը իւր այս տարւայ բանաստեղծ աշխատակիցներից՝ Աւոն Մանուկյանցին, Արծիւեանին, Զաւարդ Բալողեանին, Արշալոյս Միսիթարեանին։

Վիպական բաժինը «Մուրճ»-ի մէջ այս առաջին տարին, անկասկած, աչքի ընկնող էր։ այս մի տարւայ ընթացքում «Մուրճ»-ը հրա-

տարակեց երկու մանրավէսպ Փիրումեանցի և Գառնեցու, մի շարք պատկերներ գործիչների կեանքից Ալէքսանդր Նամալեանցի, և երեք բոմաններ՝ «Յեցեր», «Խեմապետ» և «Կորածներ», — բոլորը հայկական կեանքից. մէկը՝ Պ. Պոօշեանցի, միւսը՝ նոր ասպարէզ եկող Սարգիս Առաքեանի և երրորդը՝ պ. Էջո՞ի: Մէկի բարձր հասարակական նշանակութիւնը, միւսի նորութիւնը, երրորդի ուղղութիւնը մի-մի թարմացուցիչ երևոյթներ էին: Նոքա դրզեցին հասարակաց կարծիքը, աննկատ չ'անցան: Եւ այժմ արդէն ակաւում է չորրորդ վեպը, որի շարունակութիւնը վերապահւած է գալ 1890 թւականին, որպէս նաև նորա քննադատութիւնը: Դա է «Քղզէ» — Պ. Պոօշեանցի:

Մանկավարժական բաժինը բաւականի տեղ բունեց. «Հոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ» և «Աւտոմանարանական գիտելիքներ» պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանցի, «Տեմպերամենո» և «Դպրոցական Զբոսանք» պ. Յովհ. Տարխուլարեանցի — ոչ միայն «Մուրճ»-ի այդ բաժինը հարատացրին, այլ և հայ գրականութեան այդ ճիւղի զլիսաւոր գրւածներիցն էին ներկայ թւականում:

Ժողովրդական անմիջական կարիքներին օգնութեան հասնելու նախառակով տպւեցին ող. բժշկակետ Տէր-Գրիգորեանցի (Վղլարեցու) բժշկական յօդւածները, որոնք լոյս տեսաննաւ առանձին բրոշիւրով: Նոյնը կը մնայ աշխատակից նաև գալ 1890 թւականին:

Մէր ներքին կեանքի ուսումնասիրութեան ծրագրի մէջ մեծ պակասորդ կը լինէր, եթէ Տաճկա-Նայստանի կեանքը իւր բաժինը չ'ունենար «Մուրճ»-ում: Արդ, մենք սկզբից խակ մտածել ենք, որ այդ խնդրի մէջ մէր առարկան ոկտաք է լինի բուն երկիրը իւր ժողովրդով և ոչ պօլատական անշեթեթեթիւնների լիակատար արձանակրութիւնները, որոնցով տասնեւակ տարիներով կերպարում են հայ ընթերցողներին: Այս դէպքում ես «Մուրճ»-ը ուղղակի դիմեց դէպի խնդիրը ինքը, ուզելով բունել արմասից և ոչ ծայրերից: Ո՞վ կարող է հերքել, թէ տասնեւակ տարիներով Տաճկա-Նայստանի հետ զբաղւելով հանգերձ, այդ խեղճ երկիրը մնացել էր մեզ համար մի տերա ուսուցուածութեան համար: Պարոն Լեռն Սարգսեանցի դրւածքները «Մուրճ»-ում մի-մի յայտնութիւններ էին այդ խաւարով պատաժ, բայց մեզ ամենքին այնքան սրտի մօտ, հայերի երկրի մասին:

Այժմ, երբ ացդ ուսումնասիրութիւնը շուտով յանգելու է իւր վախ-
ճանին, «Մուրճ»-ը կ'աշխատի, հնարաւոր եղածին չափ, ամեն ամիս հա-
շիւ տալ Տաճկա-Հաջատառնի ընթացիկ կեանքի դէպքերից: Եւ որ նոյն
մեր աշխատակիցը կը մնայ մերձաւորագոյն անձը ացդ բաժնի հա-
մար,—կարօտ չէ յախարարութեան:

Այն, ինչ նոյնքան հարկաւոր մի մասն է, «Մուրճ»-ի ծրագրի,
մեր ոգեկան և կրթական շարժումներն են: Կան բազմաթիւ երեսյթ-
ներ, որոնք չեն հասունացել մինչ այն աստիճան, որ նոքա կազմեն
մի-մի ացրւող խնդիրներ, որոնք ապասում լինէին մի շուտափոյթ-
պատասխանի, բայց երեսյթներ են, որոնք այսհանջումնեն քննութիւն-
ներ, և պահանջումնեն զիտողներ: Ի՞նչ է մեր ինտելիգենցիան, ի՞նչ
պէտք է լինի զործիչների բռնելիք ուղին, որոնք են մեր կեանքի կրթա-
կան ֆակտօրները, ի՞նչ զանազանութիւն կայ զիւղի և քաղաքի մէջ և
այլ զոցա նման խնդիրներ, որոնք թոյլ են տալիս շատ թէ քիչ ա-
զատ մասձողութիւններ,—ահա խնդիրների մի լայն շրջան, որը սոյն
1889 թւականին տեղչունեցաւ «Մուրճ»-ում և որը գալ 1890 թւա-
կանից կը լինի մշտական բաժիններից մէկը: Այդ կարգի յօդւածներ
խոսանում է տալ պ. Ալեքսանդր Քալանթար, մինչդեռ գաւառա-
կան կեանքի քննական վերլուծութիւնը կը տայ պ. Ի. Էօն, «Կորած»-ների
հեղինակը:

Սրանով մենք վերջ ենք տալիս «Մուրճ»-ի սոյն տարւայ հաշւետուու-
թեան: Այժմ մենք զիմում ենք հասարակութեան և ասում ենք նրան:

Մենք կազմել ենք գալ 1890 թւականի համար զործունեու-
թեան մի ամփոփ ծրագիր, որի ուրագիծը կազմում է 1889 թւա-
կանի «Մուրճ»-ը: Սոյն 1889 թւականին «Մուրճ»-ը սկսեց կազմակերպ-
ւել, հաստատել. նա սկսեց, երբ ոչ մի նախապատրաստութիւն
չէր տեսնւած, և, չը նայած դորան, նա զուրկ չ'եղաւ հարուստ բո-
չանդակութիւնից: Գալ 1890 թւականին «Մուրճ»-ը կը լինի, ինչ
էր սոյն 1889 թւականին, զորա վերայ աւելցրած այն, ինչ կարող
է իւր հետ բերել փորձը, աշխատակիցների մի աւելի համերաշխ
իումը և նիւթերի նախապատրաստութիւնը:

ԹԱԽԻԾ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Սիրտ չը կայ վերաս, թանկագի՞ն ընկեր,
Մասնակից լինեմ քո ուրախութեան.
Հոգիս տխուր է. մըռայլ խորհուրդներ
Պաշարել են ինձ, և իմ պիշտ, ցաւեր
Հեչ չ'ունին դարման:

Մի նալիւ, հոգեակ, ծիծաղիս վերան.
Ժըպիտ է դէմքիս, բայց այս կըրծքի տակ
Եթէ նայէիր... այնտեղ անսահման
Խորին տառտպանք, այնտեղ բարկութեան
Բորբոքւող կըրակ:

Կ'ուզես իմանալ թէ ինչ է պատճառ
Իմ լուռ թախծութեան, իմ դառն ցաւերի.
Նոքա անթիւ են, ընկեր, անհոմար.
Նոցտ պատժելսւ չը կայ մի հընար,
Ընկեր սիրելի:

Ինչպէս չը ցաւես, երբ ցեխ է ձըգւած
Անվեհեր հոգու առաքինութիւն,
Եւ իգեալներն քո շուրջ խորտակւած
Եւ ողորմելի բեկորներ դարձած,
Ինչպէս հընութիւն:

Ինչպէս չը ցաւես, երբ ազնիւ սըրտերն
Ալստեղ լուսաբեկ ախ վախ են քաշում,
Մինչ այնտեղ անսիրտ խեղկատակներն,
Պարծենկոտ, յանդուգն մեծամիտներն
Ցընծում են, հըրճում:

Ինչպէս չը պայթես, երբ խօսքը սիրոյ
Եւ եղբայրական անկեղծ լորդորանք,
Առաքելական քարոզը լուսոյ
Մընում են միայն լոկ «Ճայն բարբառոյ»
Սնապատումն ամայի, անկեանք:

Համեստ աշխատանք—ծաղըանքի մատնւած.
Յարգանք, պատկառանք—տըրւած մոռացման.
Լըքտի կըրքերն ասպարէզ ելած,
Առողջ մարմինը նեխւած, քայքալւած
Եւ հասած անկման...

Ո՞ւր է անխարդախ, անկաշառ այն սէրն,
Որով տոգորւած՝ նա խաչ բարձրացաւ.
Ո՞ւր անհետացան նորա քարոզներն,
Ինչո՞ւ լուսաւոր նորա պատկերն
Հանգաւ, մարեցաւ:

Օ՛հ, բաւ է, ընկեր, ինձ մի՛ չարչարիւ.
Իմ գառն ցաւերին էլ չը կայ վոխճան.
Ինչպէս Մեծն Ովկեան, նոքա չեն քամւիւ,
Մինչև գերեզման նոքա չեն հատնիւ,
Ազնի՛ւ բարեկամ:

ՄԱՆՐՈՒՔ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

I

Դարձեալ իմ մուսան եկաւ այցելեց
Նախկին սիրեցեալ իւր քարեկամին.
Եւ սիրտըս նորից նորից տըրոփեց,
Աչքերըս նորից փալատակեցին:

Օ՛, անգի՞ն մուսա, քեզ հազա՞ր ողջոյն,
Զեզ հազա՞ր ողջոյն, ոսկի' երազներ.
Իսկ գու, աշխատա՞նք, և գուք, իմ հոգսե՞ր,
Կը խընդընմ ինձնից հեռանաք իսկոյն:

II

Չափազանց շատ իղձ ու յոյսեր
Կուտակւած են իմ սըրտում.
Նոցա ես միշտ օր ու գիշեր
Քաղցրիկ օրօր եմ ասում:

Բայց կարծես բանտ նոքա ընկած՝
Աղաչում են—ազատեմ.
Եւ ես անզօր, տարակուսւած՝
Չը գիտեմ թէ ի՞նչ անեմ:

Ահա տեսէ՞ք — իմ աչքերից
Արցունքներ են կաթկաթում —
Այն իմ սըրտից, իմ ինդճ սըրտից,
Իղձ — յոյսերս են բաժանւում:

Մօսկով. 1889 թ.

ՈՉԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌՅԱՍԱՐԱԿ

Ե

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՄԱՍՆԱՌՈՐԱՊԵՍ

Հրապարակական Դասախոսութիւն

ԳԱՅԻԻԵԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ

Այսրդացւած Երեւանի Քաղաքային Ակումբի դահլիճում, 1889 թ. ապրիլ ամսում։

(Ծարունակութիւն և վերջ¹⁾)

II.

Ոճրազործութիւնը Երևանեան նահանգում մինչև անգամ զրականութեան մէջ ձեռք չ'առնւած մի խնդիր է։ Զը խօսելով մասնագիտորէն այս խնդրին վերաբերելի վաստակների մասին, չը կայ մինչև անգամ կողմնակի կերպով ել սրան վերաբերող գրւածքներ։

Բայտ այսմ ինքս էի սովորած հում նիւթ որոնելու։ Տարաբաղդաքար այս նիւթը՝ վերջին 10 տարւաց ոճիրների թւի ու տեսակների մասին՝ այնքան անբաւարար յացանւեց, որ նրանց հիման վերաց եղափակումներ անել—կը նշանակեր դիտակցաբար մոլորութեան մէջ ընկնել։ Այժմ ես բաւականանում եմ միայն ցոյց տալով ոճիրների քանի մի նիւթիւ—գործիչները (Փակորները), իսկ ապադայում կ'աշխատեմ տալ հասարակութեանդ Երևանեան նա-

¹⁾ Տե՛ս «Մուլճ»-ի 11-րդ համարը։

հանգի ոճիրների առաւել մանրապատում պատկերը։ Իսկ եթէ այսօրւան այս համառօտ նկարագրութեան մէջ մէկն ու մէկը ձեղանից նեղանայ իմ խօսքերից, յոյս ունիմ որ կը ներէ ինձ. որովհետև այս ամենը բղխում են հասարակութեանը և պետութեանը օգտաւէտօրէն ծառաշերտ ցանկութիւնից, որ և ես պարտաւորութիւն եմ համարում մեղանից ամենքի համար. միւնոյն ժամանակ

errare humanum est—մարդս սխալական է։

Դասախոսութեանս առաջին մասում ասացինք, որ իբրև հիմունք ճանաչելու թէ մի երեսյթ ոճի՞ր է թէ ոչ, համարւում է մի ազգի հիմնական աշխարհահայեցողութիւնը։ Տեսնենք թէ ո՞րպիսի աշխարհահայեցողութիւն ունեցել են Երեանեան նահանգի բնակիչները։

Ներկայումս գործածող Սլոյենի օ Հակազանիք, ինչպէս արդիւնք եւրոպական կեանքի և դիտութեան, հասկանալի է, որ շատ անգամ չէ համապատասխանում նրանց հասկացողութեանը։ Մերկարան չը լինելու համար առաջ բերենք օրինակներ։

Սլոյենի օ Հակազանիք 1637 յօդւածն այսպէս է որոշում կողոպտումը։ Կողոպտում համարում են նախ՝ որ և իցէ մէկին պատկանած կամ նրա մօտ գտնւած տուացւածքի խլելը բանութեամբ կամ մինչև իսկ սպառնալիքներով, բայց այն տեսակ, որ այդ սպառնալիքներից կամ բռնութիւնից վտանգաւորութիւն չէ առաջցել ոչ նրա կեանքի, ոչ նրա առողջութեան կամ ազատութեան համար. երկրորդ՝ ամեն բացարձակ յափշտակութիւն ինչ և իցէ սուացւածքի նոյն իսկ սուացւածքի տիրոջ կամ ուրիշ մարդկանց ներկայութեամբ, թէկուզ առանց սպառնալիքների ու բռնութիւնների։

Պատժական կանոնագրութեան 1641 յօդւածն ասում է. — եթէ կողոպտողը սպառազինած է եղել, թէկուզ և չէ գործադրել իւր զէնքերը՝ կողոպտողին նոյն իսկ սպառնալիք տալու համար, նրա արարմունքը համարւում է աւազակութեան տեսակներից և նա դատավարութում է ամեն իրաւոնքներից զրկելու և տաժանակիր աշխատանքների աքսորւելու 4-ից մինչև 6 տարի ժամանակով։

Ազդ ոճիրի համար այսպիսի ծանր պատիժ նշանակելով՝ օրէնսդիրը աչքի առաջ է ունեցել այն ցանդանութիւնը, որով լանցաւորը գործում է այս չարագործութիւնը և որը ցոյց է տալիս ոճրագործի

լիովին փչացած լինելը և այն բռնութիւնը՝ որը նա գործում է անձնաւորութեան վերաց հացի զրանից և այն հանդամանքը, որ նուսասանում զէնք կրելը տովորական երեղիթ չէ և զէնքը ձեռքին աշդպիսի մի գործ կատարելը արդէն լիովին բացայացում է նրա յանցաւոր դիտաւորութիւնը և այս դիտաւորութեան ուժգութիւնը այս դէպքում:

Երեանեան նահանգում պատահում են երեղիթներ, որոնք լիովին այս յօդւածի տակն են ընկնում, բայց տեղական ազգաբնակութեան աչքում աշդպիսի ոճրացին բնաւորութիւն չեն կրում:

Այսպէս, տեղական բնակիչների սովորութեան մէջ կայ, որ երիտասարդ մարդիկ, իրանց կարիճութիւնը ցոյց տալու համար, դիւզի ծացըն են զուրս գալիս և խլում են մէկից գառ, միւսից մի քանիշացի և այն. հասկանալի է, որ այս ամենը կատարում է բառական սպառնալիքներով և մինչև անգամ զէնքով, և այս ոճիր չէ համարւում: Սա ընդհանուր անունով առառում է՝ շուլուխութիւն, լոթութիւն, թալաքաց: Որ Երեանեան նահանգի բնիկները այսպիսի փաստերին յանցաւորութեան նշանակութիւն չեն տալիս հիմնունք ունի, և այնու, որ մենք տակաւին քաղաքակրթութեան այն աստիճանի վերաց կանգնած ազգութիւններ ենք, երբ ոճիրները զրամական, նիւթական և ուժէ դիտաւորութեան կողմից են զնահատւում: Մեր տեսակէտից՝ կողոպտումը համարւում է նշանաւոր ոճիր, եթէ կողոպտուծ սուայտածքը մեծ գին, արժէք ունի, իսկ եթէ մի գառ կամ մի այծ է, այդ յանցանք չէ, այլ՝ ինչպէս ասացինք՝ շուլուխութիւն, թալաքաց և այն: Այս պատճառով այնպիսի փաստերն՝ ինչպէս օրինակ յայտնի պարագաներում մի քանի գրւանքաց բամբակ կամ մի քանի մանկթ թոցնելը, որոնց մեր դատարանը, վերոյիշեալ յօդւածի տակ ձգելով, ոճրագործներին դատապարտում է 4—6 տարւաց տաժանակրութեան — ասում ենք, այսպիսի փաստերը միայն շուլուխութիւն են համարւում:

Այսպէս և ցեղացին հակումները չեն կարող նմանապէս լինել իբրև որոշողութիւն երեղիթների ոճրայնութեան. որովհետեւ մեր նահանգը չէ ներկայացնում համացեղութեան միասպաղաղ մի զանգւած: Սլոյենի օ Հակազանիք այն լաւ կողմն ունի, որ մենք, զրանով վայելում ենք եւրոպական քաղաքակրթութեան պատշ-

ները. իսկ Սլոյշենի ինքն լսատ ինքեան ներկայացնում է մի բաւականին գեղեցիկ կերպով մշակւած օրինագիրք:

Անկերական երևոյթները իւրաքանչիւր տեղի ուսումնասիրելու համար, պէտք է զիմել այն տեղի պատմութիւննը. պատմութիւնն է այն արմատը, որի վերայ քննում աճում է յայտնի երևոյթը. ուստի մեր նահանգի ոմիրներն ուսումնասիրելու համար, կարեւոր է գէթ հարեւանցի նկարագրել մեր նահանգի պատմութիւննը:

Երևանի նահանգը 428 թ. մինչեւ 1827 թ.-1400-ից աւելի տարի—չէ ունեցել կառավարութիւն ա'յն մաքով, ինչպէս որ մենք ենք հասկանում: Պարսիկ մարզպանները, յոյն կիւրապաղատները, սելուկները, վրացիք, մոնղոլները, թիւրքերը, պարսիկները փոխ առ փոխ տիրել են այս երկրին և աւերել են նըրան. նաև եղել է կրկէս անվերջ պատերազմների, արիւնհեղութեան և ամեն տեսակ անօրինութիւնների: Երբէք այստեղ ոչ մարդը և ոչ ստացւածքն ապահովութիւն չեն տեսել: Աւստի և հասկանալի է, որ այս երկրի բնիկների մէջ չէր կարող զարգանալ խղճմտանքը, ուրիշին գթալլ, մարդասիրութիւննը, որոնք պահում են մարդու յանցանքներ գործելուց: Ընդհակառակը՝ աճել հասունացել են զգացմունքները չարութեան, նախանձի, յանդքնութեան ու երկչութեան, ստորութեան ու սանձարձակութեան, որոնք մարդուն հրում, տանում են դէպի յանցանքներ գործելը:

Բայց Երևանի նահանգն եկող զանազան ազգութիւնները պատմութեան ընթացքում խառնւել են և այժմ ներկայացնում են երեք գլխաւոր խումբ, որոնց իւրաքանչիւրի յատկորոշ բնաւորութեանը դառնանք մենք:

Երկրին նախաբնակները հայերն են համարւում: Երկար ժամանակ սրանք պատերազմներ են մղել մոնղոլական վացրենի հրոսակների դէմ, մինչեւ որ վերջապէս բոլորովին ընկճւել են: Կորցնելով իրանց առևտուրը, արդիւնահամութիւնը ու հողերը՝ գարձել էին նւաճողների ֆահլաները՝ մշակները: Եթէ աչքի առաջ ունենանք անցեալ ժամանակների օրէնքները, չէ կարելի զարմանալ, որ հայերի քրանաթոր վաստակներով օգտուել են ուրիշները, ընդ նմին և սառացրել, անարգել, նրանց կինն ու որդիքը խլել յափշշտակել են: Նրանք զրկւուծ են եղել զրեթէ բոլոր իրաւունքներից,

բացի սերելու իրաւունքից։ Այսպիսի հանդամանքներն անհրաժեշտ-օրէն ողէտք է արմատառորէին նրանց մէջ չարութեան ու նախանձի զգացմունք։ Քաղաքականապէս ստորադրւած իրանց նւաճողներին, բնականաբար պէտք է աշխատէին ձեռք բերել, որքան կարելի է, շատ նիւթական հարսութիւն, իսկ այսօրինակ գործունէութիւնը զարգայնում է մարդու մէջ հակումն ոճիրներ զործելու ստացւածքի-ունեցածի զէմ և նւազայնում է անհատի մէջ ոճրագործա-կան զգացումներին ընդդիմադրող զգացումները։ «Զիմմաներին (Քրիստոնեաներին) այսպիսի համակարգորէն ստորացնելլ, ատում է պրօֆէսօր Գիրդաս քրիստոնեաների գրութիւնը արեւելքում նկարա-գրելուս, վերին աստիճանի կորսորաբեր եր բարոցականի վերաբեր-մամբ, ըստ որում զրա հետեւանքն եղաւ ոչ միացն նւաճողներին և նւաճողներին միմեանցից զատող ատելութեան զօրանալլ, և հետեւապէս արգելք եղաւ. նրանց միանալուն՝ ձուլելուն, այլ, բացի զրանից, և խեզգեց բոլոր ազնիւ կողմէրը զիմմաների, որոնք հարկասդր-ւած էին իրանց ապահովութեան համար զիմմելու և՝ ստախօսութեան և՝ խաբերացութեան իրանց տիրապետողների վերաբերմամբ։ Այսպիսով նրանց ընդհանուր ոգին ու մտածողութեան կերպը ենթարկեցին ապականութեան։ ուստի և զարմանալի չէ, որ մենք չենք գտնում նրանց մէջ ոչ հայրենասիրութիւն, ոչ ձգտում դէսի հանրական բարիքը — այլ իւրաքանչիւր ոք մոտածում է իւր սեպհական շահերի համար։

Երեանի նահանգի մէջ սումների երեան դալով, պատմական-օրէն հայազգի մէջ այնպիսով առաջացած, հասունացած ոճրագոր-ծական գծերը, երբ մի փոքր ազատութիւն ստացան, չը խուսափե-ցին լոյս տեսնելու։ Յայտնուեցին մի քանի գիւղերում խաչազողներ, որոնք գնալով Խուսաստան՝ ձեւացնում էին իրանց յոյն քահանաներ և փողեր էին ժողովում իբր թէ յօդուո Փրկչի գիւղերմանի, կամ իբր թէ կամուրջների, եկեղեցիների, վանքերի շինութեան համար։ Նրանցից յետոց յատնուեցին կեղծ թղթադրամներ շինողներ, և Երե-ւանի նահանգական դատարանը ունեցած է արդէն մի քանի խոշոր դատեր այս մասին։

Ասում են, քսան տարի սրանից առաջ նրեւանում եղել է բաւական յայտնի հայերի մի ընկերութիւն, որոնք դատեր են յա-

ըուցել և իրանք վկայութիւններ տալով, սուացել են մասը շահած գործից: Այժմ, որքան ես նկատել եմ, հայերի մէջ տարածւած են ոճիրներ տուացւածքի դէմ, այն է խնամակալական, հոգաբարձական գործերում ժառանգութիւններ տուանալու, իրանց մնանկ հրատարակելու, խարդախութիւններ, կեղծիքներ՝ գործելու վերաբերութեամբ և այլն:

Դասնանք թուրքերին: Ո՞ր ճանապարհով են նրանք եկել Երեւանի նահանգը, ես ձշութեամբ որոշել չեմ կարող. բայց նրանց մեծամասնութիւնն ասում է, որ նրանք Ղարաբաղից եկածներ են: Առհասարակ շատ հիմնւնքներ կան ենթադրելու, որ նրանք Թաթարստանից եւ Թուրքմենստանից եկել են այսուեղ Կասպեան ծովի ափերով: Այս խնդիրը կարեւոր է մասամբ նրա համար, որ հաստատում է նրանց մոնղոլական ցեղից ծագիլը: Նրանք եկել են մեր երկիրը իր աշխարհականեր կիսավայրենի հրոսակներով—չ'իմանալով ոչ երկրագործութիւն և ոչ ազգեգործութիւն: Նրանք իրանց համար կերակուր էին հայթհայթում անասնապահութեամբ, աւարառութեամբ և զինւորական ծառայութեամբ: Կենցաղավարութեան այս ձեւը զարգացրեց նրանց մէջ ծուլութիւն, արիւնարբութիւն և հակումն չը ճանաչելու ուրիշի մէջ և ոչ մի իրաւունք՝ ոչ անձնական և ոչ սեպհականութեան:

Սոյնպիսի զգացումներ նրանց մէջ պէտք է զարգանալին և այն պատճառով, որ նրանք գոնսած են եղել այն ժամանակւայ սղարակական սովորութիւնների աղղեցութեան տակ, ունեցել են բարոյականութեան վերայ նրանց հայեացքը և առհասարակ եղել են այնպիսի վարք ու բարքիտէր, որ ներկայացել է զեռ Ասորեստանից, Յարելոնից ու Պարսկաստանից Աղեքսանդր Մակեդոնացու և նրանից յետագայ խառնակ ու ցոփ շրջաններից ժառանգութիւն ատացած:

Թուսների Երեւան գալը թուրքերին նեղ շրջանակի մէջ դրեց. Նրանք հարկադրւած էին թողնելու իրանց կենցաղավարութեան նախկին ձեւը և սովորելու երկրագործութիւն ու այգեգործութիւն: Այդ նրանց յաջողւեց: Հարատանալով՝ նոքա թօթափեցին իրանցից սուսների գալու պատճառով վրաներն ընկած երկիւ դը, զգացին իրանց սուս քաղաքացի, միւների հետ հաւասար իրաւունքի տէր և, ինչպէս իրանց եղբայրակից հայերը, շատ չ'անցաւ, ցոյց

տւեցին իրանց հոգեկան կազմութեան բոլոր հակումները՝ Մրա հստեանք եղան ահազին քանակութեամբ սպանութիւնները, աւարներն, առազակութիւններն ու առեւանդութիւնները (կանանց): Թուրքի աչքում ոչինչ տարբերութիւն չը կար մարդ թէ հաւ սպանելու մէջ: Խսկ օտարինը գողանալ—յավշտակելը՝ շատ սովորական երևոյթ է: Առանձնադիս զակատող էին հայի ու քրդի ստացւածքի. նրանց աչքում քրիստոնեաների ստացւածքից ապօրինաբար օգտը- լիլը մեղք չէր, խսկ ստելը քրիստոնէի առաջ, նրան խարելը—առա- քինութիւն էր: Բայց ինձ թւում է, որ ոճիրների խնդրում ան- հրաժեշտ է զանազանել մեր նահանգի մննդոլական ծագում ունե- ցող թուրքերին իրանական, այսինքն՝ թրքացած պարսիկներից, հայերից և քրդերից: Եւ այս վերջիններից շատ կան մեր նահան- գում: Նրանք խօսում են քրդերէն, անուանում են իրանց միւլի, զարաչօրլի, շահաբ և այն, և իրանց բնաւորութեամբ ու հակում- ներով զէպի ոճիրները առաւել նմանում են իրանց արմատական ցեղակից հայերին ու պարսիկներին, քան թէ թուրքերին:

Երբորդ խումբը ներկայացնում են քրդերը: Նոպէնի կարծիքով, մեր նահանգի ծայրերը քրդաբնակ է արել նրեւանի վերջին խանը, որպէս զի նրանք խանութիւնը հարեւանների յարձակումներից պաշտ- պանեն: Եւ հէնց իրանց սկզբնական հայրենիքում—ծաճկաստանում՝ քրդերը միշտ ծառայել են իբրև տարականն զօրք: Այս՝ նրանց կենցաղավարութեան եղանակը խաշնարածութեան հետ միացած՝ առաջացրել է նրանց մէջ ծուլութիւն, աշխատելու անընդունակու- թիւն, օտարի վաստակով ապրելու հակում:

Քրդերը միշտ եղել են ու են խաշնարածներ և, ինչպէս արիա- կան ծագում ունեցող ժողովուրդ, արիւնարբու չեն. այս պատճա- ռով և նրանց մէջ կատարւում են ստացւածքի զէմ ոճիրներ: Քուրդը սպանել չէ սիրում. այլ նա գող և կողոպահէ և այս նրա համար արհեստ, եղանակ է կերակուր հայթհայթելու: Նա չէ կա- րող ապրել առանց գողութեան ու յավշտակութեան, առանց սնունդ և արելու այդ անհրաժեշտ եղանակից:

Յոյց տալով ասածս ազգերի իւրաքանչիւրի բնարուշ ոճիրները, չեմ կարող և ցոյց չը տալ այս ազգութիւնների միմեանց վերայ արած ազդեցութիւնները: Հայը, որ վաղուց գալարել էր զէնք գործ

ածելուց և, ինչպէս թուրքերն են ասում, վախում՝ էր արիւնից, սկսեց թուրքերից օրինակ վերցնել. այս պատճառով էլ սպանութիւնները հայերի մէջ ես դաձան յաճախական երևոյթներ. թուրքն էլ իւր կողմից սկսեց հայից սովորել ունեցածի դէմ ոճիրներ գործել:

Երեանի մէջ մի խումբ թուրքեր կան, ասում են, որոնք զբաղւած են միայն միմեանց հոգաբարձու, խնամակալ ընտրելով և այսպիսով միմեանց զիւրութիւն են տալիս առաւել հեշտութեամբ կողուալուր. Խնչ վերաբերումէ քրդերին, սրանք, ի շնորհս հացի թանգութեան, շատ արօտատեղեր ցանքերի վերածւելով — մանաւանդ անցած թանգութեան պատճառով — համարեա թէ կորցրեցին իրանց տնտեսական անկախութիւնը և ցրւելով թուրք ու հայ զիւղերում՝ հովիւներ դարձան: Ընդունակ չը լինելով որ և իցէ այլ աշխատանքի, նրանք վարձւում են չնչին զներով և ազգում են մանր-մունր զողութիւններ անելով: Տնտեսական ձնշւած զրութիւնը նրանց մէջ զարգացնում է նենդամութիւն, խարզախութիւն և հնարագիտութիւն: Նրանք քիչ-քիչ ընտելանում են սպանութիւններ գործելուն, որ վերջին ժամանակներս նրանցում դարձել է բաւական յաճախական երևոյթ:

Դառնալով ոճիրներ կատարելու եղանակների յատկութիւններին՝ կը նկատեմ, որ թուրքերը մեծ մասամբ ոճիրը գործում են ծածուկ—դարան մոտած, զիշերը և միայնակ. հայերը՝ խմբով, բաց տեղում և լոյս ցերեկով. քրդերը՝ խմբով և մի առանձին աղմկալից հարաց-հրոցով: Օրինակի համար, ասենք թէ երեք զիւղ — հայի, թուրքի և քրդի թշնամանում են միմեանց հետ. թուրքերն իրանց թշնամիներից որ և իցէ մէկին դարանից կը տան վեր կը ձգեն կամ մի տեղ, զիշերը մենակ գտնելով, կը քարշեն, կը խեղդեն ու զիակը կը ծածկեն. հայերը զիւղովին կը հաւաքւեն, կ'առնեն հրացանները, թրերը, մահակները և կը յարձակւեն իրանց թշնամիների խաշների վերաց, կը քշեն, կը բերեն իրանց աները կամ սահմանից անցկացնելով՝ կը ծախտեն Պարսկաստանում կամ Տաճկաստանում: Նթէ նրանց յետելից թշնամիները հետամուտ լինին, նրանք սկզբում փախուստ կը տան, յետոյ կը դառնան, կուի կը մանեն: Միայնակ ցանցանք կատարելուս, ընդհանուր քրդական սովորութիւն է՝ յարձակւելու ժամանակ առա-

ջուց իմաց տալ թշնամուն իւր զիտաւորութիւնը հետևեալ խօսքերով. «պատրաստի՞ր, գալիս հմ»:

Մեղանում տարեկան կատարւած ոճիրների թիւը որոշել անկարելի է. բայց մենք առաջ կը բերենք պաշտօնական տւածներից միայն 1886 թ. համար:

Քրէական զանազան ոճիրներ, որոնց առիթով դատ է բացած, 1226 է եղել. այս թւում 164 սպանութիւն, 70 սպանութեան փորձ, 221 վիրաւորութիւն, 28 յափշտակութիւն կանանց, 133 հրաձգութիւն, 22 ընդդիմութիւն իշխանութեան:

Կարծիք չը կայ, որ այս չէ բոլոր ոճիրների թիւը, որովհետեղական ազգարնակութիւնները սովորաբար ծածկում են յանցանքները: Նատեղուներ, զողութիւններ, հրաձգութիւններ իշխանութեան չեն հազարդաւած, ըստ որում վեաւողն ու չարագործը հաշտում են իրար հետ: Խնձ մի բաւականին ճշմարտանման փաստ են պատմել: Քրդական երկու ցեղ կուել են իրար հետ, որի հետեւանքը եղելէ 10-ից աւելի մարդասպանութիւն: Խնչպէս է լինում, տեղական ոստիկանութիւնն իմանումէ այդ և հետամնաւէ լինում նոյն իսկ տեղում ոճիրը թարմ բռնելու: Քրդերն էլ իրանց կարգին իմանում են ոստիկանութեան զիտաւորութիւնը: Նրբ ոստիկանութիւնը ոճիրի կատարւած տեղն է գալիս, գտնում է բոլոր քրդերին միասին նստած և գտնում էր մորթուսելուս: Քրդերը աճազարանօք դիակները թաղած, եղելու ծածկած են եղել, իսկ գետնի վերաց թափւած արեան մասին անել են, որ իրանց տօնի պատճառով շատ մորթած գտներիցն է:

Այսպիսի երեսյթ հասկանալի է, որ ունի շատ պատճառներ մեր կեանքի մէջ խորն արմատներ ձգած, և մինչև որ մենք այս պատճառները չը լուսաբանենք, չենք կարող ոչ մի արմատական միջոց գտնել մեր ողջ գոյութեան, մեր երկրի ու ազգութիւնների բնաւորութեան հետ կապւած ոճիրների գէմ մարտնչելու համար. մենք պէտք է վերլուծենք տեղական կեանքը, նորա հիւանդ կողմերը, որոնք և կազմում են մեզ համար այսքան սոսկալի հետևանքների պատճառները: Մենք պէտք է ցոյց տանք ընկերական չարիքների աջն խմբերը, որոնց արդիւնքն են մեր ոճագործութիւնները, —ուրիշ խօսքերով՝ պէտք է ցոյց տանք ոճիրների շարժառիթները — զործիչները (ֆակտոր): Այս զործիչներն են՝

Մեր աշխարհի ցեղական կենցաղավարութիւնը և վրէժինդրութիւնն՝ իբրև նրա հետևանք, Քրիստոսի և Մահմէդի վարդապետութիւնների վատ մեկնաբանութիւնը, կոտջ ասորադրական վիճակը, տեղային ազնւականութեան բնաւորութիւնը, ազգութիւնների փոխադրձ թշնամական յարաբերութիւնները և խորին տգիտութիւնը, ընտրողական սկզբունքը, Պարսկաստանի ու Տաճկաստանի ազդեցութիւնը:

Կրօն: — Դիտնականներից և հրապարակախօսներից շատերն ասում են, որ քրիստոնէութիւնն ու մահմէդականութիւնը, չը նայած իրանց բոլոր սրբութեանը, սխալ մեկնութիւնների շնորհիւ, ոճիրներ են ստեղծում—առաջ բերում:

Ասելով այս քրիստոնէութեան վերաբերմամբ՝ առաջ են բերում հետևեալը. — Քրիստոսի վարդապետութեան հիմնական սկզբունքներից մէկը՝ ուրիշի գործածը ներողամտութեան տալն է: Փրկիչն ասում է. «Եթէ քո մի թշին ապտակ զարկեն, միւսը դէմ արա՛»: Առ Կորնթացիս առաջին թղթում ս. Պողոս առաքեալն ասում է. — «Եւ հէնց այն էլ նւաստացուցիչ է ձեզ համար, որ զուք միմեանց մէջ երկպառակութիւն ունիք: Խնչո՞ւ ձեզ համար առաւել լաւ չէ մնալ արհամարհւած. ինչո՞ւ ձեզ համար առաւել լաւ չէ կրել զրկանքներ»:

Այս սխալ գաղափարները, ասում են հրապարակախօսները, ժողովրդի մէջ թափանցելով, ստեղծում են այնպիսի տիպեր, որոնք չեն մաքառում իրանց իրաւունքների համար, չեն պաշտպանում իրանք իրանց և այսպիսի վարմունքներով գիւրութիւն են տալիս— հրաւիրում են հասարակութեան միւս չար անդամներին ոճիրներ գործելու:

Այս վերջիններս իրանց դէմ բողոքներ չը տեսնելով, սովորութիւն են դարձնում անարդարութիւններ գործելը, և այսպիսով հասարակութիւնը երկու բանակի է բաժանվում— անարդարութիւն հանդուրժողներ, տանողներ և գործողներ: Այդպէս չէր լինի, ասում են հրապարակախօսները, եթէ իւրաքանչիւր ոքաչքի առաջ ունենար երևելի ներինգի խօսքը՝ կուտի Մէջ կը գտնես քո իրաւունքը, կամ միւնոյն է, եթէ հռոմէական սկզբունքին հետևէր՝ si vis pacem-para bellum— եթէ սիրում ես խաղաղութիւն՝ պատրաստե՛ր

պատերազմի: Այն ժամանակ ոճրացին բնազդումների տէր մարդիկ ընդդիմագրութեան հոտ առնելով, սիրա չէին անիլ ոճիրներ գործելու:

Եթէ մեր Երևանինահանգի կեանքի մէջ փաստեր որոնենք, այնպիսիները կը գտնենք, որոնք կը հաստատեն սոյն տեսութիւնը: Օրինակ՝ գեօլշեցի ու աբարանցի հայերը, որոնք ընդհանրապէս իսկական քրիստոնեաց են համարւում, կորցրել են իրանց իրաւունքները ճանաչելու և պաշտպանելու ընդունակութիւնները, և միշտ էլ իրանց դրացիների յափշտակիչ յարձակումների առարկայ են. շատ յաճախ դուք կը հանդիպէք նրանց մէջ տանուաէրի կամ հարսաի, որ կողովում է, անարգում է ամբողջ գիւղը, և ացդ տանում են բնակիչներն ասելով, որ նա Աստուծոյ երեսից ընկածի մէկն է, Աստուծանից վախ չ'ունի: — Զանն ինձանից — հոդին նրանից: Այս տեղերի մարդկանց այսօրինակ կրաւ որական վարմունքը գէպի իրանց իրաւունքները առանձնապէս աչքի է ընկնում, երբ նրանք եալաղատեղերում վիճում են արօտատեղերի համար. նրանք միշտ զրկւած են և միշտ քրիստոնէավացել համբերութեամբ տանում են զրկանքը: Եւ որքան նրանք համբերող ու տանող են, այնքան էլ նրանց դրացիք՝ յանդուգն ու յանցաւոր:

Այս և սրա նման փաստերը, ըստ Երևոյթին, պէտք է մեզ համոզեն գիտնականների վերոցիշեալ հայեացքի մէջ. բայց հարկաւոր է ասել, որ այսպիսի երևոյթների պատճառը նաև ուրիշ ընկերական գործիչներ են, ինչպէս օրինակ՝ զէնք բանացնելու սովորութեամբ կորցնելը, տեղագրութիւնը, բնակիչների պատճութիւնը և այլն:

Մահմեդականութիւնն, ասում են Եւրոպական գիտնականները, Հետզհետէ պատերազմ և ոճիրներ է առաջ բերում:

Իրանց հայեացքն ապացուցանելու համար, Եւրոպական գիտնականները զիմում են զուրանի և մուսուլման իրաւագէտների հետեւալ տեղերին.

Խոլանն, ասում է Եերեօզին, սուր կերպով բաժանում է մուսուլման աշխարհը (գար-էլ-խալամ) անհաւասների աշխարհից (գար-էլ-խարը) և վերջիններիս զէմ Մահմեդի ժամանակից քարոզում է ջէհաթի կամ հազովատ—պատերազմ անհաւասների հետ: Զէհաթի հիմքը հետևեալ կանոնն է զուրանի.

«Որպէս զի թշւառութիւններ չը լինին, ապանեցէք բոլոր հե-

թանոսներին և սպանեցէ՛ք այն ամենին, որոնք չեն հաւատում Ասուծուն և վերջին դատաստանին»:

Խլութիւն սրա՝ թ. գլխում, 39 սպարբերութեան մէջ գտնում ենք.

«Եթէ զուք չը գնաք պատերազմի, Ասուծած կը պատժի ձեզ ծանրազին սպատժով»: Մահմէդ—Ալիի շարադրութիւնների վերաբերմամբ Դուրութ-Մուխտարի քննական գրւածների մէջ առած է.

«Յոյլ է արւում վերցնելու.—կրելու անհաւատների պատերազմների մէջ լնկածների զլիները՝ թէ վրէժինզրութեան յազուրդ տալու և թէ անհաւատների կատաղութիւնը բորբոքելու համար»: Նոյն տեղում.—

«Անհաւատների զերեզմանները թոյլատրելի է բանալ՝ նրանց մէջ թաղւած գանձերը հանելու նպատակով»: Արգելում է որդուն իւր անհաւատ հօրն սպանելու, որին նա (որդին) պէտք է այնպէս անի, որ ուրիշի ձեռքով սպանւած լինի»:

Որովհետև կանանց ու մանուկներին արգելուում է սպանել, այս պատճառով նրանց, որոնց անհնար է դար-էլ-իսլամ ուղարկելու, պէտք է ձգել, թողնել անապատ տեղերում, որ նրանք քաղցից ու ծարաւից մեռնեն:

Սակայն զիտնականների այսպիսի ենթադրութիւնների հակառակն խօսող փաստեր ևս կան: Մահմէդը խիստ տարբերում է քրիստոնեաններին հեթանոսներից, որոնք չեն հաւատում ոչ Ասուծուն և ոչ վերջին օրին», և որոնց գէմ էլ նա քարոզում է անողոք պատերազմ: Բացի զրանից ինքը մարգարէն երբէք չէ քարոզել այնպիսի դազանութիւններ, որոնց օրինակները մենք բերինք Դուրութ-Մուխտարից: Էսդհակառակը՝ զուրանում—բ. զլ. 186 սպարբերութեան մէջ՝ մարգարէն ասում է.

«Պատերազմեցէ՛ք Ասուծոյ ճանապարհի վերայ նրանց գէմ, որոնք յարձակում են ձեզ վերայ. բայց մի՛ վարւէք անարգար, առաջինը զուք յարձակւելով նրանց վերայ. ըստ որում Ասուծուն հաճելի չէ անարգարութիւնը»:

Մի քանիսն ասում են, որ զուրանից առաջ բերած կտորը պարզ կերպով ցոյց է տալիս, որ ջէհաթը այն ձեռվ, որ նա է ներկայանում, ամենելին զուրանի խկական միտքը հասկանալու արդիւնք չէ, այլ այն չը հասկանալու արդիւնք է:

Միւնոյն բանը հանդիպել է և քրիստոնէութեանը միջին դարերում:

«Փիսանակ, ասում է այդ առիթով Կիստեակովսկին, քրէական իրաւ աղիտութեաննորոգական սկզբունքներ ներկացնող իւր այն հիմնագրի հեղութեանն ու գթասրտութեանը հետեւելու, միջնադարեան եկեղեցին գիտել է մի այլ աղքիւրի, աղքիւրի՝ վրէժինդրութեան, մատահաւաշութեան և աններողամտութեան ոգով տոգորւած աղքիւրի, քրիստոնէական կրօնի Հիմնադրի վարդապետութեան սուր հակառակութիւնը կազմող»:

Գիսնական կանոնիկուների գրւածներից կարելի է մեծաթիւ օրինակներ բերել, որոնք իրանց դաժանութեամբ չետ չեն մնալ Դուրութիւն-Մուխտարից վերեւ բերւածներից:

Խօսելով առաստանի իրաւոնքի մասին, կլարը մերժում է այն հրէաներին, Քրիստոսի հաւատագրուժ թշնամիներին, որոնց ըլպէտք է որ և իցէ մարդասիրութիւն ցոյց տրւի:

Քրիստոնէութեան ու մահմեդականութեան հիմնական սկզբունքները մասամբ ոճիրներ առթելու խնդրում՝ պէտք է առանձն ուշագրութիւն դարձնել նրանց մեկնաբանելու վերաց:

Բանը նրանումն է, որ ինչպէս քրիստոնէութիւնն, այնպէս և մահմեդականութիւնը վատեն հասկանում նրանց վարդապետները — մեկնիչները: Կարծիք չըկաց, որ հայ քահանաներից, մահմեդական ախունդներից շատերը, իրանց կրթութեան այսպիսի վիճակում, չեն կարող ասսուածացին վարդապետութեան մտքերը հասկանալ: Փրկչի վարդապետութիւնն իւր ֆիլօսօֆայական բոլոր խորութեամբ և յաւիտենական ճշմարտութեամբ երբէք չի կարող լիովին ըմբռնելի լինել անզարդացած, նանիր փառասիրութեան անձնատուր եղած հոգեորականին:

1879 թւականին, երբ մեզանում սով էր, քրդերը քաղցած ու մերկ գիմում էին հայ գիւղերը և ինսամւում: Մի աօն օր, իրանց սովորութեան համեմատ, հայերը զերեղմանօրհնէք գնալով, այնտեղ հացեր էին բաժանում աղքատներին: Գերեզմանատներից մեկին մօտենում են և այդ քուրդ աղքատները: Տեղական հայ քահանան, առանց երկար մտածելու, վոնդրում է նրանց ասելով, որ նրանք սրբապղծում են գերեզմանները: Լաւ էր, որ գիւղացի ծերունիներից

մի քանիսը, նրանց յետևից՝ գնալով, կերակրեցին այն ողորմելի քաղցածներին։ Մեզանում կացին մօլլաներ, որոնք սուս վկաներով շահում էին խախուած տիրապետութեան վերականգման վերաբերեալ գատուրը՝ տեղեկութիւններ ժողովելով հայ գիւղացիներին պատկանած հողերի սեղականութեան իրաւացիութեան մասին։ Մի մօլլա պատմում էր, որ իւրաքանչիւր մի քրիստոնեայ սպանելու համար Տէր Աստուածն այն աշխարհում ուղղագաւանին կը շնորհի 2.000 հրեշտականման հուրիներ, իսկ քրիստոնեուհի պղծելու համար՝ անթիւ անհամար հուրիներ և նոյն քրիստոնեուհուն։ Մօլլայի մէկը քարոզում էր՝ սպանել նշանաւոր և լաւ կարողութեան տէր հայերին, ասելով՝ որ այդ անհրաժեշտ է քրիստոնեութիւնը տկարացնելու և իսլամը զօրացնելու համար։

ՑԵՂԱԿԱՆ ՀԵԿՈՊՅԱ: Մեզանում ոճիրների գործիչներից մէկն էլ ցեղական կենցաղն է կամ ցեղական կենցաղի մնացորդները։ Ցեղ ասւածը ընկերավարական այնպիսի միութիւն է, որի անդամները կապւած են միմեանց հետ ազգակցութեամբ ու շահերով։ Ցեղական կենցաղը ազգերի պատմութեան մէջ միայն այն ժամանակ է երևան գալիս, երբ նրանք բարձր են կանդնած ընտանեկան իրաւացարաբերութիւնից, բայց տակաւին չեն հասած պետական իրաւացարաբերութեան։ Զարգացման այս աստիճանի վերայ մարդը անձնատուր է իւր ցեղի շահերին, պարտաւոր է պաշտպանել իւր ցեղակիցներին և, ուր պէտք է, պատերազմ մղել իւր ցեղակիցների թշնամիների դէմ։ Բայց որովհետեւ ուր կայ ցեղական կենցաղ, այնտեղից էլ միշտ անպակաս են թշնամանքն ու կուիւները, ուստի սրանից հետեւում է, որ ցեղական կենցաղավարութիւնը պարտաւորապէս առթելու է և առաւել ոճիրներ։

Ցեղական կենցաղավարութեանը յառուկ է արիւնով վրէժիբնդրութիւնը, որի համաձայն ցեղի իւրաքանչիւր մի անդամի վերայ պարտաւորութիւն է զնւում՝ վրէժ առնել իւր ցեղակիցներին տւած բոլորատեսակ վիրաւորանքների փոխանակ։ Այս վրէժը լուծելու ցեղի իւրաքանչիւր անդամին զրդում է, այսպէս կոչւած թասիբը։ Թասիբը քաշ—նախանձայոյզ—վրիժառու—սա մեր նահանգի մէջ ամենալաւ ածականն է, որ կարելի է տալ տղամարդին։ Մէր արիւնով վրէժինդրութիւնը նկատել ու նկարագրել է մեր նա-

Հանգի գրականութեան հայր հանգուցեալ Շոպէնը։ Նկարագրելով
Սարդարի ժամանակները, ահա՛ թէ ինչ է ասում նա.

«Քրէական իրաւարանն առաջնորդւումէ շատ պարզ օրէնքներով՝ ա-
րիւնը փոխանակ արեան նրանց հիմունքն է եղել։ Սպանողին տալիս էին
սպանւածի մօտ ազգականների ձեռքը և վերջիններս իրաւունք ու-
նէին կամ նրանից արեան գին—փրկանք առնելու կամ նրան կեան-
քից զրկելու։»

Վրէժն այն աստիճանն կարեւոր կենսական տարր է քաղաքա-
կրթութեան յացնի աստիճանի վերաց, որ բանաստեղծները նրան
մարդու համար ամենաթանկագին բաներին են հասցնում։ Այսպէս
օրինակ՝ Պուշկինի «Պօլտավառ-ի մէջ Կօչուբէյն է ասում. —

Այսպէս սրխալւել շէք դուք՝ երեք դանձ
Այս կեանքում էին իմ բերկրանքը. —
Իմ պատիւն էր իմ առաջին գանձ,
Եւ այդ գանձը ինձնից կորզեց տանջանքը:
Իսկ գանձը երկրորդ՝ էր անդառնալի
Դրստեր պատիւն իմ յոցյոյժ անձկալի,
Գիշեր և ցերեկ գողում էի վրան —
Այդ գանձը ինձնից խլեց Մազեպան,
Բայց պահել եմ ես իմ գանձը վերջնական.
Երրորդ այն գանձը՝ վրէժս է ուրբագան,
Որով պատրաստ եմ գընալ առ Աստուած...

Իսկ շատ ուրիշները, ինչպէս օրինակ՝ գարվիշները, որ ահազին
աղեցութիւն ունին ժողովրդի վերաց, վրէժն աստուածային յատկու-
թիւն են դարձնում։ Պրօֆէսօր Վամբէրին առաջ է բերում Աստու-
ծոյ եօթ յատկութիւնը, որոնք դարվիշների մի քանի ուխտերը օրը
մի քանի անգամ պարտաւոր են արտասանելու, և այս յատկութիւնն-
երից մէկն էլ՝ վրէժինդրութիւնն է։ Ահա՛ նրանք.

«Զը կայ այլ Աստուած, բացի Ալլահից,
Ո՛վ Աստուած.
Նա մի է և ուրիշ ոչ ոք.»

Ո՛վ արդար
Ո՛վ կենսունակ կենահրաշանմահ—
Ո՛վ կատարեալ
Ո՛վ վրէժխնդիր»

Սեզանում—Երևանի նահանգում—եթէ լաւ ներս թափանցենք կեանքի մէջ, կը տեսնենք, որ խակավէս ցեղական կենցաղավարութիւն չը կայ, ինչպէս որ այդ հասկանում են պատմաբաններն ու իրաւաբանները. բայց առանց սխալւելու կարելի է ասել, որ մենք գտնուում ենք ցեղական կենցաղավարութիւնից պետականին անցնելու անցողական շրջանի մէջ: Ընկերական այս աստիճանի զարգացման շնորհիւ, մեր նահանգի ստորին դասակարգի գաղափարները մեծ մասամբ պատու են առնում ցեղական հասկացողութիւնների շրջանում: Այս հասկանալի անելու համար, օրինակ բերենք: Ենթալրենք թէ մի որ և իցէ գիւղում սպանութիւն է կատարւել: Չարագործի ազգականները չեն նայում այդ երեսոյթի վերայ պետական սկզբունքների տեսակէտից, այսինքն՝ չեն նայում իրանց ազգականի վերայ իրեւ պետութեան առհասարակ վեսասակար անդամի վերայ. Նրանք նայում են նրա վերայ ցեղական հասկացողութիւնների տեսակէտից, պաշտպանում են այդ չարագործին, ինքեանք սկսում են թշնամանալ հակառակ կողմի հետ և սրանից առաջանում են անհամար ոճիրներ:

«Կովկասեան լեռնացիների Ազաթներում» պրօֆէսօր Լէօնտովիչը այս խնդրի վերաբերմամբ բերում է այնպիսի բնաորոշ օրինակներ, որ կարծես մեր կեանքից լինին վերցրած:

Բնիկը մի սպանութիւն կատարելով—ամենատեսակ հնարներ է գործ գնում, որ վրէժից ազատւի կամ որ իւր ազգականի արեան փոխարէն թափի երկու—երեք և, որքան կարելի է, շատ մարդու արիւն:

Բորբոքւած արիւնինդիրը չէ որոնում ցեղակցութեան աստիճաններ թշնամի և ատելի ազգատոհմի անդամների մէջ.—նա շատ անդամ սպանում է սպանիչի ամենահեռու ազգականին, ով որ ընկնի նրա քինացյզ սրի տակ: Մինչև անգամ պատահում է, որ սպանւածի ազգականները՝ կուրացած մոլեզին թշնամութեամբ զէպի իրանց արիւնինդիրները և աչքները մթնացրած թափւած ա-

րիւնով—սպանում են բոլորովին անմեզ մի մարդու, սխալմամբ սպանիչի ազգականների տեղը դնելով նրան։ Այսպիսով արեամբ վրէժինադրութիւնը հարւածի տակ է ձգում սպանիչի ամենահեռու ազգականներին անգամ և կողմնակիներին։ — Երկու գերդաստանի քիւնախնդրութիւնից ծագում է երեք տոհմի թշնամութիւն։

Եատ անգամ սպանուածի ազգականները, վրէժ տոնելուց յետոյց հալածւում են վրէժ, առնւածի ազգականների կողմից այն հիման վերաց, որ մինը միւսից առաւել լու, առաւել քաջ, պատւառոր էր սպանուել, որ առաջինի կեանքը երկրորդինից առաւել թանգ է եղել և այլ այս տեսակ պատրւակներ։ Երկու կողմից էլ լինում են մի քանի զոհեր, արեամբ վրէժինդրութիւնը ամբողջ սերունդների է անցնում։

Եւ այսպէս մեղանում կան սպանմական անցողականութիւն, ցեղացին կենցաղավարութիւն, և նրանց հետ միասին վրէժ, որոնք և ոճիրների գործիչներից մէկն են կազմում։

Ոճիրների երրորդ գործիչ Նրեանի նահանգում կարելի է համարել կնոջ բոլորովին տոռարդրական վիճակը։ Արևելքում կնոջ գրութեան մտսին շատերն են զրել, այնպէս որ այս առիթով աւելորդ է իմ կողմից խօսք, միայն ես առաջ կը բերեմ ընտանեկան կեանքի ազգեցութիւնն արևելքում ոճիրների վերաբերմամբ։ Ահա՝ թէ ինչոր է նկարագրում այն պրօֆեսօր Վամբէրին։

ԱՅթէ խորագննին կերպով ներս թափանցելով արևելեան ընտանեկան կենցաղավարութեան մէջ մէնք կազմենք նրա ընդհանուր պատկերը, վրան կը նկատենք հետեւալ—առանձնապէս եւրոպացուաչքին ընկնող—գծերը։ Նախ՝ եւրոպացին արևելքում ոչ մի տեղ չի գտնիլ այն սերտ կենակցութիւնը, այն մտերիմ բարեկամութիւնը և սէրը, որոնք ընտանիքի հական ընաւորութիւնն են կազմում։ Բաժանականութիւնն ու ներքին աններդաշնակութիւնը, ինչպէս սառցային թելեր անցնում են մահմէղական կենցաղի ամբողջ հիւսւածքի միջով։ ամեն ինչ կարկանամ է նրանց աղցեցութեան տակ, նոյն խակ ընտանեկան շենքը թւում է երերուն։ Քանի որ մարդ և կին օրւայ մեծ մասն անցնում են առանձնակի, այդ պատճառով նրանք ոչ միայն իրար հետ շեն բաժանում ուրախութիւնն ու վիշտը, ոչ միայն կեանքի մէջ միմեանց

նեցուկ և օգնական չեն, այլ և տան մէջ երկու կուսակցութիւն են կազմում, որոնց կրօնական ու քաղաքացիական օրէնքը անջրպետել է մի բարձր պատով և որոնք, եթէ բոլոր սրտով ցանկանան էլ, չեն կարող միանալ ու միենայն նպատակին ձգանել: Դրանից յետոյ—շարունակում է Վամբէրին—ոչ միայն մահմեդականների մէջ, այլ և ամբողջ արևելքում ապշեցուցիչ է որդոց յարաբերութիւնը դէպի ծընդները, որոնք հիմնած են առաւել յարգանքի քան թէ սիրոց վերաց: Նոյն իսկ երեսահանց զիտելուս երևում է, որ այստեղ սառը տոփորութիւնն է տիրում և ոչ սէրը, որովհետեւ վերոցիշեալ յարգանքը ցոյց է տրում հօրը և ոչ մօրը:

Վամբէրիի առաջ բերած խօսքերը զրկում են արևելեան ընտանիքը սիրուց, ոճագործութեանը ընդդիմագրող այդ գլխաւոր ոժից: Այս սէրը ինչպէս ծնողաց, այդպէս էլ որդոց մէջ ոչ միայն չէ զարգանում, այլև ճնշում, սեղմում է: Եթէ մենք սրա հետ միասին աշքի առաջ ունենանք, որ այս ամենը ազդում են հոգեկան կազմութեան վերաց, ուր և առաջ է բերում մի յայսնի անկառարութիւն, որը ժառանգաբար անցնում է դարուց դար և զօրեղանում է, այն ժամանակ մեզ համար սլարդ կը լինի թէ ինչո՞ւ արեւելցին այնքան գագանաբարոց է, քնքշութիւնից զուրկ և աւելի հակւած է ոճիրներ գործելու անձնաւորութեան դէմ: Բացի այս բոլորից, բնական է հէնց այն հանգամանքը, որ արևելցի տղամարդը միշտ զգում է, թէ կինը իրան հաւասար արարած չէ, ուստի և շատ յաճախ ընդունում է նրա իրաւունքները: Իւր տան մէջ մի անձի իրաւունքներ ընդունելը դառնում է նրա համար սովորութիւն և ձգում է նոյնը իրականացնել և արտաքոյ իւր տան՝ ուրիշների վերաբերմամբ ևս: Ահա՛ ձեզ ոճագործութեան հիմքը: Ուրիշ կողմից արևելցի կինը գլխովին ստորագրական, ստրուկ, ճնշւած, իրաւագուրկ մի արարած, զրկւած ազատ կամքից և կախւած ամբողջապէս իւր սպարոնի իրաւունքից, ինչպէս նկարագրում են նրան եւրոպացի զիտնականները, կորցնում է անկեղծօրէն անձնաւուր լինելու ընդունակութիւնը, դադարում է հասարակութեան մէջ բարոյական տարր լինելուց, դառնում է խորամանկ, գաղտուամբա, նենդ, և պատրաստ շատ ոճիրներ գործելու:

Եւ այսպէս արևելեան ընտանիքը մի կողմից՝ ճնշում է մարդու

այն զգացումներն ու հակումներն, որոնք ոճրագործութեան լնդ-
զիմագրող տարրերն են կազմում, իսկ միւս կողմից՝ զարգացնում է
ոմիրներ շատացնող զգացումները ու հակումները և հանդիսանում
է Երևանի նահանգում ոճրագործութեան գլխաւոր դրժիչնե-
րից մէկն:

Նոյն իսկ այս դորժիչի կարգում թողլ եմ տալիս ինձ դասե-
լու այն նշանաւոր երեսյթի մեկնութիւնը, որ Երևանի նահան-
գում սպանութիւնների մէծ մասը կատարում է կնոջ պատճառով:
Կրթւած մարդու համար այսպիսի երեսյթը դրեթէ անհաս-
կանալի է: Որպիսի՞ հոգեկան յօրինւածքի տէր են մեր գիւղացիք,
որպիսի՞ անմիտ կրքերի տէր, ի՞նչ մի անհրաժեշտութիւն կայ սպա-
նելու մի կին, որ յափշտակւել գրաւելէ, կամ սպանելու նրան, որ
յափշտակել գրաւել է նրան.—ահա՛ խնդիրներ, որոնք մատչելի չեն
հասկացողութեան ու ճիշդ հետազոտութեան:

Անոնցիների մէջ արիւնական գործերին վերաբերում են—
ասում է պրօֆէսօր Աէօնտովիչ—ա. սպանութիւնը, բ. վիրաւորու-
թիւնը, գ. բռնաբարութիւնը, դ. կնոջ կողմից ամուսնական հաւա-
տարմութեան դրժելը և ե. կին ու հարսներ փախցնելը: Այս գոր-
ծերը բնիկների մէջ ամենազօրեղ կերպով գրգռում—բորբոքում են
կրքերը, մթնացնում են նրանց տաք գլխները և դրդում են բնիկնե-
րին ամենակատաղի արիւնշաղախ ոճրագործութեան:»

Որպէս զի ցոյց տամ թէ յանցաւորութեան վերայ որքան սաս-
տիկ ազգում է այս նախանձուութիւնը և թէ որպիսի արիւնաներկ
տեսարանների պատճառ է հանդիսանում, ևս կը բերեմ մի քանի
օրինակներ:

Երևանից ոչ հեռու, մի հայ գիւղում, մի հայր, տեսնելով որ
իւր 18-ամեայ, գիւղի մէջ ամենահամեստ հոչակւած աղջիկը համ-
բուրւում է իւր սիրած երիտասարդի հետ, որին և նա կամենում
էր ամուսին լինել, յարձակում է աղջկայ վերայ, գաշոյնի մի քանի
հարւածներ է տալիս և բուռը բուռը արիւնը խմում:

Ոստ ժամանակներումս մերձակայ թուրք գիւղերից մէկում
քսանամեայ որդին՝ տեղեկանալով որ իւր մայրը դրացիներից մէկի
հետ սիրացին հաղորդակցութեան մէջ է ատրճանակի, հարւածով
սպանում է մօրը:

Մի քուրդ, որին կինը հաղորդում է թէ իրանց զբացիներից մէկը չար նպատակով հետամուռ է լինում իրան, խորհուրդ է տալիս կողջը հրաւիրել նրան իրանց գոմը. և երբ մեր վահանակիր Աւելի լովելասը, և նժագրելով, որ հասած է նպատակին, մանում է գոմը, լովելասը, և նժագրելով, որ հասած է նպատակին, մանում է գոմը, նրան բունում է իւր սիրեկանի մարդը, կտրում է նրա երկու աշկանջը և քմի ծացրը: Դէ հիմի հրամեցէք ու ցոյց տւէք թէ ի՞նչ կը նշանակի կոտջ քամակից լնկնելը:

Ընդհանրապէս խառնակեցութիւնը, կամ կին ու հարս փախց նելը պատճառում է արինքամ թշնամանքներ ընտանիքների, ցեղերի, զիւղերի, յաճախ մինչև անզամ մի քանի զիւղերի մէջ. թշնամանքներ, որոնք անցնում են սերնդէ սերունդ, և այս առիթով կառարւած յանցազործութիւնները մեզանում զովաբանուում են երգերի մէջ, իբրև օրինակ են կացուցանուում ամենուրեք և ամենքի կողմից հաւանութիւն են գոնում: Այսպիսի զգացմունքներ և յարաբերութիւններ են տեղական ազգաբնակութիւնների մէջ մուել գարերի ընթացքում, որոնք և ունեցել են, ի միջի այլոց, հետևեալ հեմունքները.

1) Մեր նախահայրերի ցեղական կենցաղավարութեան մէջ իւր ցեղի մէջ օտարի արիւն ունենալը համարւել է անարգանք—Ականք օջախի սրբութեան, աստուածութեան, և ծառայել է իբրև ամբողջ առհմը սոսրացնող մի փաստ:

2) Տեղական սովորութիւնների կենաց դիւցազնական շրջանում, երբ ամուսնանալը մէծ մասամբ պայմանաւորւած էր կին փախցնելու մէջ, մարդից բռնի կերպով կամ Ագրանտի կինը խլելը համարւել էր նրա կողմից մարդի, տղամարդի արժանաւորութիւն չը ճանաչել:

Այս երկու տարրը մեր նախահայրերից անցել են մեզ և զարգացել, մեր արեան մէջ են մտել և մեզ տանում են զիսպի այնպիսի ծանր ոճիրներ գործելուն:

Յանցանքների շորբորդ գործիչ կարելի է համարել՝ տեղական ազնւականութեան բնաւորութիւնն ու զրութիւնը:

Նա ծագումէ պարսկական խաներից, բէկերից, հայ մելիքներից և այս գասակարդի պրանիկներից ու սպասաւորողներից, որոնք իրանք իրանց նորեկ ուստաներին ցոյց տւին իբրև ազնւականներ,

Ուստասանում երկարամեաց ծառայութիւնով ազնուականութեան հասած աստիճանաւորներից։ Մեղանում ազնուականները մեծ մասմբ և հողատերեր էին, կենում էին առեն տեղ, իրանք չէին վաստակում և հանդիսանում էին մեր հասարակութեան սպառող դասակարգը։ Նրանք մօա լինելով ժողովրդին, առհմական անցեալ և հոգավին սեղհականութիւն ունենալով, իրանց անձնական նպատակների համար՝ կուայնում էին իրար հետ ընտանիքներ, ցեղեր ու գիւղեր և պղտոր ջրում ձուկ են բռնում մ։ Գիւղի մէջ եթէ ազնւականն ազգեցիկ էր, մի բռունցք էր գիւղացիների զլիին, անառակ էր, ուազակներ պահող էր, որոց և կաշառում, յորդորում էր ոճիրներ գործելու։ Նրանք զիւղացիներին հաւատացնում էին, որ դասաստանական ու վարչական իշխանութիւնների բոլոր ներկացացուցիչները իրանց խօսքին լուսմ են և նրանց—զիւղացիներին դայթակղութեան մէջ էին ձգում։ — Երեք գիւղացի գատուում են մարդասպանութեան մէջ մեղաղրւելու։ Համար։ Գործի վճռելու օրը դալիս է և նրանց զրացին ինքը՝ բաւական ազգեցիկ ազնւական մէկը։ Գործը մեծ գործ էր. մի քանի ընդհատումներ տեղի ունեցան, և առեն մի ընդհատումի մէջոցին նկատում էր, որ այդ ազնւականը մտնում էր դասարանի զրասենեակը, խօսակցութիւն էր բաց անում՝ մէկնում մէկի հետ և, վերաբանալով կալանաւորների ազգականների մօտ, ինչ որ բաններ էր նրանց տաք տաք պատմում։ Վերջապէս երբ դատաւորները մտան խորհրդարանը, նա փութաց զէպի փաստաբանները, նրանց հայեցքներով հարցրեց գործի ելքի մասին և կրկին դառնալով գիւղացիների մօտ՝ հաւատացնում էր նրանց, թէ ինքը մտաւ խորհրդարանը, խօսեց դասաւորների հետ, որնք բոլորն էլ իւր կողմն են, միայն դատախազն էր չափից գուրս պնդում։ Խնչիւր կողմն են, միայն դատախազն էր չափից գուրս պնդում։ Խնչիւրների ոճիրների սրատմաս են զառնում։

Ընդհանրապէս կարելի է ասել, որ զիւղերում ապրող մեր նահանդի ազնւականութեան մ.ծ մասը միմանց հետ կապւած են

ազգականական կապերով և շատ անդամ աւագակների խմբեր են սլահում ու նրանց ապաստանարան տալիս:

Մանաւանդ մեասակար է աղքատացած ազնւականը, որը սովոր չէ աշխատելու և որին ազնւական խնքնահաւանութիւնը թողլ չի տալիս մօտենալու արհամարհելի աշխատանքին: Նու ապրում է միայն գողութեամբ և սուտ վկայութիւններ տալով:

Ազնւականութեան ներգործութեան տակ առաւել ևս ոճիրների թիւը շառանում են վերջին տասս տարիներում, երբ սկսւեց մեր նահանդի հողաչափութիւնը: Ազնւականները յայտնում են իրանց իրաւունքները թագաւորական հողերի վերաց, որի համար և նշանակում է քննութիւն. և ահա ազնւականները փողով, հողով կաշառում են գիւղացիներին, որոնք և սուտ ցուցմունքներ են տալիս: Նոյն կաշառքներն են շարժում և տիրապետութեան խանդարման վերականգներու գործերի վերաբերմամբ:

Ի շնորհս ազնւականների գործւած այս յանցանքները ինձ չընչին են թւում համեմատաբար նրանց հետ, որոնք սկսում են երեւան գալ և, ըստ երեսովին, ժամանակով ահազին ծաւալ են տոսնալու: Բանը նրանումն է, որ մեզանում գանձարանից հողեր խլելլ հաւասար է գիւղացիներից հողեր խլելուն, քանի որ այն հողերի օգուտը գիւղացին էր քաղում: Նատ յաճախ յաջողուում է ազնւականներին դարձնել զուտ թագաւորական հողերը կալւածատիրական, մուլքադարականները -- բացարձակ սեպհական. յաջողուում է յափրշտակել հարիւրաւոր զեսեատին հերկելի դաշտերից և ամբողջ գիւղեր մուրացկանութեան մատնել հասկանալի բանէ, որ այսպիսի վարմունքները ժողովրդի մէջ ծնեցնում են թշնամական զգացումներ դէսի ազնւականը, զգացումներ, որոնք կարող են հասցնել անհամար ոճիրների: Բացի սրանից, երբ ազնւականին յաջողուում է բացարձակ սեպհականութեան իրաւունքով հողեր ձեռք բերել, նրան շատ անդամ անհրաժեշտ է, որ խլի այդ սկզբնական շահուողներից և յանձնի դրացի գիւղացիների ձեռքը: Այս զարհուրելի թշնամութիւն է ներս բերում գիւղերի մէջ և առաջացնում է ահազին ոճիրներ:

Երբ ես գրում էի այս տողերը, ինձ հաղորդեցին, որ նարուրագալազեազի գաւառում, ազնւականների յորդորմամբ, սպանւել է

մի զիւղացի, որ պայքար էր մտել նրանց թագաւորական հողեր յափշտակելու դեմ:

Նատ ժամանակ կը պահանջւէր՝ հաշւելու համար ազնւական-ների բոլորատեսակ ազգեցութիւնները ոճրագործութեան քանակութեան վերաբերմամբ, մանաւանդ որ յաճախ նրանք ազդում են տեղացի ազգաբնակութեան բարոյականութեան և կենցաղացին կողմէրի վերայ.—այսպէս օրինակ՝ նւազացնում են ժողովրդի կրօնական զգացումները, տարածում են արբեցողութիւն, աւերում են նահապետական առաքինութիւնը և այլն, իսկ այս ամենի արդիւնքը՝ յանցանքներ են: Առ հասարակ կարելի է ասել, որ Երեւանի նահանգի ազնւականութիւնը յետամնաց է եւրոպական Ռուսաստանի ու Վրաստանի ազնւականներից և հանդիսանում է մեզանում ոճիրների բաւական նշանաւոր գործիչ:

Հինգերորդ գործիչ ոճիրների կարելի է համարել մեր նահանգի մէջ տանուտէրներ ու ջրպետներ ընտրելու սկզբունքը: Կարծիք չը կայ, որ այս սկզբունքը մեր նահանգում անձնականութեան զարգանալու դրաւականն է, բայց և այսու ամենաչնիւ նա անթիւ ոճիրներ է առթում, քանի որ անհամապատասխան է տեղական ազգութիւնների սովորութիւններին: Բանը նրանումն է, որ դիւղերում իւրաքանչիւր կուսակցութիւն կամենում է իւր մի-ջից ընտրել տանուտէր ու շինական դատաւորներ: Սրանից թշնամութիւն է ծագում կուսակցութիւնների ու ընտանիքների մէջ, և այս թշնամութիւնն էլ իւր հերթին առիթ է աալիս անթիւ ոճիրների: Նոյն իսկ տանուտէրներն ու ջրպետներն իրանք անհամար ոճիրներ են հնարում, որ պատժեն իրանց թշնամիններին:

Ոճիրների վեցերորդ գործիչ կարելի է հաշւել մեր դրացիութիւնը Տաճկաստանի ու Պարսկաստանի՝ ացդ թմբութեան պետութիւնների հետ: Կարծիք չը կայ նրանում, որ Երեւանի նահանգի հայերը, թուրքերը ու քրդերը վերջին 60 տարւան մէջ, իրանց պարսկաստանցի ու տաճկաստանցի եղբայրակիցների համեմատութեամբ, նշանաւոր կերպով յառաջ են գնացել քաղաքակրթութեան մէջ, հետզհետէ նրանց հակումներն էլ դէպի յայտնի ոճիրները նւազել են: Այդ չէ կարելի ասել պարսկական ու տաճկական բնակիչների վերաբերութեամբ, որոնք այժմ գտնուում են միևնուն

զրութեան մէջ, ինչպէս որ էին սրանից 200 տարի առաջ: Խնկասոյն առնենալով, որ արհեստագիտութիւնը մեղանում բարձր է, փողի շրջադարձութիւնը առաւել լաւ, Տաճկաստանի ու Պարսկաստանի բնակիչները դալիս են մեզ մօտ՝ ինչպէս բան որներ, ինչպէս մանր առեւրականներ և բերում են դէպի մեզ իրանց ոճրային հակումները: Մեր զաֆան արիւնարուներից շատերը Տաճկաստանի ու Պարսկաստանի գաղթականներ են: Նրանք մեր կողմերում ոճիրներ կատարելով՝ փախչում, ծածկում են իրանց հայրենիքում, ուր որ ծածկում են և մեր աւազակներից շատ ուրիշները: Տաճկաստանի ու Պարսկաստանի շատ փաշաների, բէկերի ու խաների համար ասլաստանապահութիւնը բաւական շահաբեր է: Եաւ շատ անզամ երաշխաւորութեամբ բանալից ազաւած ոճրագործները դիմում են փաստաբաններին և խորհուրդ են հարցնում: — Թնա՞ն արդեօք այսուղ, թէ փախչեն Պարսկաստան կամ Տաճկաստան: Փաստաբանը նրանց կարծիքով պէտք է մեղադրանքների զժուարութիւնները ծանր ու թեժեանի և նրանց պատասխան տայ: Էացի այս ամենից, պարսկահայտակները և տաճկահայտակները, ինչպէս և շինական կուլիները Ամերիկայում, բաւականանում են շատ քշով, զրկում են տեղական բանւոր բնակիչներին, որոնք աւելի կարիքներ ու աշխատանքներ ունին, յետոյ մեղանում ամուսնանում են, հապատակութիւննեն լնդունում և այսպիսով աւելացնում են առանց այն էլ խիտ բնակութեան թիւը, որ և լինում է պատճառ ոճիրների բազմնալուն:

Ոճիրների ամենազօրեղ գործիշներից մէկը մեղանում հայերի ու թուրքերի թշնամութիւնն է միմեանց հետ, որը, թէև ոչ այնքան, ինչպէս առաջ էր, մինչև այժմ երեքնն տեղի է ունենում նրանց յարաբերութիւնների մէջ: Այս թշնամութիւնը խոր արմատներ ունի և պահանջում է լուրջ մաքառումն իւր դէմ: Տեղացի ազգաբնակութիւնը տակաւին քաղաքակրթութեան այն աստիճանից վեր չէ բարձրացել, ուր թշնամին և օտարականը համանիշ հասկացողութիւն են հանդիսանում, ինչպէս օրինակ, հռոմայեցոց մէջ հօστիս նշանակում էր թէ թշնամի և թէ օտարական: Զարգացման այս աստիճանի վերայ ազգանութիւնները սովորաբար թշնամանում են միմեանց հետո հացի սրանից մէր թշնամութիւնը ունի և պատմական արմատներ: Բանն այն է, որ հասարակ հայ ժողովրդի:

Հասկացողութեամբ, այս թուրքերն են, որ կործանել են իրանց տաճարները, ծաղկած քաղաքները ու գիւղերը և դարձրել են սրանց իրանց մշակ. ծերերի մինչեւ այսօր էլ տակաւանն պատմում են այն ամենն, ինչ որ քաջել, տարել են թուրքերի ձեռքից՝ մինչեւ ուստի ների գալլ և այս ամենն, անշուշտ, ատելութիւնն ծնեցնում գէպի թուրքերը: Թուրքերն էլ իրանց կարգին տեսնել չեն կարողանում հայերին, այդ քեա վուրեներին, որոնք վեռերէկ իրանց ստրուկներն էին: Եւ այս ամենը վշտում ուսուցնում են թէ հայ, թէ մահմեղական անզարդացած մարդիկը:

Ահա՛ ոճիրների այս բոլոր շարժառիթները—գործիները, որ, ըստ ներման ժամանակին, քննեցինք մենք: Բայց իւրաքանչիւր ընկերական երեսոյթ հետեանք է անբաւ պատճառների, ուստի և սրանք չեն ոճիրների միակ գործիները—շարժառիթները: Բայց այս բոլոր գործիների ազդեցութիւնը հասկանալի չէր լինի, եթէ նրանք ըլ կապւենին ընդհանուր տղիսութեան հետ:

Բայց նախ քան թէ աւարտ կը տամ մեզ հետաքրքրող խնդրին, դեռ ևս ասելու եմ հետեւեալը:

Մեր ծերունիներից շատերը մոտաբերելով անցած գնացած օրհնեալ ժամանակները, առամ են՝ այսպէս չէր զզլբաշի (պարսից) ժամանակը. այն ժամանակ ո՛վ կը տար այսքան ոճիրներ. կախ էին աալիս ոճրագործին, աչքն էին հանում, ձեռքերը կրում էին, ոչ թէ հիմիկւաց նման, որ ոճրագործներին հայ են տալիս, պահում բերգերում. խիստ, ահ ու տարսափ ձգող պատճեններ չեն տալիս, զրա համար էլ ոճիրները շատանում են մեզանում: — Մրան կարելի է ա՛յ թէ ինչ պատասխանել: Առաջին գեռ ապացուցած չէ թէ այն ժամանակ ոճիրների թիւը նւազ էր այժմեանից. երկրորդ՝ մինչեւ այժմ չէ ճանաչւած, որ սարսափը պակասացնի ոճրագործութիւնը: Ամենից հաւանականն է, որ այն ժամանակ ոճիրներ աւելի են կատարւել քան թէ այժմ, բայց լոյս չեն հանւել:

Ոճիրների թիւը նւազեցնել կարելի է, բայց ոչ պատժով, այլ փափոխելով այն ամենն, ինչ որ մենք ոճիրների գործիշ անուանեցինք, հետզետէ և փափոխելով իւրաքանչիւր անձնաւորութիւն առանձին առանձին: Ահը, սարսափը միայն ժամանակաւորապէս կարող էն գաղարեցնել հասարակութեան մէջ ոճրագործութեան երեան գալլ,

բացց շարը բարի դարձնել, ոչնչացնել անհատի մէջ բարոյական պակասութիւնները՝ անկարող են: Երուս կառավարութեան գլխաւոր ծառայութիւնը մեզանում նրանումն է, որ անձնաւորութեանը միջոց—ազատութիւն է շնորհել իւր քնական ազգութիւնները լոյս հանելու, նաև մեր ծածկւած թշնամուն դուրս է կանչել և մեզ միջոց տւել ուսումնասիրելու նրա զօրութիւնը, գոնելու արմատական միջոցներ նրա դէմ կուելու համար:

Եւ երբ մենք բոլոր ուժով, համերաշխութեամբ պետութեան հետ կը հալածենք ոճիրները, կ'ոչնչացնենք առաւել սառը զարգացմանը յատուկ մեր ցեղական կենցաղի մնացորդները, կը գալարենք աւետարանն ու զուրանը վաս մեկնաբանելուց, կը տանք ազատութիւն մեր կնոջը, երբ մեր ազնւականութիւնը կը հասկանայ իւր քաղաքակրթից դերը, իսկ ազգութիւնները ձեռք կը քաշեն իրար հետ անմիտ ու յիմար թշնամութիւններ անելուց, և երբ մեր ծածկամասնութիւնը կը դաստիարակւի առաջինասիրութեան և արդարամտութեան մէջ,—ա'յն ժամանակ մեզ կը յաջողի պակասացնել մեր ոճիրների թիւը և մենք հպարտութեամբ կարող ենք ասել—որ մեզանում ոճիրները սակաւացել են, որովհետեւ մենք ինքներս առաւել լսւացել ենք:

Ա. Ն Կ ՈՒՄ Ն

Հ Ա Յ Ն Ե-ից

Արծիւեանի

Միթէ արդարեւ անկաւ բընութիւն,
Վարակւեց և՛ նա մեր արատներով...
Ահա մարդկանց պէս, կենդանի բոյսեր
Կեղծում, ստում են—և այն պարզ կերպով:

Ո՛չ, ել չեմ ուզում երբէք հաւատալ
Համեստ շուշանի ես անմեղութեան,
Վերջին ժամանակ թիթեռը գաղտուկ
Անշափ լտճախ էր այցելում նրան:

Կասկածելի է և՛ մանուշակը
Իւր չքնաղ տեսքով, իւր անուշ հոտով,
Օ՛, անշուշտ և՛ այդ փոքրիկ ծաղիկը
Մեզ պէս տանջւում է փառքի ծարաւով:

Զը կայ ալլ ևս անկեղծ զգացմունք
Վառւած սոխակի գողտրիկ երգերում,
Նրա այդ ճարտար կըլկըլոցի մէջ
Միայն կեղծ լոցի ես ձայն եմ լսում:

Ճշմարտութիւնը կորել է անհետ,
Զի մնացել նշոյլ հաւտատլմութեան...
Ահա շնիկը էլ՝ պոչն է խաղացնում,
Բայց դա նշան չէ էլ մտերմաւթեան:

* * *

Գ. Բ.-ի

Ահա ծագեց գալնան արև և աստղերը չքացան,
Ահա երկնակամարի վրայ փալլուն սիւներ փռւեցան,
Զիւնոտ լեռանց ոռւր գոգաթներ վարդի գոյնի փոխւեցան,
Գիշերալին գոլորշիներ բնութեան դրկում շարժւեցան:

Գունատւել է եղջիւրաւոր լուսնի գէմքը նազելի,
Երբեմն սիրուն, երբեմն զւարթ, հրաշալեաց մէջ գասելի,
Այժմ մարած աչքիները ունին մի բան ասելի.
«Ինչո՞ւ ես կեանքից զրկւեցայ, երբ ողջ բնութիւնն արթնացաւ»:

Նրա դիակ ելմերի մէջ, լիշտառի իւր գոյութեան,
Ազօտ կերպով նշմարւում է, գութ է շարժում բնութեան.
Սոխակն ու վարդ սիրահարներ, պաշտպաններ անմեղութեան,
Արձակեցին բորբոքիչ ձախն և երկնքում լուեց՝
«Ինչո՞ւ նա հոգին աւանդեց, երբ ողջ բնութիւն ծաղկեց»:

ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(Հայ առորիստի յիշողութիւններից)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

(Շաբանակութիւն 1)

IV.

Վ Ե Բ Ա Դ Ա Բ Զ

Առաւոտ կանուխ սենեակիս զբան ուժգին բաղխումները զարթեցրին ինձ: Զիսպան Սիմօնը, մշեցի ծառալ հաջի-Ղազարը և Յովհաննէս աղան մտան սենեակս, հաւաքեցին իրերս և տարան բեռնելու:

Դեռ նոր էր լուսացել, երբ ես բարձրացայ ընթերցարանը թեզ խնելու և հաշիւներս վերջացնելու: Ու ոք չը կար այնոնք, բացի Մուրադ էֆէնլուց:

Երբ իջազ զայր, արդէն հիւրանոցի գարսամների առջեւ կանգնութ էր հետաքրքրողների մի խումբ և անց ու դարձ էր անում ցերպերներից միւսը՝ Ալին:

Զիսպանս իւր երկու ձիերից մէկի վերայ բարձել էր փոքրեկ բեռնը ու միւսի իմ հեծնելու ձիուն՝ սեմարլոյ, որի փոխարէն դրած էր թամբը:

Եկել էր ինձ ընկերանալու և մի վանեցի վաճառական, որ Պօլիս էր դնում: Նա վարձել էր մի ձի, որի վերայ բարձել էր իւր երկու ահազին չւալները, կասպացները ու ինքն էլ վառաւորապէս

1) Տե՛ս «Մուլճ»-ի 4, 5, 7, 9 և 11 համարները:

բազմել այդ բոլորի վերաց: Նրա հետ էր և նրա ձիատէրը՝ կաթրչի Յովիաննէսը:

Տալով ծանօթներիս վերջին հրաժեշտը, ևս հեծայ բեռնաս կրութեան ընաելացած լիսկան նժոյզս ու ճանապարհ ընկայ անհիւրընկալ Կարինից Տրապիդօն:

Յուրա օր էր, գեախնը սառել, շուրջը ձիւն, օդը մառախապատ: Մեր փոքրիկ խմբի առջևից դնում էր ձիատան քաշելով յետելից բեռնաւած ձին, յետոյ ես էի, ապա վանեցին, խկ նրա կողքից քայլում էր նրա ձիատէրը: Մառախուղի միջից Մեֆիստօֆելի պէս հեռուից հետեւում էր մեզ Մուրադ էֆէնդին: Մենք դիմում էինք քաղաքի արևմտեան դուները:

Ահա՛ և պարապների կամարակապ անցքը, որի առջեւ կանգնած են երկու զինւորներ: Մօաւկաց փոքրիկ տնակից դուրս եկան ճանապարհը երեք տաճիկ պաշաննեաներ պազզուն գեղին կոճակներով: Հասնելով նրանց, մենք կանգնեցրինք մեր ձիանները: Ես մ.կնեցի նրանց երկու անցաթուղթս էլ:

— Նեղութիւն մի՛ քաշեք, էֆէ՛նդմ, թղթերը մեզ չեն հարկաւոր. մենք բատաշից ենք ուզում, որպէս զի ձեզ բարի ճանապարհ ցանկանք, ասացին շողոքորթ ձաշնով պաշտօննեանները:

Ես տւի 200 փարա (50 կոպ.) էֆէնդիններին և նրանք ձեռնները տարան զէպի գեախնը, յետոյ շրթունքները ու կպցրին ճակատներին՝ յարգանքով «Ալահ բարաքեաժթ վերսն» ասելով: Ես հետաքրքրութեամբ նայում էի թէ վանեցին՝ որը, ի հարկէ, տեղական սովորութիւնները ու պահանջները աւելի լաւ գիտէր՝ ո՞քան կը տայ այդ էֆէնդիններին: Մեծ էր զարմանքս, երբ տեսայ որ այդ վաճառականը առառանձեւնութեամբ հանեց քակից... 20 փարա (5 կոպ.) և տեղ պատելիններին, որոնք զոհ լինելով և այդ նէրից, այլ ևս մեզ չը պահեցին և մենք մի քանի վայրկեանից յետոյ արդէն պարսպների միւս կողմումն էինք:

Կրկին բացւեց առջևս Բարձր-Հայքի միաօրինակ տիտոր բնութիւնը. նոյն ժառապուրկ, ամացի, խտատես լանդշավտը, որ տեսանք դեռ Ալեքսանդրօլից սկսած: Այդ միաօրինակ լանդշավտը աւ ելի ևս տիտոր կերպարանք էր ստանում ձիւնի սպիտակ սաւանի տակ, որի միջից տեղ տեղ սեին էին տալիս հեռաստանում հողա-

կոյաների նման թուփ-թուփ դիզագած գիւղական խրճիթները։ Մեռելութիւն ու թշուառութիւն, կարծես, ծանրացել էին այդ աշխարհի վերայ...

Բաւականին խանգարւած խճուղու վերայ պատահում էին խումբ խումբ տաճիկ ու հայ գիւղացիներ, որոնք հազուատով ոչնչով իրարից չեին տարբերում։ միմիայն հայկական մեծ մեծ, հեզ և թախծալից աչքերն էին, որոնք զանազանում էին բնիկ հային եկորտիրապետող տաճիկց։ Նոյս նահապետական սայլերը՝ լծած եղ ու գոմշուկներով, բարձած խոտ, աթար ու դարմանով (սաման)՝ օրօրւելով ու ճաճռալով քաղաք էին դիմում։

Մի քիչ էլ հեռացանք Կարինից և մեզ պատահեցին կաթրչիների քարեաններ, ապրանքներով բեռնած 30—40 ձի իրանց լազ տէրերով։ Այդ անունը ընդհանրապէս տալիս են լազստանցիներին, չորոշելով իսկական լազին լազստանցի տաճիկց, յոյնից և հայից։

Իմ ուղեկիցներիցս, ինչպէս ասացի, մինը վաճառական էր և երկու ձիապանները՝ հայ լողեր։

Վաճառականը վանի մօտ գտնուող Ալիւր գիւղիցն էր, մօտ 36 տարեկան մի փոքրահասակ կլորիկ մարդ, կարմիր և իւղով քսածի պէս փայլուն, ածիլած դէմքով, կապոյտ աչքերով և խարտեաշ բեկուրով։ Նրա անհանգիստ աչքերը և սուր ծնօտը այնպիսի արտայայտութիւն էին տալիս զէմքին, որ կարծես այդ մարդը միշտ ինչ որ ուշադրութեամբ լսում լինէր կամ աշխատում ուրիշի երեսին կարդալ նրա խորհուրդները։ Դէմքի այդ մշտապէս հարցնող արտայայտութիւնը նրանից էր, որ Մ. աղան, երկու ականջով էլ ծանր լինելով, սովորութիւն էր արել աւելի խօսողի շրթունքների շարժումից, քան ձայնից բան հասկանալ։ Մ. աղան հազած էր մոյդ-կարմիր կոսկիս շուխացից անճոռնի կերպով ալաֆրանկա կարած շորեր, իսկ զլիսին դրած էր կարմիր ֆէս, որի շուրջը ճակատին փաթաթած ունէր մի հին թաշկինակ։ Ուսերին նա ձգած էր բեզինի մի վերարկու։

Վանեցու ձիապանը մի երկարահասակ, իրանը և զլուխը միշտ ուղղահայեաց բարձր բոնած, մօտ 35 տարեկան մի հայ լազ էր, որի ինքնավստահ խոշոր քայլւածքը ու խրոխտ դէմքի արծւի քիթը, թուխս խիտ յօնքերի տակից վառվուն, միշտ պատրաստ

բարկութիւնից շահթի պէս փայլառակիելու աչքերը ու զուրս պրծած ստորին ծնօտը՝ արտայացառում էին մի անգուսազ, զիւրազրդիս, ուժեղ բնաւորութիւն։ Նա սիրում էր մի մի անգամ՝ պարձենալով սպառմել, որ ինքն էլ է եղել Խուսաստանում, Կերչ ու Սիմֆերոսովի կրղմերում։ Այդ պատճառով նա իրան տւելի լուսաւորւած էր համարում և սիրում էր ուռուերէն բառեր գործածել, ուռս աղջկանց մասին խօսել և մինչև անգամ երգել.

«Աս զաշէմ, զաշէմ վի մէնէ զարիլ……

Միւս հայ-լազր դեռ շատ երիտասարդ էր և իւր կեանքում համկասանից զուրս չեր եկել։ Նա հազիւ 20 տարիքին հասած, միջին հասակից բարձր, լայն, լիք թիկունքներով, հատ ջլոտ բազուկներով և ուժեղ, վայելուշ կազմւածքով մի երիտասարդ էր, որի զվարին առանձին կերտով փաթաթած ու ծոծրակի ետելից ազատ ձգած ծայրերով գլխանոցը տալիս էր նրա ազւամազով նոր ծածկած մոյգ-կարմիր ալրական դէմքին մի վայրենի գեղեցկութիւն ու կորով։

Երկու ձիապաններն էլ, ինչպէս և առհասարակ բոլոր Լազբատանի հայերը, խօսում էին իրար հետամիերէն։ Հայերէն մի քանի խօսք դիտէին, այն էլ սովորել էին ո. Արտապետ դնացող տխաւորներին յաճախ իբրև առաջնորդներ ուղեկցելուց։

Երկուն էլ առանձին զիւղերից էին, Տրավիզօնից շատ մօտ Լազպաննում բաւական հայեր կան, որոնք տարիներով ապրելով մոլեռանդ տաճիկների հետ խառն, մայր երկրից անջառուած, անխնամ կրօնական—կրթական կրղմից՝ կամաց կամաց մնացել են իրանց մայրենի լեզուն, ինչպէս աց արել են Վրաստանի հայերը վրացիների մէջ ապրելով։ Լազպանի աշժմեան հայերը միայն հայ են իմացւում իրանց անուններով և դեռ պահպանած կապով եկեղեցու հետ։ Մի քայլ ևս և նրանք կ'անցնեն այն աստիճանը, որ անցել են արդէն հազարաւոր հայեր դարերի ընթացքում, մահմեղականալով խսպառ։ Ափառու, որ մի այլպիսի առողջ, ուժեղ, քաջ տարր, Թիւրքիացի հայ առաջնորդների և կառավարող դասի անհոգութեան շնորհիւ, կորչում է հայութեան համար։ Տրավիզօնին մօտ, Պօլսից ճանապարհը զիւրին, Բաթումը կողքին—միայն մոտածող, զործող է ալէտք…

Կէսօրին հասանք իլիջա գիւղը, որը երզրումի վիւայէթի, երզրումի սանջակի, Օվա կամ Կարնոց գաշտ զէզէցի վարչական կենդրոնն է և նշանաւոր է ծծմբային տաք աղբիւրով։ Այդ զէզէն բաժանւում է 15 նահիեկի¹⁾, որոնցից խրաքանչիւրը բաղկացած է մօտ 10—12 գիւղերից, մեծ մասամբ խառն հայու տաճիկ բնակիներով։ Օվա զէզէից գէպի արեւելք տահմանակից է նրան նաև եան, որով մենք անցանք մինչև երզրում հասնելլը, արևմուտք՝ Պերջան, հարաւ-արևմուտք՝ Քղի (Կեղի), հիւսիս-արևմուտք՝ Բացբու-ըդ զէզէները։

Իլիջա հասնելով իջևանեցինք քարից ու ցեխից շինած մի որչում, որի կողքին միւնոյն ծածկոցի տակ ուղտերի համար շինած զուերն էին գտնուում։ Այդ խանի առջև կանգնել էր ուղտերի քարւանը։ Հերթով չոքեցնում էին այդ կենդանիներին «քիսի» ձայներով, քակում չւանները, բեռներից աղատում հլու կենդանիներին, և կրկին վերկացնելով տանում ընդարձակ զուերը, ուր նոյնպէս բոլորին չոքեցնում էին և կերակրում։

Խանի օդան, որ յատկացրած էր ճանապարհորդների համար, մի փոքրիկ սենակ էր, ճախարակաւոր կեղսոտ դռնով, հողի յատակով, կաւով ծեփած պատերով, ծուխից սևացած գերաններով, և թղթով ծածկած դռնակներով։ Օդայի մի ճակատին դռնուում էր գետնի յատակից մի քիչ բարձր տախտակամած ու ճաղերով շրջապատած տեղ։ այդ պատւաւոր մինիւնը ծածկւած էր խասիրով։ Օդայի մէջ տեղում սօբան էր, վրան դրած զահւէաման ու շացդան, որոնցից խանչին առաջարկում էր մեզ զահւէ կամ թէյ, մի բաժակի կամ ֆինջանի համար 10 փարա (2½ կոպ.) պահանջելով։ Ես ունեի հետո պատրաստութիւններ։ ուսոի պատիրեցի ինքնաեռ։

Դուրս գալով այդ ողորմելի գիւղաքաղաքից և մի քանի ժամ ճանապարհ գնալուց յետոց հասանք մի ամայի, ձիւնապատ տափարակի մէջ տեղում միայնակ կանգնած խան։

Ժամի 6 էր երեկոյեան։ Մեր առաջնորդների ասելով՝ մինչև միւս խանը գեռ շատ ճանապարհ կար և եթէ շարունակելինք գիշերը վրայ կը հասնէր երկիւղալի ճանապարհի կէսում։

1) Տե՛ս «Մուլա»— № 7, երես 1910։

Կցանք ձիերից և բարձր գարպատվ մոանք խանի ծածկոցի տակ: Զախ երեւում էր մի փոքրիկ, ճախարակաւոր, կեղտից սւացած դուռն, որը տարաւ մեզ օդան: Նոյն ծածկոցի տակ էին և ուղտերին յատկացրած գոմերը:

Մեր մաս սենեակը միայն մեծութեամբ էր քիչ զանազանուում նախընթացից: Ես իմ ուղեկցի հետ միասին բռնեցինք տախտակամած բարձրաւանդակը: Աջամ խանչին դրեց մեր առջև կրակով լիք «մանղալը» և դցեց ինքնաեռը:

Արդէն մլթնել էր: Օգան կամաց կամաց լքցում էր ուշացած ուղեւորներով. բոլորը խեղճ, ցնցոտիներով ծածկւած մարդիկ: Դուրսը ձիւն էր գալիս, և ուղեւորները մոնելով օդան թափում էին իրանց շուրբի վրացից ձիւնի քուլաները և խմբում սօբացի շուրջ տաքանալու: Նրանք հանում էին իրանց թրջւած տրեխները և գուլպաները ու չորացնում: Գուլպաներից և տրեխներից բարձրացող անուշահոտութիւնը բուրում էր մեր շուրջը...

Պարատառում էինք քնելու, երբ աղմուկով թափւեցին օդան մի քանի զինւած տաճիկներ, աւազակային գէմքերով: Նրանք բարեկամաբար ողջունում էին խանչուն, իրեւ հին ծանօթին: Տեղաւորւելով լայն թափանի վերայ նրանք մինչեւ կէս զիշերը ինչ որ կիսաձայն խորհուրդ էին տեսնում իրար մէջ:

Մեր ձիապանների ասելով՝ դոքա յացոնի գողեր էին: Վատ եղանակը ստիպել էր նրանց սպասառն զանել ացատեղ: Վանեցին, չը նացած որ ականչները ծանր էին, իսկոյն հասկացաւ ձիապանների ասածը և երկիւղից սաստիկ անհանգիստ էր լինում: Ձիապանները հաւատացնում էին, որ գողերը չեն համարձակւիլ մեզ վնաս հասցնել, որովհետեւ կը վախնան իրանցից: Յովհաննէսը գնաց ձիերի մօտ քնելու, իսկ Սիմօնը մնաց օդացում:

Ես առանց հանւելու պառկեցի, և նիրհում էի: Ծանր, խեղդող օդից զլուխս սաստիկ ցաւում էր: Վերջապէս յոգնածութիւնից քունս տարաւ և ես անցկացրի զիշերը դողերի, ձիապանների, ուղապանների և աղքատների հետ միասին այդ որշում:

Մեղ զարթեցրեց ձիապան Յովհաննէսը: Դեռ բոլորովին մութ էր: Օդայում շատերը քնած էին: Մի ահազին փափառ խով պարսկաստանցի հիւանդ ուղուապան ընկել էր մէջքի վերաց զրան մօտ և տնքոտնքում էր: Դրասից լսում էր հեռացող քարւանի չափաւոր զօղանջիւնի ձայնը: Ես առաջարկեցի նրան թէ և նա օրհնելով առաւ ու խոնց:

Մութ գաշտումենք: Ձիւնապատ գետինը և մոխրագոյն երկինքը չեն որոշում իրարից: Հեռու մեր առջևից լսում են ուղուերի քարւանի բազմաթիւ զանգակների միաօրինակ զօղանջիւնը և ուղուապանների տխուր երգը: Պարսկաստանի խորքերից զիմում էր այդ քարւանը Աև ծովի ափը, ծրապիզօն:

Ահա հեռուից նշմարւում է մի սև գիծ, որի ոլոր-մոլոր պըտոցները տեղ տեղ բոլորովին կորչում են սպիտակ բլրակների ետևից. Քանի մօտենում ենք՝ աջնքան ևս գծի գէպի մեզ գարճարած ծայրը լայնանում է և երւում, որ այդ գիծը կազմած է շարժւող առանձին առանձին մարմիններից՝ բեռնաւորւած այլանդակ ուղտերից, որոնք իրար ետևից շարւած, համբաքայլ առաջ են ընթանում:

Մենք շուապով անցնում ենք այդ կենդանի գծի կողքից, բայց դեռ երկար պէտք է գնանք, որ հասնենք քարւանի առաջի ուղուին: Ահա և նա, որը գերազանցում է բոլոր ուղաերից խոր վիթխարի կերպարանքով: Նրա ահազին բրդոտ ծուռ վզից կախւած է մի մեծ զանգակ, զլուխը և վիզը զարդարւած են բրդեայ գոյնզգոյն երկար թելերով ու փունջերով, ուլունկներով ու խսունջներով: Նրա կողքին քայլում է փափախակիր աջամբ:

Արդէն լուսացել էր: Խճուղուց ձախ՝ ներքեւում երւում էր թփերով ծածկւած մի հարթ տարածութիւն, որի միջով անցնում էին մի քանի քարակ գետակներ. զոքա, երկե, նփրաաի վտակներն էին: Տեղ տեղ պատահում էինք և ողորմելի զիւղեր՝ բնակեցրած աջարցիներով, որոնք վերջին ռուս-թրքական պատերազմից յետոց դաշթել էին Բաթումի կողմերից Թիւրքիա:

Կէսօրին մօտ էր, երբ կրկին սկսեց ձիւն, որի հաստ խաւը գժւարացնում էր ձիերին ազատ քայլել: Վերջապէս հասանք Աշկալա զիւղը, որը իւլիջա դէղէի 15 նահիէն երից մէկի վարչական կենդա-

բոնն է, այսինքն՝ միւղիր է նատում այդուղից: Այդ գիւղը բաղկացած է մօտ 45 տներից, զլիսաւորապէս տաճիկներ:

Խանում մի քիչ հանգատանալով և կազդուրւելով շարունակեցինք մեր ճանապարհը, որը կամաց կամաց բարձրանում էր զեսպի սարը: Մի տեղ Սիմօնը տաճկախառն հայերէնով պատմեց ինձ, թէ ինչպէս նոյն տեղում մի երկու տարի սրանից առաջ, երեկոյեան պահուն, Տրապիզոնից էրզրում գալիս, հինգ աւազակ յարձակեցին վրան. ինքը մենակ էր, անդէն և եղած չեղածը երկու ձի էին: Աւազակները հրացանի կոթով խփեցին գլխին և նա ուշաթափ ընկաւ, և երբ մի քանի բոսկէից յետոյ աչքերը բացեց, աւազակները արդէն անյալտացել էին իրա ձիերով: Այտուղից մի քանի քայլ հեռու գտնում էր կօրդօն ը, այսինքն՝ պահականոցը, որի զափթիները կամ գողերի և աւազակների ընկերներն են և երբէք չեն հոգում նրանց բունելու, կամ ացնքան վատ են զինւած լինում, որ կարող էլ չեն այդ անել: Կողոպուած և վիրաւորւած ձիապանը գանգատներով ընկնում է էրզրումի և Տրապիզոնի զատարանները, բայց ի հարկէ ոչինչ գոհացում չի ստանում: Կրկին պէտք է աշխատէր, որ մի կերպ փող ճարի և ձիեր գնի իւր գործով պարապելու: Մինչ այդ պատմում էր՝ մենք արդէն հասել էինք «կօրդօնին», որ տաշովի քարերից շնած մի փոքրիկ տնակ էր՝ մէջը մի զափթի բնակիցրած: Աւազակները ձմեռը քիչ են դուրս գալիս մեծ ճանապարհները. նոքա գարուն ու ամառ. աշխատում են, իսկ ձմեռը մօտագայ գիւղերից մէկում վայելում են իրանց համար հանդիսաւ ու անդորր կեանք:

Ճանապարհը քանի զնում աւելի էր նեղանում: Աև ապառաժոս լեռները երկու կողմից իրար մօտենում էին և ճնշում իրանց արանքում լեռնական մի փոքրիկ գետակ, որի մի ափով խճուղին էր փորած: Մենք գտնում էինք Բոնիկապան ձորում: Երկու կողմի լեռների կոհակները կրկին իրարից սկսում էին հեռանալ և շրջանակածե պատել մի բաւական ընդարձակ լեռնադաշտակ, որի հիւսասկողմում մեր դէմ կանգնած էր իւր բուքերով սարսափելի ձիւնապատ Կօպ-դաղը և իբրև մի զիթխարի պատ բաժանում էր յայնկոյս գտնուող Բայբուրդի դէզէն յայսկոյս գտնուող Կարնոյ դաշտից կամ Օվայից: Այդ սարի վրայով ոլոր-մոլոր պտոյաներով բարձ-

րանում է խճուղին մինչև զադաթը և իջնում նոյն օձապատճա ու լորներով ձորոխի հովիսը:

Կոպ-դաղի վերայ այնքան սասատիկ է լինում բուքը, որ երբեմն ուղտերի ամբողջ քարւաններ իրանց ուղտապաններով սառում են, խեղդւում ձիւնի տակ: Անցեալ տարի 100 ուղա իրանց ուղտապաններով խեղգւել էին և սառել բուքից: Այդ իսկ պատճառով մինչև անգամ տաճկաց կառավարութիւնը հարկաւոր էր համարել այդ տարի երկու հակառակ սառուսներին էլ խաներ շինել: Այդ երկու խաները ամբողջ խճուղու վերայ միայն են, որ շինել է ինքը տէրութիւնը, և ժողովուրդը կոչում է Փաղի-Շահի խաներ: Երկումն էլ տէրութիւնը տալիս է կապալով: Տաճիկ կապալառուները օդաւում են հանգամանքից և սարսափելի կերալով կեղեքում ուղտապաններին և ճանիբողներին, երբ դոքա բուքի պատճառով հարկալրւած են լինում մի քանի օր սպասել մինչև սարը հանգարուի: Այն ժամանակ շատ մեծ գին են պահանջում խանչիք ամեն մի չնչին բանի համար: Թէ որքան ձեռնառու են այդ խաները՝ երեւում է նրանից, որ կապալագինը տարեկան 350 ոսկի է (մօտ 3200 բուքլի) մեկի համար:

Ժամի 5 էր երեկոյեան, երբ մենք հասանք սարի սառուստում միայնակ գոնւող վերոյիշեալ երկու խաներից առաջինը: Փաղի-Շահի խանը ունչով չէր տարբերուում մեր մինչև այժմ տեսած մասնաւոր մարդկանց խաներից: Մեր բաղդից էլ այդ օր իջևանել էր այդուեղ մի զամագամ, որ իւր ընտանիքը ֆուրգօնով էրզրում էր տանում, և բռնել էր խանի փոքր ի շատէ յարմար օգան: այնպէս որ մեզ տարան կոխեցին մի այնպիսի սարսափելի ծակ, որը մինչև մարդ չը տեսնի՝ չի կարող երեակացել:

* * *

Միւս առաւօտ, նոյեմբերի 23-ին՝ մութ-մութ՝ դուրս եկանք այդ խանից և սկսեցինք բարձրանալ Կոպ-դաղի վերայ: Հանապարհը ոլոր-մոլոր պատյաններով բարձրանում էր մինչև վիթխարի սարի մեջը:

Բոլոր բնութիւնը թաղւած էր ձիւնի մէջ. մութ ցուրու

գիշեր էր: Առջևից զնում էր Սիմօնը, քաշելով իւր ետևից բեռնած ձին ու ցոյց տալիս մեզ ճանապարհը, որ փորւած էր սարի լանջին, և զիզւած ձիւնի տակից հազիւ էր որոշում:

Սկսում էր լրւսանալ: Ճանապարհի ձախ կողմից սարն էր, որի լանջով բարձրանում էինք, իսկ աջ՝ միգապատ խորխորատներ և անդունդ: Մառախուղը արգելում էր տեսնել մի քանի քայլ առաջ: Հեռուից մեր զիմաց եկող կաթրչիների ձայները և նրանց ձիաների զանգակների զօդանջիւնը զրդովում էին մասախուղով և ձիւնով պատաժ այդ, կարծես, մեռած բնութեան լուութիւնը: Մեզ պատահող ձիապաններից մեր առաջնորդները հարցնում էին, թէ սարը ի՞նչպէս է, և սոսնալով պատախան՝ «Հանգիստ է»—ուրախացած առաջ էին քայլում:

Մարդ սարսափում էր նայել ճանապարհի աջ կողմը դէպի մասախուղապատ անողնդախոր ձորերը: Ահա՛ կրկին չափաւոր զօդանջիւն: Կրկին պէտք է ուրեմն անցնենք ուղտերի անվերջ շարքի կողքով: Մառախուղի միջից սկսում են նշմարւել այլանդակ կինդանիները, որոնք իրանց մսու թաթերով մի նեղ շառաւիր են բացել ճանապարհի մէջ տեղով, ձիւնի վերաց: Սիմօնը մինչեւ զօտին խրւելով ձիւնի մէջ՝ աշխատում էր անցնել այդ անվերջ շարքի կողքից, որպէս զի համբաքայլ քարւանի առաջը և դուրս գանք ազատ ճանապարհը: Հարկաւոր էր, որ մի ուղարկութեան մեր ձին կամ սայթաքւեր մէկիս ձին, որ զլորւէինք միգապատ անգունդը:

Վերջապէս հասանք կօպ-գաղի ամենաբարձր կէտը, ուր ճանապարհի կողքին գտնուում էր խանի մի աւերակ: Արդէն սկսել էինք իշնել սարից:

Հիմա շրջապատող բնութիւնը բոլորովին այլ կերպարանք ունէր:

Ձիւնապատ սարերը ծածկւած էին մշտադար թփերով, որոնք հեռուից նմանում էին սեաբուրդ ոչխարների մի ցրւած հօտի: Աւելի ներքեւ սկսում էին պատահել և ծառեր՝ զլխաւորապէս վայրի խնձորենիներ և տանձենիներ: Անդնդախոր ձորերի միջով անցնում են փրփրալով լեռնական գետակներ: Տայտու լեռների մերկ շերտաւոր կուրծքից կպած են մշտադար նոճիների ու եղևինների թփեր: Չորի մէջ զիզւած են լեռներից պոկւած ահազին ժայռեր,

որոնք լեռնական գետակների ճանապարհը կտրելով աւելի ևս զաջ-
րացնում են նրանց և նոքա փրփրալով, զոչելով խփում են լալազին
մնչիւնով ու անցնում, տանելով դէպի մայր ձորոխը իրանց գանգառ-
ները: Խոկ ձորոխը հասցնում է նրանց գանգառը Մե ծովը, որի
լեռնանման ալիքների գոռող դոչին նները անլսելի են անում խեղճի
բողոքի ձայները...

Ահա՛ և զերջին պտոյալ, որով իջանք ու հասանք Կօպ-դաշղի
այս կողմում գոնենող Փաղի-Նահի խանը, ուր ժամուկէս հանգառանու-
լուց ու կազզուրւելուց յետոյ, կրկին ճանապարհ ընկանք:

Այստեղից համարեա մինչև Տրապիզօն բոլոր ճանապարհը անց-
նում է մի խոր ձորով, որի երկու կողմից շարունակող սարերը տեղ-
տեղ իրարից հետանալով կազմում են աւելի լնդարձակ գաշտեր,
շրջապատած լեռներով: Մենք գնում ենք ձորոխի ափերով, որի հո-
վիտը քանի մօտենում ենք Բայբուրդին, այնքան լացնանում է:
Խոկ հզօր ձորոխը, ընթանալով արևելքից արևմուտք, յանկարծ մի
տեղ անկիւն է կազմում և զիմում դէպի հիւսիս. նրան հետեւում
են և երկու կողմի սարերի կոհակները: Ահա՛ նոյն խոկ ացդ անկիւ-
նում երեւում է ծառերի մի խումբ, որոնց ետեից նշմարւում են
սպիտակ և մոխրագոյն տներ հարթ կտուրներով. գա Բայբուրդի
է, հայոց Բարերդը:

Մտնելով քաղաքը՝ անցանք նրա ծուռ ու մուռ, նեղ փողոյ-
ներով ողորմելի տնակների առջեխց, և կանգնեցինք անստաշ քարե-
րից և ցեխից շինած մի երկարկանի տան դարպանների առջե. այդ
խանում պէտք է դիշերէինք: Ներքեւի յարկում զետեղւած են ա-
խուատները, խոկ փայտի սանդուղքներով բարձրանում էք վերեւի
յարկը, խանի օդան:

Բայբուրդ քաղաքի ացդ հիւրանոցի միակ սենեակում և՛ ինքը
խանչին էր քնում, և՛ նրա ծառաները, և՛ եկողը հիւրերը. նոյն
տեղ ինքնաեռն էր զրւում, զահւէ ու ճաշ պատրաստում: Այդ
փոքրիկ սենեակի երկու պատերին կից լայն թախտեր էին դրած:
Անենեակը ուներ երեք մեծ պատուհաններ ծածկւած թղթերով, ո-
րոնց մէջ աեղ-տեղ ծակել էին և ապակիի զանազան ձեւի կտորամնք-
ներ կազցրել: Երեւում էր, որ ացդ երկում ապակիի ամեն մի չնչին
կտորը մեծ զին ուներ, իբրև հազւագիւտ մի իր:

ևս լսել էի, որ հայրուրդի վիճակի առաջնորդն ոռւսահայերիս ծանօթ Ամբրոսիս վ. Խուքէնեանն է, որ մօտ տաս տարի առաջ ժողովարարել էր բաւականին մեծ գումար Թիւրքա-Հայաստանում մի երկրագործական ուսումնարան բանալու նպաստակով։ Յանկացաց տեսնել հայր սուրբին, մասձելով գուցէ մի նոր բան իմանամ բացւելիք ուսումնարանի մասին։

Մի հայ զարբին համաձայնեց ինձ տանել առաջնորդի մօտ Նրեկոյ էր։ Նեղ, մութ, ծուռ ու մուռ զաւխվայրիներով հասայ առաջնորդարանը։ Յայսնեցի ծառաչի միջոցով հայր սուրբին, որ մի ոռւսահայ ճանապարհորդ ցանկանում է մի քանի րուղի տեսնել հետը։

Նրբանցքի գուռը բացւեց և ես մտայ մի ընդարձակ սենեակ, որ լաւ տպաւորութիւն էր թողնում մարդու վերաց իւր պարզութեամբ և մաքրութեամբ։ Սպիտակ մերկ պատեր, լուսաւոր մեծ պատուհաններ, առանց ներկի մաքուր հասարակ տախտակամած, սենեակի մէջ աեղում մի մեծ գրասեղան ծածկած կանաչ մահուգով, շուրջը մի քանի նստարաններ — ահա՝ սենեակի բոլոր զարդարանքը։ Ինձ դիմաւորեց ալեղարդ զլիսով ու մօրուքով և համակրելի գէմքով մաքուր հագւած մի ասոյգ վարդապետ զա ինքն էր հայր Ամբրոսիոսը։

Մեր խօսակցութիւնը աննկատելի կերպով անցաւ երկրագործական ուսումնարանի վերայ։

Հայր սուրբը Խուսաստանից վերագառնալով՝ մտադիր է եղած Կարնոյ խսկ գաւառում բանալիւր զպրոցը, աչքի առաջ ունենալով նախ՝ որ այդ գաւառը հայաշատ է և նրա ժողովրդի զլիսաւոր զբաղմունքը երկրագործութիւնն է, երկրորդ՝ որ գտնւում է կանոնաւոր ճանապարհի վերաց, այնպէս որ Տրապիզոնով Եւրոպացից կարելի էր հարկաւոր դործիքները և ուսումնարանուկան նպաստները հեշտութեամբ ստանալ։ Հայր Խուքէնեանը ինքրել էր այն ժամանակւաց Կարնոյ առաջնորդ Օրմանեան սրբազնից յանձնել իւր վիճակի վանքերից մինի վանահայրութիւնը իրան, որպէս զի բաց անի այնտեղ իւր տեսչութեան ներքոյ երկրագործական ուսումնարանը և, իրեւթէ, ոչ Օրմանեանը, ոչ էլ Կարնոյ աղքացին վարչութեան անդամները համաձայնել են նրա սպազմաններին։ Այն ժամանակ հ. Ամբրոսիոսը փորձում է Խուշի ս. Կարապետում բանալ, բաց տեղն ու տեղը ծանօթանալով հանդամանքների հետ, զալիս է այն եղբակա-

ցութեան, որ անհնարին է այնտեղ բանալ. նախ՝ որովհետեւ այդ վանքի կոպիտ ու բիրս ուսումնառեաց և կարգ ու կանոնի հնազանդւելու անսովոր վանականները բոլոր ջանքերով դէմ կը լինէին մի այդպիսի ուսումնարանի և վանահօր, իսկ երկրորդ՝ ապագայ դարոցի վար ու ցանքերը ու հօտերը ապահով չէին լինի քըրդերի հրոսակների յարձակումներից: Իսկ Վանաց կողմերում չէր փորձել, որովհետեւ Հայրիկը ունէր բացած Վարագայ վանքում մի նոյնատեսակ գալրոց, որը փակւած է այժմ:

Այսպէս ահա՛ բուն Հայաստանի սրատում նա տեղ չը դանելով իւր ուսումնարանի համար, մտածում է զօնէ Հայաստանի սահմանի վերայ, Բայբուրդի վիճակում, իրագործել իւր փափառը: Ընուըրւում է առաջնորդ այդ վիճակի, որի վանքերից մէկում ժողովրդի օգնութեամբ հիմքն է զնուում ուսումնարանի շինութեան: Բաց Պօլսի Ազգացին Ժողովը՝ հազար ու մի մանրակրկիա բացարութիւնների, զրաւոր զեկուցումների, ծրագիրների ու այլ պօլսեցինների գործալքարութեան յատուկ զիւանական խորախորհուրդ գորութիւններուի ետեւից ընկած՝ այնքան տանում-բերում է հայր սուրբին, որ թէ նոր սկած շինութիւնը բայքայւում է, և թէ ապագայ աշակերտների համար Նիմնից-Նօվգորոդի տօնավաճառից բերած բլուզացուները ու զիւարկները գողացւում են, փողերը ձիւնի պէս հալւում... մնացածով մնում է արդէն աւելի փոքր ծրագրով մի ուսումնարան բանալ...

Յանկանալով յաջողութիւն սուրբ հօր՝ ես դարբինի հետ վերադարձ խանը, ուր կաթրչինները, Մ. աղան, խանչին ու մի այլ տաճիկ նստած զրից էին անում:

Պատուհանների թղթերի ծակերի մէջ զրած ապակիի կտորները թոյլ էին տալիս և քաղաքի տեսարանով հետաքրքրւել: Ճորտիսի միւս ափին բարձրացող սարի զագաթին երևում էին հնագարեան բերդի աւերակներ:

Տաճիկներից մինը ցոյց տալով այդ աւերակները հարցրեց ինձ՝ արդեօք չե՞մ կարող գիր ան ել և գտնել այն ոսկեայ գանձերը, որոնք թագնւած են այդ աւերակների տակ. առանց գիր անելու ով գնում է գլեերը նրան յափշտակում են ու անյացտացնում:

Ես ողասասխանեցի. — Եթէ կարծումէք, որ գիր անելով կարելի

է գտնել այդ գանձերը, ինչո՞ւ այսքան ժամանակ չեն փորձել ձեր տաճիկ խօջաները ու մօլլանները, որոնք շատ իմաստուն են այդ տեսակ բաներում:

—Փորձել են՝ չի յաջողւել. դու աւելի ես կարգացած, կախարդութիւններ ու պահպանական աւելի կ'իմանաս, եղաւ պատասխանը:

Խօսակցութիւններից իմացայ, որ Բայրուրդ քաղաքը ունի մօտ 3000 տուն բնակիչ, որոնցից միայն 500 տուն հայ են, մնացած՝ տաճիկ և շատ քիչ թւով յոյներ: Հայերը ունին մի երկուու վարժարան՝ մօտ 400 աշակերտներով: Քաղաքիս բոլոր արհեստները հայերի ձեռքում են: Բայրուրդ զէզէն, Խապիրի (Բայրուրդից հիւսիսարևելք) և երկու այլ աննշան զէզէներ (Կեալկիթ և Շեշրան՝ Բայրուրդից արևմուտք) միասին կազմում են Երզրումի վիլայէթի Բայրուրդ սանջակը կամ միւթեսարի վիլայէթ: Այս վիճակում հայերի թիւը տաճիկների հետ համեմատած քիչ է: Ամբողջ վիճակում հայաբնակ գիւղերի թիւը հազիւ լինի 40: Սակայն բազմաթիւ հնութիւնները ցոյց են տալիս, որ նախնի գարերում հայերը բաւական տարածւած էին այս կողմերում՝ հին Տարձր-Հայքի հիւսիսային սահմաններում և Խաղաեաց աշխարհում: Այս կողմերից դէպի հիւսիս քանի գնում է՝ զօրանում՝ է տաճիկ, յոյն ու լազ ազգաբնակութիւնը և նւազում հայերի թիւը, որոնք պատահում են այսուհետեւ համարեա միմիայն քաղաքներում: Երզրումից հարաւ, ընդհակառակը, տաճիկները նւազում են և պատահում են քաղաքներում, իսկ հայերի ու քրդերի թիւը ստւարանում է:

Զանձրանալով խօսակցութիւնից, ես քաշւեցի մի անկիւն և պառկեցի հանգստանալու: Յանկարծ զուռը բացւեց և օգան մտան երեք տաճիկ զինւորականներ խրոխտ քայլածքով ու գետնից քաշւող սրերի աղմկալի շառաչիւնով: Տոլորը, բացի ինձնից, վեր թռան իրանց տեղերիցը և մեծ յարգանքով բարեեցին նրանց: Երեք ասկեարա (զինւորական) էֆէնդիներից մէկը նստեց այն թախտի վերաց, ուր ես էի պառկել: Սիւների ստուերները ծածկում էին գլուխս և միայն երեսում էին ոտքերիս երկայն կօշիկները, որոնց մօտ նստել էր խրոխտ տաճիկը: Նրա պատւասիրութիւնը վիրաւորւած էր իմ կօշիկներիս տեսքից. բարձրացրեց թռորը ու ոտներիս կացնելով կողիտ կերպով նկատեց.

— Քաշի՛ր ոտներդ, ի՞նչ ես ձգւել. չե՞ս տէսնում ո՞վ է առաջիկ նստած:

Ես չը շարժւեցի տեղից և, զապելով բարկութիւնս, նկատեցի.

— Տեսնում եմ և չեմ խանգարում նստել: Զը համարձակւելք միւս անգամ ինձ զիվշել: Խանի օդան ընդհանուրի է. այս անկիւնի համար ես՝ վճարում եմ և նու իմն է. ես կարող եմ պառկել և հանգատանալ, որքան քէփս է: Աչ միայն գուշ, այլ և փաշան իրաւունք չ'ունի պահանջել, որ ես նրա ներս գալով ցատկեմ՝ տեղիցս ու երկրպագութիւն տամ. այդ կարող էք պահանջել նրանից, ով սովոր է կատարել այդ տեսակ պահանջներ: Ես ոչ ոքի չեմ խանգարում և թողլ չեմ տալ ինձ ևս անհանգստացնել:

Աանեցին լեզապատառ եղած աղաջում էր կատարել տաճկի հրամանը. մի՞թէ կարելի է տաճկի, այն էլ ասկեարի պահանջին ընդդիմանալ: Ես խնդրեցի իմ մասին չը մոտածել, և պահպանեցի իմ առաջւայ զիրքը:

— Ես ասկեար եմ, իմ առջեւ չի կարելի ոտները ձգել, կրկնեց բարկացած տաճիկը, ձեռքերով բռնելով ու թափահարելով կօշիկ ներս:

Ես այլ ես չը կարողացայ զապել կատաղութիւնս, ցատկեցի տեղից և հանեցի բեվոլվերներս: Այդ շարժումը, կատաղութիւնից խեղգւող ձայնս, փափախս ու օտար երկրացու հագուստս և սպառնալիքս՝ իսկոյն հեռագրել էրզրում ու ուսաց հիւպատոսին, շւարցրին ինքնավտահ տանապետներին:

Այլ ես իմ բոլոր ծանր խօսքերին նրանք չեն պատասխանում: Մի քանի բոսկից յետոյ հեռացան, կամչելով խանչուն, որը վերաբանալով օդան յարգանքով յացանեց ինձ, որ ասկեարները ներող զութիւն են խնդրում, չը գիտէին, որ գուշ այն մարդն էք, որի մասին երկու օր առաջ էրզրումի պօլիցիացից այստեղ հեռագիր էր ստացւած՝ տեղեկացնել իրանց ու ուսատանցի... (անունս) տեղ հանելը և ե՞րբ, ո՞ւր ճանապարհ ընկնելլ»:

Վանեցի վաճառականնը չէր հաւատում, որ ամեն տեղ, բայց Տաճկատանից, մարդ իրաւունք ունի իւր անձը ու պատիւը պաշտպանելու: Նա զլուխը շարժում էր, երբ ասում էի թէ՛ ոչ միայն մի որ և է տասնապիտ, այլ նոյն իսկ մի զեներալ նուսիացում թողլ չէ

տալ իրան մի այնպիսի լիրք վարժունք պօստի կայարանում, որ կարելի է նմանեցնել իրանց խաներին: Ոչ մի ծառայող չի ել մոռածիլ սլահանջելու, որ, եթք ինքը մոնում է պօստի կայարանի սենեակը, բոլորը վեր կենան իրանց տեղերից և յարդանքով ողջունեն իրան:—«Զէ, եղբա՛յր, մենք չենք կարայ առ տեսակ բաներ ընել. տաճկահայտատակը որ կայ՝ ոչ միայն ամեն մի միւզիրի, այլ ամենավերջին տաճկի ճորտն է: Դուք կարող եք ձեզ ազատ զգալ, ունենալով ձեզ օգնական ու պաշտպան ուու հիւպատոսը, խակ մենք ո՞վ ունինք:» Եւ իւեղձը արտասուքը աչքերին պատմեց թէ, ո'րպիսի նեղութեան մէջ է Վանի ժողովուրդը: Կնքն ել մէկը այն հազարներից: Նրա 16 տարեկան եղբօրք ուղարկել են Ափրիփիի խորքերը յաւ իսենական աքսոր: Նրա ծեր Հօրը Պօլսից են հեռացրել, այդպիսով մէջ հարւած հասցնելով իրանց առա տուրին և հիմա ինքը, որ ականնջների հիւանդութեան պահանառով 15 տարի պանդխտութիւն էր քաշել ստիպւած է թողնել տուն, երեխայք և զիմել Պօլս՝ Հօր հեռանալուց խանդարւած գործերը զլուխ բերելու:

* * *

Եեռ. լոյսը չը բացւած՝ թողինք քնած քաղաքը:

Այցնում էինք լայնածաւալ ձիւնապատ լեռնագաշտով, որ ծածկած էր նոր նասած ձիւնի փափուկ առանով: Տեղ տեղ երեւում էին հայոց զիւղեր: Ահա՝ մենք անցնում ենք նրանցից մէկի կողքով. զա Վարզաղան գիւղն է: Տեսէ՛ք այն փառահեղ աւերակները, որ նայում են իրանց կիսակործան բարձրութիւնից ձեզ վերաց. զոքա հին հայոց փառաւոր վանքերի ու եկեղեցիների բեկորներն են: Նայէ՛ք այժմ նրա կողքին խմբւած հայ գիւղացիների իրճիթներին. ոչ եկեղեցի էք նշմարում, ոչ ել փայտեայ անշուք զանդակատան անգամ:

Կէսօրին բարձրացաւ սաստիկ բուք, որից ապաստանւեցինք, հաննելով ամացի դաշտի մէջ տեղում միայնակ կուչ եկած մի ողորմելի խան, որի տեսքը զաղագիւար էր տալիս թէ ինչպէս էին կարող նախագատմական դարերում մարդանման կապիկներից իրանց զարգացումով ոչ այնքան հեռու մարդիկ ցրտից պատազարւել:

Մի քանի ժամ ևս՝ և այդ տաղտկալի ճանապարհը կը վերջանայ: Այժմ մենք գնում ենք մի նեղ ձորով, որի միջով տերեւազուրկ ուռենիների թշիերի տակից, քարերի վրացով ցատկուելով վազում է կարկաչահոս սրբնթաց մի վտակ: Չորի երկու կողմից բարձրանում են ու ապառաժուալ լեռներ, կրելով իրանց մոաց ալեզարդ կուրծքերին կպած մշտագալար թզուկ եղեխներ, վայրի խնձորենիներ ու տանձնիներ: Աջ կողմի սարերի լանջով փորւած է ճանապարհը:

Երեկոյեան հասանք ճանապարհի կողքին գտնող մի խան, ուր և իջևանեցինք: Տաճկաստանի ճանապարհների խաները լուսաբանող երեսով մերից մինն են, եթէ մէկը այնքան կոյց լինի, որ չ'իմանայ ուրիշ երեսով մերից այդ երկրի յետընկածութիւնը և տնտեսական սարսափելի վիճակը:

Ես հաւատացած եմ, որ քաղաքակիրթ երկիրների պատւելի հաւերնու աքաղաղները սաստիկ տրոտունչ և բողոք կը բարձրացնեին, եթէ նրանց փակէին ացնպիսի նկուղում, որպիսին էր այս խանի օդան: Կոելով ձեր վիզը մտնում էք փոքրիկ զռնից մի նեղ, ցած կաւեաց արկղիկ, առանց ամենաչշշին անգամ ծակի դէպի լրյա աշխարհը: Պատերից մէկում մխում է առանց ապակիի փոքրիկ նեւթի մի լամպա: Փոքրիկ օդայի ողը կարծես շիկացած լինի վառւած սօբայից: Դժւարութեամբ և կրծքի ու զլիսի սաստիկ ցաւով կարողանում է անսովոր մարդը շունչ քաշել: Խոնաւ գետնին տարածւած էին 6—7 ճանափորդներ: Նրանք սովոր են այդ բոլորին, դուցէ չեն էլ երեսկացում, որ Ալլահի սուեղծած աշխարհում ազավէս էլ է կարելի ապրել: Տեսէ՞ք ինչպէս զարմացած զարմացած նայում են ինձ վերայ նոքա, երբ ես իմ ճանապարհորդական ամանովս ջուր եմ տաքացնել տալիս և թէ պատրաստում:

Աղքատ, ողորմելի ճանափորդներից մէկը մի համակրելի հայ երիտասարդ էր, նայբուրդի շրջակաց զիւղերի մէկից: Նա հաջերէն վաս զիտէր, ինչպէս առհասարակ այդ կողմի կիսաստաճկացած հայերը: Նա վերագառնում էր Պօլսից: Երեք տարի է արդէն ինչպէս թողել է իւր նորապսակ հարսին և դիմել սպանդիստութեան, նոխ հաթում, ապա Պօլիս, հազար ու մի զրկանքներով մի քանի փարա վաստիկը: Նա հիմա վերադառնում է իւր ընտանիքը մի քանի ամիս հանդիսու առնելու, որպէս զի կրկին պանդիստութեան ցուովը

տեղիցը շարժիք եւ միայն նա չէ այդպէս, տասնեակ հազարաւորներ են հայ պանդուխտները։ Հողի սլակասութիւնը կամ երկրի անտեսական յառաջադիմութեան պահանջը չէ, որ մզում է այդ թշւառների խմբերը իրանց մայր հողից գուրս, օտար աշխարհներ։ Երկրիս անկարգ դրութիւնը մեռցրել է նրա անտեսական կեանքը և այդ անկանոն, քաջքացած վիճակի արգասիքն է այդ պանդխտութիւնը։ Նոյն երկրում գործ չը կայ, ճանապարհներ չը կան, արտահանութիւն չը կայ, իսկ տուրքեր ու հարկեր՝ օր աւուր բազմանում են, պարտքերը խեղդում։ Ում համար յանի, հնձի գիւղացին, երբ նրա բերքերը գնող չը կայ, նրանց արտահաններու միջոց չը կայ. փշացնողին պատիժ չը կայ, լիրը յափշտակաղին արգելք չը կայ։ Ում համար աշխատէ, կատարելագործէ արհեստաւորը, երբ նրա պատրաստածին փող տող չը կայ։ Խնչպէս չը դիմէ հեռու աշխարհներ բանւորը, երբ իւր երկրում գործ չը կայ, գործարան չը կայ։ Որտեղից վեցցնի հարկերի համար փող, երբ իւր երկրում փող աշխատելու աղբիւր չը կայ։

Իրանք տաճիկները անընդունակ են բարւոքելու այդ երկրի դրութիւնը, որովհետեւ այդ միւնոյն է, որ պահանջենք նեղրից թէ՝ ինչո՞ւ երեսիդ մորթը սպիտակ չի։ Իսկ ինչ վերաբերում է գերմանացի կամ անդլիացի կապիտալիստների ձեռնարկութիւններին Փոքր-Ասիայում, — այդ բոլորից համարեա ոչինչ օգուտ տեղական ազգաբնակութեան, շահնողը նոյն գերմանացին կամ անդլիացին կը լինի, որոնք Ասիայում էլ պիտի վայելեն իրանց սեպհական օրէնքների հովանաւորութիւնը։ Նոքա իրանց երկրում կը տունան այն գիտութիւնը ու պատրաստութիւնները, որ հարկաւոր են այստեղի կեանքի մրցման համար. և այն ժամանակ նոյս փողի, գիտութեան ու անձնական ապահովութեան առջև ի՞նչ են աղքատ, տղէա, օրէնքի ու արդարութեան պաշտպանութիւնից զուրկ, կամացականութեան մատնւած տեղացիները, որ շատ շուտ կը դառնանբեռնակիր գրաստներ եւրոպացիների համար, միայն ոչ օտար, այլ սեպհական երկրում։

Դիշերը անցկացրի այդ անտանելի քնի մէջ, որ իրար վրաց թափել էին զիշերելու հաւաքւած հեռու տեղերից ճանփորդներ և մուրացկաններ։ Նրանցից ամեն մէկը հանում էր իւր տրեխները ու

գուլպաները ու չորացնում, և առանց այն էլ ապականւած օդը դժո-
խալին դարձնում: Ես իբրև փրկութեան ապասում էի այն բողեին,
երբ լոյս աշխարհ դուրս կը գամ այդ դժոխաքից:

Նոյեմբերի 25-ին գեռ մուժը պատած էր այդ ահռելի ձորը,
երբ մենք արդէն ձիերի վերայ նստած ճանապարհ էինք գնում:

Կաթրչի Յովհաննէսի ասելով, Բայրութի կողմերի հայերը շատ
են անարգւում մոլեռանդ տաճիկներից:

—Իսկ ձեզ, լազ հայերիդ, գեավուր չե՞ն ասում, հարցրի ես:

—Մեզնից վախենում են: Մեր կանայք նոցա տղամարդկանցից
սրտոտ են: —Եւ նա պատմեց ինչպէս մի հայ լազ կին տապարով սպա-
նել էր մի քանի տաճիկ գողերին, որոնք զիշերը մտել էին նրա
տունը: «Մեր կողմի ուռումները (յոցն), շարունակեց նա, շատ
վախոտ են: Նրանք պատերազմից յետոյ շատ գաղթեցին Ռուսիա՝
Կարսի կողմեր»:

—Իսկ դու ինչո՞ւ էիր գնացել Ռուսիա, հարցրեցի նրան:

—Ստակ վաստկելու: Կերչի մօտ կապալով հող էի վերցնում,
դեսեատինին վճարելով մօտ 25 բռքլի, վարում էի ցորեան, դարի,
կաղամբ, գետնախնձոր և ստացած բերքերը տեղն ու տեղը վաճա-
ռում:

—Ինչո՞ւ, մի՞թէ Տաճկաստանում հող չը կայ:

—Հող՝ որքան կամիս, միայն բերքերը գնող չը կայ, ժողովուրդը
աղքատ է, փող չ'ունի, առուտուր չը կայ, դործ չը կայ:

—Նատե՞րն են ձեզանից գնում Ռուսիա:

—Այնտեղի ծովեղբեայ բոլոր քաղաքներում լիքն են մե-
րոնք: Շատերն չեն էլ վերադառնում, այնուեղ պսակւում են ռուս
աղջիկների վերայ ու մնում: Ե՛հ, ես էլ սկի չէի վերադառնալ, եթէ
կին, երեխաներ չ'ունենայի: Մի թութուն ցանել ունեինք՝ էն էլ
հիմա Ռեժիի ձեռքն է անցել:

Խօսքը Փրանսիական Ռեժի ընկերութեան մասին էր, որ Թիւր-
քիացւում ծխախտոի մենաշնորհում (մօնօպօլի) է ստացել. ոչ ոք, բա-
ցի այդ ընկերութեան, թութուն չի կարող պատրաստել և ծախել:

Ռեժին ունի մաքսանենգներին (կօնտրաբանդիստ) բռնելու հա-
մար մի ամբողջ կաղմակերպւած խումբ: Յաճախ է պատահում
մաքսանենգ լազերի ու Ռեժիի զինւած մարդկանց մէջ արիւնահեղ

ընդհարումներ։ Այդ մենաշնորհումը ահագին նիւթական վնաս հասցրեց Թիւրքիայի ժողովրդին։

Անկատելի կերպով լուսացել էր. մենք դեռ խոր ձորով էինք լնթանում։ Երկու կողմից սեպացած էին ահոելի բարձր ապառաժոս լեռներ։ Զորի վերջում, սարի գագաթին սրաթե արծւի թրուիչին միայն մատչելի տեղում, աջ կողմից, բերդի աւերակ էր երեւում։ Ֆողովուրդը նրան կոչում է Գեօրօղլու բերդ, տալով իւր սիրած հերոսի անունը ամեն մի անառիկ բերդին։ Իւր բարձր զիրքով նա իշխում էր ամբողջ ձորի վերայ և իբրև մի պահապան հսկում էր այն ձորի մուտքը, որով մտնում էինք Հայաստանից հին Պոնտոսը, — այժմեան Տրավիզոնի վիլայեթը։

(Կը շալունակւի)

ԱՔՍՈՐԻԱԾԻ ԶԱԻԱԿԸ

(Վ. Ի. ԱԼԱԽԵԱՆՍԿՈՒՑ)

Կ. Խ ր ա ս ի լ ն ի կ ե ա ն ց ի

—Հայրիկ, երբեմն, կարծես երազում,
Որպէս միգապատ ամպերի միջով,
Ինձ մի հրաշալի երկիր է փալլում
Իւր կախարդական գեղեցկութիւնով:

Բայց մեր չորս կողմը պատել է ձիւնը,
Կանաչ են մնացել միմիայն եղևնիք...
Այստեղ ամբողջ օրը փչում է բուքը
Եւ կատաղաբար մռնչում մրբիկ: —

Այստեղ մեր հոգին ցրտանում է միշտ,
Էլ չ'ունինք մենք ոյժ համբերել սրան,
Այստեղ տիրում է լռութիւն, մահ, վիշտ,
Այստեղ գերեզմանը — է կեանքի նշան...

Իսկ այնտեղ, հայրիկ, և՛ լոլս է և՛ տաք,
Ծաղկունք, անտառներ, կարկաչուն գետակ.
Բայց միթէ տեսածս ցնորք է, հայրիկ,
Ո՞ւր է այն հեռու երկիրը գեղեցիկ:

—Լուռ կաց, դու լուռ կաց, իմ քաղցրիկ մանուկ,
Բաղդի ցնորքը տներ մոռացութեան —

Հազիւ կը ժպտայ նա քեզ մի վայրկեան,
Յետքից թողնելով յաւէրժ տրտոսուք:

Անդառնալի է, հեռան այն աշխարհ,
Այնտեղ ճանապարհ չը կալ մեզ համար.
Աքսորանքիդ հետ հաշտւիր, սիրելի՛ս,
Սրտիդ յուզմունքը մեղմացնւր, որդի՛ս:

Ցնորք չէ միայն ինչ որ տեսնում ես,
Այն հայրենիքդ է քո կարօտագին,
Որն այնպէս չքնաղ ու գեղեցկապէս
Ցաճախ փալլում է աչքիդ առաջին:

—Հայրիկ, տես, նա ինձ կանչում է իւր մօտ,
Թող գնամ շուտով՝ նա ինձ է կարօտ.—
Ինձ այստեղ ցուրտ է, իսկ այնտեղ գարուն,
Այնտեղ արևը տաք է և փալլուն:

Այնտեղ ինձ մէկը կանչում է հեռուից,
Ուրւականի պէս նա վեր է կենում.—
Հայրիկ, այն ով է մայրենի երկրից,
Որ ինձ դէպ' իրան ձեռքով է անում:

Տես, նա կտնգնած է ծաղիկների մէջ,
Դէմքը թափալի, տխուր ու գունատ,—
Կարծես թէ վաղուց իմ մտքերի մէջ
Նրան տեսել եմ... հայր իմ գթառատ:

Ահա նա կրկին կանչում է հեռուից,
Կանչում է, կանչում—և դադար առնում...
Հայրիկ, այն ով է մայրենի երկրից,
Որ ինձ դէպ' իրան ձեռքով է անում:

—Քնիր, սիրելի՛ս, քնիր, իմ զաւակ,
Այն քեզ ցնորքն է գրգռում, յուզում.
Զարթնել է նախկին օրւան լիշտակ,
Այն է քեզ այնպէս կանչում, հրապուրում,

—Օրն արդէն մթնեց ցուրտ մառախուղում,
Ո՞վ է հրապուրում ինձ այն հեռուից.
Արգեօք մայրս չէ, որ ինձ կանչում է,
Խորը քուն մտած սառ գերեզմանից:

—Այո՛, նա մայրս է կանչում... Ների՛ր,
Նա ինձ կանչում է այնպէս ժպտալից...
Գնամ նորա մօտ, այն հեռու երկիր
Մինչ արշալուսը կը ծագէ նորից:

Երազումս հայրենիք կը թռչեմ,
Այնտեղ կ'անցնեմ ամբողջ գիշերներ,
Իսկ ցերեկը, հայր, քեզ հետ կը լինեմ...
Չեզ չեմ մռաանայ, իմ հարազատնե՛ր...

Բագու. 1883 Ը.:

Բ Ղ Գ Ե

Պ Ե Ր Ճ Պ Ա Ռ Ո Շ Ե Ս Ն Ց Ւ

Նուէր մեծ. բժշկապետ Յովհաննէս Վասովարեանցին:

Ա.

Բ Ո Շ Ի Տ Ղ Ա Յ

Կարբեցի է կօլոտ (չարճակասով) Բղդէն: Նա այժմ կամ ծերացած, ոտք ու ձեռքից ընկած, մի գիւղի կամ քաղաքի խուլ անկիւնում կեանքի հետ կոխւս է տալիս, հողէառի անունից օրն ի բուն սարսափի մէջ է, կամ թէ աև հողի միջին որդ ու ժժմունքների կերակուր է եղել, եօթը պատան է մաշել, մարդկանց ու Աստուծոյ յիշողութիւնից իսպառ մոռացուել՝ չիքերի կարգն է անցել:

Մեր պատմութիւնը սկիզբն է առնում Բղդէի պատանեկական թարմ ու գէնճ տարիներից:

Այդ այն անցած, մտահան եղած ժամանակներն են, երբ հազար տեղից գուրչ ու փալասով կարկատած խուրջինն ուսը ձգած՝ ամեն մի հական մէջ հինգ չուրուկ շահու (Եօթը Հողէն) մանրավաճառի ապրանք դրած՝ գիւղական երեխայի ձեռքով կերտուած խաղաղնդակի նման գլղի-զլոր զալով՝ գիւղերն էր ընկնում ու չարչութիւն անում:

Նատ բազմատեսակ ու բարդ չեին Բղդէի ապրանքի քանակն ու տեսակները. մի երկու թօփ ասեղ, մի քանի քորոց, մատնոց, կոճակներ, կերակրեղէնի համեմունք՝ զիրա, սև պղպեղ, մետաքսի թել,

մի քանի դազ աժանագին ժապաւէն ու երիզ, գեղջուկ պառաւների՝ անսարութեան անհրաժեշտ պիտոչներ, ծամոն, ծծմբապարոյց, աբեթ, հրահան, շանթաքար և այլ այսպիսի անսուտութեան համար կարևոր իրեղներն էին նորա հարատութիւնն և յոյս ու ապաւէնը:

Երկու, երեք տարի նղենն ինքն էր միայնակ թէ ապրանք առնում, թէ ծախում, թէ գրաստի պաշտօն կատարում. վերջը բաղդը խաղաց նորա հետ, կատակ չ'արեց, սրումն սիրեց ու մի համեստ, ծանրաբարոյ, միամիտ, գլուխը միշտ կախ, սակաւապէտ ընկեր էլ շնորհեց, խուրջինը նղենի ուսից վերցրեց, նղենի բեռը թեթևացրեց, նղենին օգնութիւն ուղարկեց:

Մի մարդի հետ որ բաղդը հաշտուի, ամեն կողմից բարութիւններն սկզբումը անձրւից գոյացած սարալանջերով վազող քչքչան վտակների նման կը տեղան, վերջը վտակները գոչգոշան գետերի կը փոխուին ու մարդի տուն ու տեղը, քունջ ու պուճախը, ծոցն ու գրաւանը կը լցնէն:

Ի հարկէ, բաղդաւոր էր նղենն, որ մի երեկոյ՝ գիւղերից վերադառնալիս՝ Կարբի գիւղի մօտերքը գնչուների (Յօշայ, Յեգան) կարաւաննրան հանդիպեց և մի շատ յաջող փոխարինութիւն առաջարկեց:

Բօշայի աև իշուկը հիւանդացել էր, ճանապարհի մէջ տեղն երկար ու ձիգ չորս ոտքը չարդախ էր արել, տիրոջ սիրտն իւր դնչի պէս սեւցըել. ոչ ծեծ ու մահակի, ոչ քացու ու հայհոյանքի էր անկաջ զնում, ոչ բարկութիւն ու ազաշաւք էր բանի տեղ հաշուում և ոչ տեղիցը շարժուել էր ուզում:

Մոլորուել էին գնչուները. ամակտար, աշխատաւոր իշուկ էր, սպանել, կաշին քերթել՝ ձեռքները չէր զօրում, թողալ, հեռանալ՝ ափաս էին գալիս:

Որտեղից որտեղ՝ Արագածի իրիգնապահի գիծ քամին պտտեց, մեր նղենին գնչուների կարաւանին դէմ բերեց:

— Խնչ տաս, բօշա՛, յանկարծ զուրս թռաւ նղենի բերանից:

— Խ՞նչ կը տաս, ջանի՛կս:

— Երկու սիլլա (տղանէ), մի քացի. խեղճ անասունը, որտեղ որ է, շունչը կը փէի, գիշերս քաղցած գայլերի ու բուրդը թափած աղուէների փորերը կը կշտացնի, լաւն էն չի՝ խուրջնումն գտնուած ձիրանի չիրը վերցնեք, կեանք ու արել ձեզ բաշխող, բազմաչար-

շար հայվանին ինձ թռղնէք, շալակեմ, տանեմ մեր գոմումը վէր քցեմ, կը սատկի՝ կաշին ինձ համար արեխ կ'անեմ, կը հազնեմ, ձեզ կ'օրհնեմ. կ'ապրի՝ կժերը միջքին կը զնեմ, զիւղումը ջուր չ'եղած ժամանակը կ'երթամ ձորիցը ջուր կը բերեմ, ինքս էլ կը լսեմ, ուրիշի սիրոն էլ կը հովացնեմ, ձեզ էլ վարձք կը լինի, ինձ էլ:

Գողն ի՞նչ կ'ուզի՝ մութը զիշեր. միրը խախալի մէջ դարսակուեց, գնչուների բորիկ երեխաների սիրոն ուրախացաւ, Բղդէն էլ գրասոփ տէր դարձաւ:

Էշն էլ խելք ու խմասութիւն է ունեցել. հէնց որ Բղդէի մօր գոգնոցն առջելը փոռուեց, գարու հոտը քթովը դիպաւ, դիրքը փոխեց, իրան ուզգեց, գարին կրտմըրտալ սկսեց, քիչ քիչ տեղիցը կանգնեց, գարին բոլորը մաքրազարդեց, Բղդէի հետ եղբայրանալն աւելի ձեռնոտու համարեց, քան թէ գնչուների չարաճճի մանուկների տուած Յուդայի տանջանքը:

—Մէկ չը լինիք, երկու լինիք, իմ սիրելի բօշի տղա՛յ այս անսունը առեց իշուկին Բղդէն ու խուրջնը նորա պարսականութիւնը շինեց:

—Զօ՛շ հա չօ՛շ, չո՛ւ հա չո՛ւ անելով անուհետե՛ սիրոն ուրախ, քէֆը քոք, գամազը չաղ, գէմքը զուարթ՝ առաջ էր անում Բղդէն բօշի տղին ու ինքը նորա քամակից, զերեմաստի ծառից կտրած մահակը ձեռքին, լուսածէզին զուրս էր գալիս Կարբուց, մինչև իրիկուն թափառում էր Կարբու շրջակայ զիւղերումը, արևմտոցին մտմտալով, փթփթալով, Քեօրօղութիւն լսելի ճայնով գունդունալով, երգելով, դառնում էր Կարբի՝ աչքը ճամփին սպասող իւր պառաւ Սալբի մօրն ուրախացնում, նորա եփած ձաւարի վոխիլ (աբգանակ) լսփշում, փորը կշուացնում, իւր մարմնին էլ հանգիստ տալի, բօշի տղի ոտներին էլ:

Կատաղի էին այն ժամանակուաց շները. օտարական պանդուխոր մեծ զժուարութիւնով էր կարողանում անցկենալ արևելեան աղջերին յատուկ զիւղական նեղ փողոցներով, փոքր էր մնում զազաները ծուիկ ծուիկ անէին. ձիաւորին ձիուց էին ներքեւ քարշում, եթէ զիւղացիներից օղնութիւնն ուշ էր հասնում. իսկ կօլոս Բղդէի հետ բոլոր սարսափելի դամբոները հաշտ էին:

Հաւատարիմ տնպահները, ճաշուաց շոքին, բակի դրան շէմքի

առաջին մի կողքի ձգուած, երբ Բղդէի խոսուա, հադադային ձայնն առնուամ էին, բրդոս, կեռիկ պոչերն երեք անգամ զետնովն էին տալիս, ողջունելու նման մի շարժուամ էին անուամ ու նորից անձնատուր լինուամ բովիւական հանգատութեան։ Պառւուկ տատի օրօրի նման անոյց էր հնչուամ կատաղի օտարատեացների ականջին կօլոս Բղդէի սովորական հետեւեալ մեղեղին։

—Խանում-բաջինե՛ր, թել առէ՛ք, ասեղ առէ՛ք, ձութ ու ծամոն առէ՛ք, քիշմիշ ու նօխուտ առէ՛ք, ձեր պատուածները կարկատեցէ՛ք, ձեր ակրաների (տպաճ) ջաղացքը բանեցրէ՛ք, ձեր կտուցը քաղցրացրէ՛ք, ձեր ճժուկ-պժուկի (հանու-էներ) պղղոցն ու վեգոցը կարեցէ՛ք։ Ազազ աղջիկնե՛ր, օտարի ապրանքնե՛ր, աչքի սուրմա (բե՛ռ) առէ՛ք, գեղազրիք առէ՛ք, հիլ ու միխակով բերաններդ անուշացրէ՛ք, ջուր արէ՛ք՝ զլիներդ ու գոշներդ քսեցէ՛ք, ջահէլ կարիճների սիրուգողացէ՛ք, վիզը փաթաթուեցէ՛ք, զլիներուն ցաւ, թիկունքներուն բեռ զարձէ՛ք։ Տօ՛, սատանի ձազե՛ր, անդնջուամ ճժե՛ր, գուք իմ անքաժան պոշուկնե՛ր, ինձնէ հեռացէ՛ք, ձեր մասներու (տպաճ), ձեր աղեներու (ժոյք) զլուխը տարէ՛ք, քաղցր քիշմիշ տոսկակը ստարսկեցէ՛ք (բամբարէնել), ծամոնիս լիքը պարկը դատարկեցէ՛ք։ աօ՛ գեւի լակոսնե՛ր, աներես սրթինե՛ր, ի՞նչ էք չորս կողման շարուել, ծամիախս արգելուամ, քէլէ՛ք (գնացէն) չիր, փշատ, բամբակ, ալուր, բրինձ դողացէ՛ք, բերէք խուրջինս տկեցէ՛ք, ծամոն ծամեցէ՛ք։

—Դէ՛ լաւ, զու մեզ հայհոյուամ ես հա՞ն, կօլոս Բղդէ՛, ուրեմն կերթանք, էլ քամակիցդ չենք ընկնիլ, սպառնուամ էին մանուկներն ու հետո քաշուուամ։

—Տօ՛ ձեզ զուրբա՞ն, ձեր մօրը զուրբա՞ն, լեզուիս ի՞նչ կաշէք, սրտիս աշեցէ՛ք, աչքս հանէք՝ ձէն չեմ տալ, ըմէն ձեզ փէշքա՛շ, եկէ՛ք, կերէ՛ք, փշացրէ՛ք՝ թաք ինձնէ մի՛ հետանաք։ իսկոցն սիրան առնուամ էր նա մանուկների և մի բուռը շամիչ հանուամ, նրանց բաժանուամ։

Բղդէի ամենից արդիւնատու չաճախորդները զիւղերի փոքրիկ շարերն էին, քան թէ խանում-բաջիները. բայց երեխաներից աւելի նա սիրուամ էր քունջ ու պուճախից իրան ձեռքով անող, մօտ կանչող զնորդներին։ Սիրուն նորահարսներն էին վերջիններս ու արշունքի մոտած, իրանց ճանաշած աղջիկները, որոնց անոնիր լուսաբունքի մոտած, իրանց ճանաշած աղջիկները, որոնց անոնիր լուսաբունքի մոտած։

Բօշի տղի բնազգումն աւելի էր զարդացած, քան թէ Բղդէիր ուշը ու միաքը. Հենց որ տան մէծը, տան տղամարդը, սկեսուրը, սկեսացը, ամուսինը, տաղը, եղբայրը մի տանից հեռանում էին, բօշի տղան, այդ տան առջեց անցնելուս, ոտքը ծանրացնում էր: Բղդէիր աչքն էլ իւր հարազատ եղբօր—բօշի տղաջի ոտքերին էր, ձեռաց նա էլ փացտն էր սիւն տալիս, կանգ առնում փողոցումն ու մեղեդին զլում:

Ահա՝ դուրս էր սողում հացատան անկիւնից մարադ մտած կատուի նման քողը մինչև կուրծքը ցած թողած, երեսը ծածկած նորահարսը. նա ձախ ձեռքով բարձրացնում էր կարմիր մետաքսեաց քողը և աջով նշանացի ներս էր կանչում՝ կօլու Բղդէին դէպի ամենասութ խորշը:

Մի անագեաց ասեղաման, մի աւ ոսկեաց զեղադրի (աչքելը շեղելու գործեաց), աչքեր թխացնող փոքր ինչ փոշի՝ նորատի ամուսիններին գրաւելու ձիշդ միջոց, մի քանի միխակի հասովիկներ, մի երկու շարք զոյնզգոյն դիւրագին ուլունքներ,—ահա՝ սրանք էին սիրաբորբոք նորահարսի առևարի առարկաները: Մի մեծ ամանով ալիւր, մի երկու տասնեակ ձու, մի քանի բուռը բրինձ, ձաւար, ձեմ, իւղ և տանը գտնուած ամենաստեսակ բարիք, ինչ կուզէ թող լինի, քարից փափուկ լինի, ուրախութեամբ ստանում էր Բղդէն իւր ծախածներին զին և սև իշուկի շալակը ծանրացնում:

Զգոյշ էին սիրուն հարսները, նրանք շատ հեռատես են, հում գործ չեն բոնիլ. նրանք քաջ դիսէին, որ վայը կը դար իրանց արևին, սկեսօր բուան մէջ կը մնացին իրանց ծամերից քաղած մազելը, եթէ իրանց առուտուրը յացնուէր, կամ մէկը նրանց տեսնէր Բղդէի հետ ձեռք ու ոտքով, իշարաթով (նշանացի) խօսելիս: Հնարքն առաջուց մտածուած էր, զգուշութիւնները ձեռք էին առնուած. ահա բակի դուռը ծերակ արած (հետոթաց) այնքան, որ աչքի մինը հազիւտեզաւորուէր, հսկում է հարսի սրտակիցը՝ տան մէջ նորա հետ միակ խօսակից ընկերը՝ նորա քաղցրակեզու տալը՝ նորա ամսումնի մարդու տանելու քոյցը՝ տանու օրիորդը:

Մի հազոց, մի թեթև ծափ աղջկաց կողմից բաւական էր գեղեցկուհի շողակն քնքուշիկին յական թօթափել իւր վարագուրի տակը հալածուելու համար:

Միջանկեալ տաենք, որ վաղ ժամանակը ո՞ր տան անկիւններից մէկում տեսնէիր վարագոյր կախուած՝ իսկոցն կը հասկանացիր, որ այս տարի այն տեղ մի պատկ է կատարուել, տան կեցողների թուումը մի շխօսքան անդամ է աւելացել, տան ջահէլ տղամարդի կողքը տաքացնող է եկել։ Մինչև տարին չը բոլորուեր, ոչ վարագոյրն անկիւնից կը վերացուեր, ոչ հարսի երեսից քողը. մի օտար ոտնաձայն առնելուն պէս, իւղը կրակին երուելու լինէր, հարսը պարտական էր ձեռքից թողնել, վարագուրի տակը խցկուել։

Կօլոտ Բղդէն վարժ էր իւր արհեստի մէջ. օրիորդի նշանները նրան էլ զգաստացնում էին, յառաջ էր գալիս նա բակի մէջ տեղն ու իւր նշաննաւոր երգը շարունակում։

Նատ լաւ գիտէր Բղդէն, որ ինքն ուրիշ չարչիների վերայ մեծ առաւելութիւն է ստացել իւր ման եկած գիւղերումը. այդ մի գաղտնիք էր, թէ ընչո՞ւ առենքը վասահ էին կօլոտի հաւատարմութեան վերայ. ոսկին որ սինով (աֆո՞ն) դրած լինի, Բղդէն վրէն խէթ աշք չի ծովիլ. — ահա՝ այս կարծիքն էին կազմել գիւղացիք Բղդէի վերայ։

Բայց թէ ացգաէ՞ս էր արդեօք, ոչինչ բանի ձեռնամուխ չէ՞ր լինում նա տանն Ազամաորդի չեղած միջոցը, լսուրջնի մէջ կամ գրանը չէ՞ր մանում տնացին որ և է գործիք, — այդ Բղդէին ու սատանացին էր միայն յացանի, Աստուած ացգախի տեղերումը գործ ու հաշիւ չ'ունի։

Այսքանը միայն պարզ է, որ ամիսը մի անգամ կօլոտ չարչի Բղդէն երկու լիքը մազէ թեռեր (պարէն) միմեանց կարած, իւր սիրելի բօշի տղին բարձած, մի փայտեայ խթան ձեռքին բղելով՝ Աբարանու եղնակարաւանի հետ ճանապարհորդակից եղած՝ անցնում էր Աշոարակու կամրջովը դէպի երեան։

— Զա՞ն, ջա՞ն, նորա շուրջը ուստոստալով՝ ճամփու էին զնում Բղդէին գիւղական մանսւկները մինչև կամուրջը, Բղդէն իւր գողացած մանրունքը տանում է Երեան ծախի, ապրանք բերի, երկու երեք օրից յետոց լիսութիւնը կ'ընկնի, բերաններս կը քաղցրանաց։

Այս չարչիութեան երրո՞րդ, թէ չորրորդ տարին էր։

Բ.

ԿԱՐՔԻ ԱԽԱՆՏ.

Պատմութեան մէջ շատ վաղ ժամանակներից է յայտնի Կարբի աւանը. նորա հոչակի համար, արդարեւ, մեծ լիշտակութիւններ չը կան, բայց ի հնուց անտի Արագածոտն գաւառի արևելա-հարաւային կէսը Կարբու անունն է կրել, Կարբու գաւառ է կոչուել: Արագած մեծանիստ ու ծաղկաւէտ սարի հարազատ գաւառի Քասախ գետը, թողած իւր հայ աշխարհքի համար պարծանք, քրիստոնէութեան օրօրան Էջմիածինը՝ ահեղազօր ծրդատի սիրելի մարաքաղաք Վաղարշապատը, որի դաշտերը ուռոգելով, որի հողը լիզելով գնում, ողջունում է հայ աշխարհի Մայր-Արաքսին և նորա ծոցումը հանգըստանում, այդ Քասախն էլ, ասում ենք, շատ երկար ժամանակներ Կարբու գետ է կոչուել, Կարբու անունովն է ձանաշուել: Այսքանը բաւական չի, մինչեւ այսօր մի երգի վերջաւորութիւն—թափշուրմայ կայ, որ Կարբուն վաճառաշահ քաղաքի փառքն է ընծայում: Նթէ երգը մօռացուել է, որից շատ պատմական մանրամասնութիւններ կարող էինք հետևեցնել, բայց թափշուրմի տողը շատ բան է պարզաբանում:

Ահա՛ թէ ի՞նչ է պտղառում իբրև առած ժողովրդի բերանում: «Դուքան-բազարն է Կարբի»:

Իսկ դուքան-բազարներ միացն հին ժամանակը մեծամեծ քաղաքներում են տեղի ունեցել:

Քանի մի տարի առաջ, մեր աչքով տեսած բանն է, քարակոյնների ու ողբալի աւերակների խառն ի խոռոն և անկանոն զիզուածքներ էին Կարբու մեծ մասը. տեղ տեղ միայն տիտոր տպաւորութիւն էին անում մարդու վերաց աւերակների մէջ ցցուած անշուք բնակարանները, որոնք կէս դարից դէսը կարկատուել, վերաշինուել և իրանց տակ տեղ են տուել Հին-Բայազիդից գաղթած մեծաթիւ գաղթականութեան մի փոքրաթիւ հատուածին. և ի՞նչ շէնք ու շինութիւններ. հին փառաւորութեան հետքը չի նշմարուում ոչ հիմա, ոչ մօտիկ անցեալումը. անծաշակ ու աղքատիկ միայարկ խրճիթներ են բոււել կամարակապ և քարակերա պալատների տեղ:

Հին հոյսկապ քաղաքից շէն և անվնաս էր մնացել միմիան
հինաւուրց սագաձեւ ճարտարապետութեամբ կառուցած ամրա-
պինդ սուրբ տաճարը, զրանք են Կարբու մայր եկեղեցին և իւր
նշանաւոր զանգակատունը՝ մի քանի կանգուն տեղ իրարից անջատ-
ուած. նրանք մշտամունչ ականատես և կենդանի վկայ են եղել
այսօրուան փլատակների նախկին փառազարդութիւններին:

Դարեր եկել եին, կործանիչ բւնակալ ձեռքեր խարբա-
լել, հիմն ի վեր եին տապալել Կարբին, նորա ամեն մի քարը տամն
անգամ շրջարջել եին, թէ ի՞նչ է, իրանց ազահ ընչաքաղցութիւնով
կարողանան մի պահետափ տեղ, մի ծածկած զանձ գտնել. բայց
աներեւոյթ մատն ամենքի վերայ սարսափ ու զարգանդ է ազդել և
թոյ չի տուել անսուրբ ձեռքերին զիսլել, մօտ դալ իւր նուիրական
տանը:

Հարկաւ, մի սուր անող, մի լալկան պէտք էր այս լուս զամ-
բարանի վերայ և հէնց այդ ողբերգուն մնացել էր Աստուծոյ սուրբ
տաճարը—Կարբու եկեղեցին: Սև ու քարերի ծերպերից բուսած
կանաչներն են տառապեալ և վշտակոծ այրու զգգղած մազերը, պա-
տերի և առաստաղի վերայ մնացած խոնաւութեան հետքերն են
նորա չորացած արտասունքը, տեղ տեղ բնութեան հարուածներից
մաշուած և դուրս թափուած քարերի խոռոչներն են նորա վիրքերը:

Առել են Կարբու ազդուսերգութիւնները, այլ ևս չի հնչել ժամ
հրաւիրող կոչնակի ձայնը և միայն գլխակեր բուն փոխարինել է կոչ-
նակ զարկող ժամկուին:

Այսօր էլ չեն քերուել Կարբու եկեղեցու Կի զի—մատուռ ա-
նունով զանգակատան գլխից գիշակեր թռչունների ազականութեանց
հետքերը:

Կարբու գիրքը ներկացումն խիստ մեծ չէ. բայց, ինչպէս երեւում
է, նա շատ լանանիստ տեղ է բռնել. բուն Կարբուց մի ժամաշափ
հեռու մի աւերակ կայ, որ Հին Կարբի անունն է կրում. այդքանով
էլ որ չը բաւականանք, շատ անգամ ամացի և խոսկան տեղը վարե-
էլ որ բաւականանք, շատ անգամ ամացի և խոսկան տեղը վարե-
էլ որ կարբու շրջակայքում՝ գութանի խոփը բանդ է ընկնում մի Հին
սրատի, մի կիսաքանդ շնչքի, որից երևում է, որ իւր ժամանակին
ևս մեծ տարսածութիւն է ունեցել:

Բայց զարմանք բան է, թէ այդ նշանաւոր քաղաքն իւր բազմա-

մարդութիւնով ի՞նչպէս է կառավարուել առանց ջրի։ Անուշահամ Քասախ զետք, որքան և Կարբու անունովն է կոչուել, բայց կարբեցուն միշտ սակաւամատչելի է մնացել. անդնդափոս ձորը, որի միջով գժի նման գուռում-գոչում անելով վազում է Քասախը, իւր վիթխարի ժայռերով և գժուարագնաց մուտքով այսօր էլ անհիւրատէր է դէսի Կարբին։

Մի գետակ կաց միայն, այդ Դալիթշալ անուն կրող Արագածի զաւակներից մինն է, որ ոսոգում է Կարբին և իւր շրջապատող Արագածի լանջի վերաց ընկած գիւղերը. իսկ այդ գետակը շատ անբաւականացուցիչ է Կարբու և մի քանի ուրիշ գիւղերի համար։

Այսպէս թէ այնպէս՝ Կարբին մի պանծալի զիրք է ունեցել և իւր ցրուած ու տարագրուած ժողովուրդը վաճառականութեան ու ճարսլիկութեան մեծ ընդունակութիւն է ցոյց տուել։

Միայն «դուքան-բազարն է Կարբի» խօսքերը չեն, որ կարբեցու առեւտրականութեան յաջողակութեան ապացոյց են. տեղական բնիկները կարբեցուն կոչել են և կրօւմ են սատանախար կարբեցիք։ Այս խօսքերին իրեւ հիմունք մի կարճ առակ ևս մնացած է, որով որոշուում է կարբեցու սեպհական ձիրքը։

Ահա՛ այն առակը։ — Մի անգամ, որպէս թէ, մեծ վիճաբանութիւն է ծաղել կարբեցու և սատանայի մէջ. արևի ծագումն է եղել նրանց հակամառութեան շարժառիթը. նրանցից ամեն մէկը պարծեցել է իւր հեռատեսութեամբը. պայքար են մաել, դաշն են կապել, մեծ վճարք են զբել, թէ ո՞վ իրանցից շուտ կը տեսնի արևի ծագումը։

Արշալուսից էլի կանուխ՝ երկուսն էլ կանգնել են որոշեալ տեղում. դէսի արևելք է սեեռել իւր աչքերը սատանան և սրտատըրոփ սպասել է երկրի լուսատուն տեսնելու և դաշը շահելու։ Դէսի Աւագ-Մասիսի երկնածայր և ալեզարդ կատարն է նայել ճարպիկ կարբեցին։

— Յաղթութիւն, ծափ զարկելով ձայն է տուել կարբեցին և ցուցամատով պինդ խթել է իւր հակառակօրդի կողքը։

— Կ՞ոչ է։

— Չուն ու ցաւը պինչդ է, կոյր ես ու Աստծու երեսից ընկած. ի՞նչ ես զունչդ արևելք ցցած մնացել՝ գարու հոտին քիթը վեր

քաշած իշխ պէս, աչքդ արևմուտք դարձրու, ահա' սլսպղում են Մասիս պապի արծաթափազը մազերը, չե՞ս տեսնում, ձիւնի ոսկեշաղ հատիկներն անդին ալմաստի պէս աչք են ծակում, հիմի աչքերիդ եղած լոյսն էլ կը կորեն:

— Իրաւ, որ աչքով էլ, մոքով էլ կոյք եմ եղել, որ աշխարհքի ստեղծագործութիւնից մինչեւ էս օր հարիւրաւոր փորձանք եմ հասցըել այս աշխարհին ու ոչ մի օր չեմ նկատել, թէ Մասիսն է իւր վիթխարի հասակովն արևին տռաջին բարել առւողը, խոստովանում է անկոտումը:

Ուզիղ էր ստուանայի խօսքը. հայ աշխարհի համայն լրոների կատարների վերայ է մայր-Մասիսի—սրբազն Արարատայ հսկայական հովանի աչքը. Մասիսի գագաթի արևելահայեաց կէսն է ծէգաբացին դիմաւորում լուսաւորների թագաւորին, իսկ երեկոյեան, ժանդառութից յառաջ, նորա արևմտեան երեսն է առնում աշխարհիս արտաքին մակերեսովթը խաւարի մէջ թողնող հեռացողի վերջին հրաժեշտը:

Ահա' այդ ճարպիկ ժողովրդի, այդ առևտրականութեան ընդունակ մթնոլորտի զաւակն էր կօլոս չարչի Բղդէն:

Պ.

ԲՈՒԽ ԱՐՏԵՂԱՑԻ Է

Կարբեցի էր, ասում ենք, կօլոս Բղդէն, Կարբու հող ու ջրի սնուցած, մեծացրած, շարչութեան պատուին արժանացած այդ դունդ ու կծիկը, այդ վշատի ծառի ծաւիկ-մնատիկ բռւնը:

Եւ արդարեւ, մարդ մոլորուում է Աստծու քնած ժամանակն ստեղծուած այս մարդանման զանգուածքին մի ուրիշ առարկայի հետ համեմատութիւն անել կամենալիս. իսան ասես՝ իսան չէ, Աղամատրդի ասես՝ Աղամատրդի չէ. մարդ լինէր, մարդանման ուղղակի իւր ճանապարհը բռնած յառաջ կերթար, կամ յետ կը դար. չորքուանի՞ է, այն էլ՝ հազիւ թէ, մենք տեսել ենք, որ չորքուանիքը մի քնորոշ մանգալու ձև ունին. իսկ մեր տնաքանդը դոնէ երկրտանու և չորքուանու մէջ տեղը մի ուրիշ շարժուն էակ ներկայացնէր:

Ամենից յաջող համեմատութիւնը հնարել են կօլոս Բղդէի ման
եկած զիւղերի երեխայքը:

—Ե՞ս, հրե կօլոս Բղդէն իւր բօշի տղին յառաջն արած՝ Մող-
նու թառովը ներքեւ է զալիս, հենց իմանաս՝ արջի երկու տարե-
կան քոթոթ լինի:

—Արջի քոթոթն էն չէր, որ հերու Քարվիզի լօթիքը բերին
մեր կալումը խաղացրին, նա խօ՛ գուղ մանգալ ուներ:

—Դէ՛, ասա՛ նառ ուզու է ելի, զօշը գուրս պրծած, ոտ փո-
խելուս էլ լնգինգում, տմբամբում է:

—Ի՞նչի՞ էք ձեր հոգուն մեղք անում, ուզու, զորթ է, գնալուս
տմբամբում է, բայց ճամփեն ուղիղ է գնում. Բղդէն էդ շնորհքն
ունի՞, մի լաւ մորիկ տուէք, — մի ուն աջ է գցում՝ մինը ձախ, օձի
պէս կողոլ-կողոլ է անում, կուտապ-կուտապ է զալիս:

—Թէ լոտէնց է, օձ ասենք ու պրծնենք:

—Օձն ափսոս չի՞, բարա՛կ, շարմա՛զ:

—Բաս ընչի՞ նմանացնենք:

—Ես գտայ, ուրախութիւնով յառաջ մինն այն կողմիցը.
Ճառի փոտած քոթուկը (իրան) որ ճղում ես, վախտ վախտ մի-
ջիցը միահաւասար կարծ ու հաստ որդեր են զլորուելով ներքեւ ընկ-
նում, ոչ զլուխն է երեւում, ոչ պոչը, շարժուելուս գլուխը աջ է
գնում, պոչը ձախ, իստակ ծառի որդ է, որ կայ:

—Ծառի ո՛րդ է, ծառի ո՛րդ է Բղդէն, թռչկոտացին, կայտ-
ուեցին միասին ծափ տալով մանուկները:

—Ծառի ո՛րդ կօլոս Բղդէ, ծառի ո՛րդ կօլոս Բղդէ, պար
բունեցին ու շրջապատեցին նրան:

Այդ համեմատութիւնն ընդհանուր հաւանութիւն գտաւ. Բղդէի
կօլոս անունին մի ուրիշն էլ աւելացաւ:

Զար մանուկների խօսքին կշիռ չը գնելով, մենք ճանաչենք
նրան ընդ միշտ կօլոս Բղդէ և ասենք, որ կարբեցի էր:

Բայց ցաւն այն է, որ մեր կորական վճռովը խիստ մեղանչած
կը լինենք. հեշտ չէ որոշակի անուն տալ նորա հայրենի տեղին:

Այ, թէ ի՞նչպէս:

Ամենքիս յայտնի է, որ զարուս առաջին քառորդին մի մեծ
գաղթականութիւն տեղի ունեցաւ հայ աշխարհումը: — Կարապետ

սրբազնութեաց Օսմանցուի բաժին Հայաստանից մի ահագին բազ-
մութիւն և բնակեցրեց ռուսի ձեռքը նոր անցկացած հայ երկրում:

Դրանցից զարսեցիք Գիւմրի եկան, արզումցիք՝ Ախալցիայ և
Ախալքալաք, բասեցիք՝ Աբարան. իսկ հին-բայազիդցիք երեք կտոր
եղան: Նրանցից մի մեծ հաստած իրան համար կենդրոն ընտրեց
Սևանայ լճի չորս կողմը: Նրանք՝ իրանց հին հայրենիքի անունը
իր և միախառնութեաց և սրաներին հովութիւն բերած՝ հիմնեցին հա-
մեղ, անմահական իշխանակների հայրենիքումն իրանց նոր քա-
զաքը և նոր-Բայազէդ կնքեցին: Մի քանի տուն էլ հարուստներից
յարմար դաստեցին Նարսից Գիւմրի փոխուած հաջի աղաների հետ
հարեւանութիւն անել, ուզդակի քշեցին եկան Գիւմրի. իսկ մի փոք-
րիկ կոտր էլ ընդհատուեցին իրանց հայրենակիցներից և Կարբի
հին քաղաքասեղումը բնակուեցին:

Եւ ահա' այս Կասրի գիւղում, Բայազիդից գաղթելու առաջին
տարին, ամեն ծննդաբերներից շուտ, Կարբի տուն գալու ոտնամուտը
շնորհաւորեց Պօղոս աղացենց հովուի կին ացրի Սալբին և շնորհեց
Կարբուն մի անդրանիկ արու զաւակ՝ մեր պատմութեան հերոս կօ-
լու Բղդէին:

Ո՞ր տեղացի է ուրեմն մեր պատուական բարեկամը. կարբեցի
ասելով՝ Բայազիդին կը վիրաւորենք, բայազիդցի կոչելով՝ Կարբուն
սրտամնայ կ'անենք:

Թո՛ղ կօլու Բղդէի երկու հայրենակիցներն, ինչպէս կամենան,
իրար հետ հաշտուին, մենք աչքներս բաց ենք արել և ոչ միայն
Բղդէին իրան, այլ Կարբու բոլոր ներկայ բնակիչների համար կար-
բեցի անունն ենք լսել. այդ հայրենիքն էլ նրան կը սեպհականենք:

Եւ մեղանչած էլ չենք լինիլ:

Երկու հայրենիքը՝ Կարբին և Հին-Բայազէդը, իրաւ է, երեք
օրուան ծանապարհ միմեանցից հեռու են. մինը Մասիսի հարաւա-
ցին երեսումը՝ Օսմանցուի ձեռքին է մնացած, միւսը Արագածի
թմբին ոռուսի սեպհականութիւն է դարձած՝ բայց մի որակութեան
մէջ, կարծես, միաննում են. թէ Բայազիդումը ծնած ու մեծացած և
էս օր էլ այնտեղ մնացած հայր և թէ Կարբու էս օրուայ պատղները,
կարծես, մի խնձոր լինին միջից կիսած, մի հօրն ու մօր դատած ու
բերած զաւակներ: 50, 60 տարի է անցկացել, գնալ-գալ, բարեկա-

մութիւն, ազգականութիւն մոռացուել են, երկու-երեք սերունդ են մին մի յաջորդել, բայց երկու ժողովրդի դէմքերի երկարաւուն զծագրութիւնը, բարբառը, (որ կարնեցու և ալաշերոցու բարբառից կազմակերպուած մի խառնուրդ է աւելի դէպի Ալաշկերտցին հակուած հնչումով), ներքին անալին սովորութիւնները, (թող նորհայագէղը ճարակող վերջերումն նորամուտ կեղծ քաղաքակըրթութիւնը և տնաւեր շուացլութիւնը). և որ զիսաւորն է, բընածին ընդունակութիւնները մի և նոյն հօր զաւակն են համարում նրանց Թէ բայզիդցին և թէ կարբեցին երկուան էլ ճարպիկ են, երկուան էլ խելօք են, երկուան էլ ամեն բանի մէջ կորուկ են—ջրաղացի բուզը ձգես՝ դուրս կը գան, քարիցը իւղ կը հանեն: Եւ ի՞նչ է այստեղ ապացուցուում:

Այ ի՞նչ: — Մենք տեսանք, որ հին կարբեցիք «դուքան-քազար» են ունեցել, վաճառական ժողովուրդ են եղել, «սատանախար» անուն են տարել—ուրեմն խելքով օժառուած են եղել. իսկ նոր կարբեցիք նոյն ընդունակութիւնները և նոյն բնաւորութիւնն ունին. կճուճը դլորուել, խոփը գտել է. արժանաւոր հօրն արժանաւոր որդիք են վիճակուել:

Նատ չէին կարբու նոր բնակիչները. 50, 60 տուն ընդհատուեցին ամբողջից և կարբու աւերակները շնչացրին:

Վարչութիւնը չը միջամտեց նրանց տեղաբնակութեան բաժանման մէջ:

Իրանց միջի պատուելիները, որոնք աղայական իրաւունք և նահապետական արտօնութիւն էին վայելում, այստեղ էլ նոյն մենաշնորհութիւնն ունեցան, խելք խելքի տուին, չափեցին, ձեւեցին, աւերակները հետախուզեցին, լաւ տեղերն իրանց վերապահեցին, մնացածը հասարակ ժողովրդի վերաց բաժին բաժին արին:

Սալքին երիտասարդ ալքի էր, նորա ամուսին մի աչքանի Գսակէն Պօղոս աղայենց հին տան ամալաներիցն էր, աչքը բացել էր և Պօղոս աղայենց շնչաւոր կենդանիների թուումն իւր գլուխն էլ տեսել էր:

Եւ որովհետեւ ամալան մի տեսակ սեպհականութեան պէս բան է իւր տիրոջ համար, թէև ոչինչ քաղաքական կամ մասնաւոր պայմաններով կապուած չէ, այլ նահապետական աւան-

դականութեան վերաջ է միայն հիմնուած, այլ պատճառաւ աղայի պարտականութիւնն է իւր ասորին անդամի, իւր հացափոր ծառացի—իւր ամալացի ամենատեսակ հոգսերը քաշելու։

—Տօ տղա՛յ, Գաղե՛, էդ ի՞նչ ա:

—Գլխուգ խուրբա՞ն, զառն ա, ասաց և թաղիքեայ կուլար կոչուած հովուական վերարկուի տակից մի կայտառ, ձիւնանման, սպիտակ, ձակատը ծաղիկ, սիրուն զառնուկ հանեց Գաղեն, զլուս տուեց իւր տիրոջը ու տան մէջ բաց թողեց։

Յունվարի վեցն էր այդ օրը. Պօղոս աղան իւր ընտանիքի հետ Հրօնինեաց հանդիսան եկեղեցումը ներկայ լինելուց յետոյ՝ իւր գերդաստանի արական սեռի հետ նստած՝ ուրախ տրամադրութեամբ ճաշ էր վայելում։

Երեխացքը ճաշը թողած՝ վեր թռան և զառանը փաթաթուեցին։

—Տօ տղա՛յ, Գաղե՛, զու էդ զառ. էս ձեռուուան կիսին յո՞ւստ ևս բերում ես, հարցրեց քաղցր դէմքով Պօղոս աղան։

—Գաղեն քո սոքի տակի խոզն է, քո սայից (ի շնորհո ժա), աղա՛յ, բալաք (խոյտովով) մաքին (էդ ոչնոր) աշնան դէմ ծանրեր էր, երկու տափո կալ, որ ծնաւ. ես լի պահեցինք, աչք ունեցանք վրէն, չոջացրինք ու բերինք քեզ փեշքէց ասաց Գաղեն և կրկին զլուխը տաճկական ձեռով ծուելով՝ աջ ձեռքը նախ դեմինին տուեց, ապա բերանին մօռկցրեց ու զլխի վերայ զրեց։ Այս նշանակում է՝ ես կո անում և իմ զլխի տիրոջ ոոքը համբուրում եմ։

—Տօդա՛, զու որ մեզի ուրախացրիր էս աղիղօրը, ես էլ քեզի կուրախացնեմ. քո բեխեր, հա՛, հա՛, սեացեր են, չոջցեր ես, օրերդ հասուկ են, էս բարեկենդանքին քեզ կը կարգենք (պատկել), մեր մէհասր (չիտուն) հոգի խորոտիկ Սալլի աղջկան կ'առնեմ քեզի։

Գաղեֆ քէֆը քոք եղաւ. Պօղոս աղան ասածը կատարեց և լիտի բարեկենդաններին մի շաբաթուայ մէջ նշանեց ու պսակեց նրան։

Աղայի աւանդապահ ամուսինը՝ Ալմաստ խախունը՝ շատ զիմազրեց, պնդեց պահպանել տեղական սովորութիւնը. նախ նշանել, մի երկու տարի նշանած պահել, վերջը պսակել. բայց Պօղոս աղան իւր խօսքին տէր կացաւ և նախնական սովորութիւնն առաջին անդամը քսնելեց։

— Աշխարհը մեզ կը բամբասի, քիթը ցցեց խաժունը:

— Ոչ ոք բան չի՝ ասիլ, ապացուցեց աղջն. եթէ մենք ուրիշ աեղից աղջիկ ուղեինք, բաշլուզ, սուզ հախի¹⁾ տայինք, ամեն ոք իրաւունք ուներ տրանջալու, կամ մեր վերաց խօսելու. բաց մենք մեր մի ամալացի աղջիկը միւս ամալացի տղին ենք ուղել, աղջն էլ մերն է, աղջիկն էլ, երկուսին ուտեցնող, հաղցնողն էլ մենք ենք, երկուսն էլ մեր տան անդամներն են, մի օր պէտք է ացդ պատկը կատարեինք, և քանի շուռ՝ այնքան լաւ: Աւրիշ բան էր, եթէ մեր ամալացի աղջիկը տայինք ուրիշ աղայենց ամալացի տղային, կամ նրանցը մենք ուղեինք, այն ժամանակ նշանաձներին երկար միջոց կը պահէինք, բաշլուզ էլ կը շնուինք, սուզ հախի էլ կը տայինք:

Պօղոս աղան իրաւունք ուներ. երկուսն էլ իրանց ամալաներն են: Ազգավիսի ամալաներ խոր գիւղերում մէլիքների, առաջաւորների և սէսների գրանք այսօր էլ կան և սրափ մոօք ու անարտունջ ծառացում են:

Նրանց պահանջը շատ չէ. մի կտոր ցամաք հաց, մերկութիւնը կիսով չափ ծածկելու. Հնուոիներ աղայի կողմից, և աշա՛ նրանք կեսնք չեն խնացում ախրոջ ուղուրին:

Սմենից միր մշակը, ամենից հաւատարիմ և սրտացաւ անդամը աղայի տան համար՝ ամալան է: Թո՛ղ ուրիշը տասնապատիկ սուսել վափկութիւններ և վարձատրութիւններ խոստանաց, ընչով կուզեց, թող հրապուրի, ամալան իւր աղայի տան ցամաք հացը բոլորից կը գերազասի, նա իւր «աղայի չոր հացին կոյր չի մոխի տալ»:

Բաց եթէ ամալան զրաւուի բանարկուների խոստումներից, կամ ինքնաբերաբար մոսածի մտղնել խսպառ իւր ախրոջ շեմքը, ոչ ոք նրան զէմ չի կենալ, նա աղաս է իւր ընարած ճանապարհը գնալու:

Ամալան իրաւունք ունի մինչև անզամ անանձին տուն ու տեղ

¹⁾ Բաշլուզ և սուզ հախի. առաջինը նշանակում է զլսավին, երկրորդը՝ կաթի զին. սոքա անտղին վճարքներ են, որ հին ժամանակը փետացուն առլիս էր խր ունելուցը: Առաջ հախին զորանջին խառուկ լնաւու էր էր Ակմեմ և շատ նահապետական տեղերում դեռ չի վերջացել առ առլորտ թիւնը:

զառնալ, իւր սեղհական վար ու ցանքսն, իւր անտեսութիւնն ու-
նենալ և միաժամանակ իւր աղացի տանից ոտքը չը կարել:

Եւ ահա՝ Գաղէն Պօղոս աղացէնց ամալաց Գաղէն՝ սիրուն կնոջ
մարդ եղաւ, ընտանեկան քաղցրութեան ճաշակին առաւ:

Ակրազգ մարդ, ճակասագիրն այլապէս էր անօրինել. Ուուս-Թուր-
քական առաջին պատերազմնորա կենաց թելլ կարեց, գաղթականու-
թեանը զոհ գնաց Գաղէն, Երասխի անցքումը քրդի կեռակառոց սր-
բին մասաղ եղաւ արթուն և անձնաղին հովիր՝ երկու քուրդ սպա-
նելուց յետոյ:

Պատմութիւնը կարճ է. քրդերը չեն թովնում հօտն այս կողմն
անցկացնել, ոչխարի յառաջը կարեցին չորս ձիառորով. Գաղէն իւր
կօմրալազլուխ գագանակով (հռչառական ցիր) երկուսին մի-մի հար-
ուածով ձիուցը գահավէժ կործանեց, երբորդի սրից ինքն արիա-
բար լնկաւ:

— Մեղք է նաչար Ալլըին, ասաց մի որ Պօղոս աղան Ալմաստ
խաթունին, հերիք է ինչքան որ խեղճը չարշարուեց մեր զրանը,
մեր տան քամակի աւերակներից երկուսը ծածկենք, իրան տանք,
մի աշխատասիր, անարար այրի տղամարդ ճարենք, ամունացնենք,
թուղ զնան իրանց արեւի ձայնն ածեն. այս երեխան էլ կը մ.ծանաց,
իրանը էլ նոր երեխացք կ'ունենան, իրանց մի կտոր հացը կ'ունենան:

— Զեմ կարծում, որ մարդու զնաց:

— Ընչու համար, Ալլըին զրաւիչ է, աչքերը սե, թշերը կար-
միր, հասակը բարձր, անձն ասողը, մէջքը հաստ, ոսկը պինդ,
զործի կողելուս էլ կարծես հում հում է ուզում բանն ուտել,
ընչի՞ պէտք է մեր զրանը օրը սե անի, կեանքը փշացնի:

— Աս միայն իմ մեռնելու օրը չեմ կարող իմանալ, սպարծեցաւ
նոյն երեխային Ալմաստ խաթունը Պօղոս աղացի մօտ. եօթը ժամ
գալիք աւետարան կարդացի Սալլու գլխին, իրան ապանում է, այսու-
հետեւ, ասում է, իմ մարդն, իմ ուրախութիւնն, իմ միիթարանքն
էս մի մատը երեխէն է: Եթէ իմ աղէն իւր քաղցը աչքովն ինձ էդ
լուսութիւնը կամնաց, երկու ծածկի տէր անի, մինչև մաշն քանի
կամ, օրական մի հաց կ'ուտեմ, մինն իմ աղացի բարելաւ ութեան
համար մասաղ կը տամ:

— Թող իւր ասածը լինի:

Եւ Պօղոս աղացի հրամանաւ կարձ միջոցից Սալբին իւր սեպ-
հական յարկի տակն էր տաժանելի աշխատանքներից հանդիսա առ-
նում:

Պ.

ԴԳՄԵԱՅ ՍՐՈՒԱԿԻ ՀԱՄԲՈՅՑՆԵՐԻ

Երկիրը փոխուեց, ող ու ջուրը փոխուեց, մարգիկը նոր, ոտ-
վորութիւնները նոր, աշխարհի տեղաղբական պայմանները նոր: Զա-
նազան Պօղոս ու Պիտրոս աղաներն իրանց օրերը լցրին, հայր Արքա-
համաւ նահապետական զորումը հանդառացան, սեպհական աշխա-
տանքը, զոյտ թեան խնդիրը աստիճանաբար յառաջ եկաւ և շատերի
թուռմը Սալբու և իւր խմորակեր փոքրիկի համար պահանջ պարձաւ:

Գնացին Կարբի զաղթած աղաների հարստութիւնները. փոք-
րիկ զիւղը, կարձ միջոցում, չեր կարպ մրցել նահանգական քաղուքի
հետ. Երեան թողած՝ ո՞վ կը զնար Կարբի առուտուր անելու. իրանք
աղաներն էլ, որ սկզբումը մեծ յօժարութեամբ, առանց երկար ու
խորը մատծելու, կենդրոնից բաժանուել և Կարբին էին ընարել, փոքր
առ փոքր այդ աղաները կամ աղքատացան և կամ երկրի պայ-
մանների հետ լաւ ծանօթացան ու քաշուեցին ոմն այսուղ և ոմն
այնուեղ, մի քանիսը գաղթեցին Գիւմրի, որ արգէն նոր միլոսուել
էր և հին թուրքական անունի տեղ Ալէքսանդրօլ շքեղապանծ
անունին էր տիրացել, մի մասն էլ Երեան գնացին, խանութիւնների ու
կայսնքի տիրացան:

Կարբումը մնացին շքաւոր և բանւոր դասակարգը և միջակ-
ներից մի քանիսը: Առաջիններին վիճակուեց Երկրագործութիւնը,
միջակները փորձ փորձեցին Հին Կարբու շուկացատեղի. մի կարպ տ-
ւերակները շէնացնել, խանութնատել և առեւարով սպարապել:

Ոչ մինը և ոչ միւսը նպատակներին ըլ հասան. Հողը տակաւ էր
Կարբումը, վարուցանքսի տեղ չը կար, տարեկան ուտելիքին չեր
բաւականանում ցանածները. ժողովուրդն ստիպուեցաւ օրավարձ
մշակութիւնով պարագել, մի քանիսն էլ խուրծնի մէջ չարչու-
խուրդավագաթ (Քերեզակի Տանը առքանչ) դրած՝ գիւղերն ընկան, սո-
քերի կաշին մաշելով թափառել սկան. իսկ միջակ դասը խանութիւ-

զրամագլուխը խժուեցին, օրն եկած վաստակով ապրել չը կարողացան, սրանք էլ ասորին գեղջուկի կարգն անցան:

Թէ կարբեցոց և թէ շըջակայ զիւղականաց օրավարձ մշակութեան զլաւոր կենդրոնը այգեշատ Աշտարակ զիւղն է:

Չմեռն անցկացաւ. գարնան անուշաբոյր հանքը փչեց թէ չէ, Աշտարակի ճանապարհը կենդանութիւնն կը ստանայ. կարբեցի, Յովհաննութանքցի, աբարանցի, մօտակայ պարսիկ զիւղացիք չոր հացը գոտիներում, միջքներին կապաձ՝ լցուում են Աշտարակ՝ օրավարձ բանւորութիւն անելու, զլուխ և ընտանիք պահելու:

Ցղամարգի, կինարմատի, մեծի, փոքրի, ամեն չափահասակի համար զործ կաց իմ սիրելի Աշտարակումը. ծով է, հօ զիւղ չի: Եւ այդ ծովի մշակ լողում են ալիքների կոհակների պէս, նեղ փողոցներումը ծփում են օրն ի բուն աշխատանքի և հացի կարոտ խուռն բաղմութիւնը: Աւ սուց կոչուած փոքրիկ հրապարակը (Աստուած հրապարակ համարի') զլաւոր ժողովանեղին է օրավարձ մշակների. իրարանցում, ճիշ, աղաղակ ականջ են ծակում՝ մարտը սկսելուց մինչև խոր աշունքը Աւուցումը առաւօտները շատ վազ: Զի տեսում կէս ժամ, արեգակի զլուխը փայլելուն պէս՝ Աւուցումը մի մշակ չես գտնում, բոլորը վարձուել են, լոյնորը քաշուել են այդ զիները:

Հին ժամանակը հում նիւթ էր մշակի վարձատրութիւնը, Աշտարակի մեղքածորան պառազները, քաղցրախում զինին և զրգոիչ օղին էին աշխատանքի զինը. այսօր այնպէս չէ, այսօր ամեն ծառացութիւն փողով է վճարուում:

